# ԷՋՄԻԱԾԻՆ



1968

ՌՆԺԷ
ԻԴ ՏԱՐԻ
Մայիս

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1968

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Նոր ավետիս Ծնունդյան . . . . . . . . . . . . . 3

Փրկչի Ծննդյան և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . . . . . . . . . 4

Փրկչի Ծննդյան և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . . . . . . 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սարդարապատ, հայոց նոր, հաղթական Ավարայրը . . . . . 14

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ—Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակը . . . . . 18

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ—Հատվածներ «Նավը լեռան վրա» վեպից . . . . . . . 24

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ—Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական երրորդ համագումարը Պրագայում . . . . . . . . . . 26

ՄԱՂԱՔԻԱ ԵՊՍ. ՕՐՄԱՆՅԱՆ—Հին էջեր «Արարատ»-ից . . . . . . . 35

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . . . . . . . . . 37

Սուրբ պատարագ՝ մատուցված մեծ եղեռնի նահատակների հիշատակին Մայր տաճարում 38

ՀԱՅԿԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Շատախի հերոսական անցյալից . . . . . . 39

Ա. ՀԱՅԿՅԱՆ—Համառոտ ակնարկ Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատմության վրա . . 50

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Ձեռագրագիտական սրբագրություններ . . . . . 59

*Հանձնված է արտադրության 5/IV 1968 թ., Ստորագրված է տպագրության 20/VI 1968 թ.*
*Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 327*

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**
**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**
**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

**Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.**

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՆՈՐ ԱՎԵՏԻՍ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Հայոց սրտերը բոլոր, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ցնծությամբ կողջունեն հիսնամյակը Սարդարապատի հաղթության։

1915-ին՝ Եղեռն, 1918-ին՝ Սարդարապատ։

Մահ և վերածնունդ, ահեղ, բայց վսեմ ճակատագիրը մեր ազգին։

Հիասով փայլատակող տիեզերական խորհուրդը մահվան և հարության, անգամ մը ևս ճառագայթեց մեր ժողովրդի կյանքի փորձառության մեջ։

Նոր Ավարայրի հայ քաջերը մահվամբ մահը հաղթեցին և կյանք պարգևեցին հայ ժողովրդին։

Գերեզման իջած հայ ժողովուրդը Սարդարապատով նոր կյանքի կոչվեցավ՝ իր քաջ որդվոց սուրբ արյունով։ Փրկվեցավ մեր փոքր ածուն ամբողջական բնաջնջումե։ Սկիզբ առավ նոր պատմությունը հայուն։

Սարդարապատի հաղթության վեմին վրա բարձրացավ և կշարունակե բարձրանալ մայր Հայաստանը ամենայն հայոց՝ հպարտ ու կենսալի։

Պատմական դեպքեր, ինչպիսիք են Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերը, ճակատագրական ու փրկարար եղած են ոչ միայն իրենց ժամանակաշրջանին համար, այլ դարձած են նաև առաջնորդող ոգի և մղիչ ուժ ամեն անգամ, երբ հայրենիքը գտնված է վտանգի առջև։

Ավարայր և Սարդարապատ կխորհրդանշեն հայ ժողովրդի պայքարը իր գոյատևման, իր հայրենիքին ու իր ազատության համար։ Այս իմաստով Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերը նույն մարտն են, որ տևապես մղված է ու կմղվի հանուն ազգին ու հայրենիքին։

Հարգանք և օրհնություն Սարդարապատի քաջերուն, նոր Վարդաններուն և Ղևոնդ Երեցներուն։

Հարգանք և օրհնություն հայ ժողովրդին։

Հարգանք և օրհնություն վերածնած մայր Հայաստանին։

Վազգեն Ա.

28 մայիսի 1968
Ս. Էջմիածին

ՎԱԶԳԵՆ Ա. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՐՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ձերդ Սրբություն,

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա Պետրոս, Ա 3):

Մեր սիրտը լի ուրախության և գոհության զգացումներով, հղում ենք Ձերդ Սրբությանը մեր եղբայրական ողջույնները ու լավագույն բարեմաղթությունները մեր մեծ Աստծու և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հարության տոնի առթիվ:

Այդ օրը բոլոր մարդիկ և առանձնապես նրանք, ովքեր մկրտված են Քրիստոսի մահվան և հարության խորհրդով, իրավամբ վերառաքում են իրենց ջերմեռանդ գոհությունները դեպի լույս Հայրը, որը Քրիստոսի մեջ և Քրիստոսով հաշտեցրեց բոլոր մարդկանց իր հետ և մեզ վերահաստատեց խաղաղության մեջ՝ նրա խաչի արյունով: Քրիստոսի մահվամբ և հարությամբ մենք մուտք ունենք մեր Հոր մոտ և այսպիսով դասակից ենք դառնում սրբերին և բնակիչները Աստուծո տան, մենք, որ կառուցված ենք մարգարեների և առաքյալների հիմքի վրա, այն հիմքի, որի անկյունաքարը հենց ինքը Քրիստոսն է: Հաշտեցնելով մեզ Աստուծո հետ, հարուցյալ Քրիստոսը մեզ նույնպես հաշտեցրեց միմյանց հետ: Նրա անձի մեջ դառնալով Աստուծո որդիներ, ճշմարտապես եղբայրներ ենք դառնում միմյանց հետ:

Մեր Տիրոջ մահվան և հարության ամենամյա այս տոնակատարությունը մեր հույսի մեծագույն աղբյուրը չէ՞ միթե, այն աշխարհի նկատմամբ ունեցած մեր հույսի, որն այնքան կարիք ունի նրան, մեր իսկ անձի նկատմամբ ունեցած մեր հույսի, որը մղում է մեզ վերանորոգվել մեր դատողության ոգեկան կերպարանափոխությամբ և դառնալ նոր մարդ, որը ստեղծված է ըստ Աստուծո՝ արդարության և ճշմարտության սրբության մեջ: Այդ հույսը մեր ուժն է: Նա մեզ զորացնում է՝ նրան և նրա եկեղեցուն ծառայելու մեր ջանքերի մեջ: Նա գրավականն է նմանապես մեր հաղթանակի այն ուժերի վրա, որոնք ձգտում են մեզ թուլացնել և բաժանել, նսեմացնել եկեղեցու փայլը աշխարհի առաջ և այսպիսով հապաղեցնել Աստուծո թագավորության անը:

Սուրբ Զատկի տոնակատարությունը թող Ձերդ Սրբությանը, ձեր ողջ միաբանությանը և ձեր եկեղեցու հավատացյալներին բերի Տիրոջ ուրախության լիությունը: Թող նա, որ մեր հույսն է, այնպես անի, որ մենք նրա անձի մեջ ավելի սերտորեն եղբայրանանք միմյանց հետ այն պահին, երբ մենք փոխանակում ենք Ձերդ Սրբության հետ խաղաղության համբույրը և երբ վերստին արտահայտում ենք Ձեզ մեր եղբայրական սերը:

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

ՎԱՏԻԿԱՆ

* Տե՛ս նախորդ համարի 5-րդ էջը:

* *
*

Ձերդ Սրբություն,

Լուսավորված մեր Տիրոջ սուրբ հարության ամենապայծառ լույսով և մեր սրտերում և շրթներին ունենալով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» քաղցրալուր ողջույնը, այժմ, երբ նորից է եկել այս մեծ և սուրբ տոնը, ողջունում ենք Ձերդ Սրբությանը, նախ, որպեսզի Ձեզ հայտնենք մեր ընդհանուր ուրախությունը Հարության առթիվ, և երկրորդ՝ որպեսզի մենք իմանանք այն ճշմարտությունը, որ Քրիստոսի աշակերտներն ենք՝ միացած սիրով և հույսով:

Հղելով այս նամակը Ձերդ Սրբությանը և հայտնելով մեր սրտագին շնորհավորանքները Ձեզ,—որովհետև «Քրիստոս հարություն է առել մեռելներից և դարձել ննջեցյալների երախայրին»,—աղոթում ենք, որ մեր Տիրոջ սուրբ հարության սփոփարար լույսը միշտ լինի Ձերդ Սրբության, ձեր եկեղեցու և նրա հավատացյալ ժողովրդի հետ:

Եղբայրական սիրով և մասնավոր հարգանքներով, Ձեր սիրալիր եղբայրը

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ
Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

* *
*

Ձերդ Սրբություն,

Ողջունում եմ Ձեզ Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ և այդ կապակցությամբ խնդրում եմ ընդունել իմ եղբայրական համբույրը և ուրախությունը:

Թող հարուցյալ Փրկիչը մեր Հիսուս Քրիստոս օգնի մեզ ուրախանալու իր հարությամբ և մեր սրտերով ընդունելու իր ավետարանական պատգամը, որպեսզի մեր կյանքը անցնի խաղաղության, փոխադարձ սիրո և բարեպաշտության մեջ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հայցելով Ձերդ Սրբության աղոթքները, մնամ Ձեր նվիրված եղբայրը ի Քրիստոս:

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

* *
*

Ձերդ Սրբություն, շատ սիրելի Եղբայր,

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց...

Օրհնեա՜լ է յարութիւնն Քրիստոսի...»:

Անձնապես մեր և Անտիոքի ու համայն Արևելքի առաքելական մեր եկեղեցու եպիսկոպոսական դասի և հավատացյալների անունից ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձեզ զատկական Ձեր եղբայրական ուղերձի առթիվ և փոխադարձաբար մենք նույնպես արտահայտում ենք մեր ջերմ բարեմաղթությունները Ձերդ Սրբությանը, ինչպես նաև ձեր եկեղեցու և նրա եպիսկոպոսական դասի ու հոտի բարօրության և երջանկության համար՝ խնդրելով հարուցյալ Փրկչին, որ հաջողություն շնորհի Ձեր գովարժան գործոց և մեզ բոլորիս առաջնորդի սիրո, արդարության և խաղաղության ճանապարհի մեջ՝ ի բարօրություն աշխարհի բոլոր ժողովուրդների:

Խնդրելով Ձեզ հիշել ինձ Ձեր աղոթքներում՝ անկեղծ ողջագուրանքով մնում եմ Ձեր եղբայրը ի Քրիստոս:

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ.
Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

* * *

Որքան ուրախ եմ զատկական տոնի առթիվ Ձերդ Սրբությանը հղելով իմ լավագույն մաղթանքները ծիսական և ավանդական «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» խոսքերով։ Սիրով եմ հղում նաև մաղթանքները Ձերդ Սրբությանը, հոգևորականությանը ու ձեր բարեխնամությանը վստահված հավատացյալներին։

Առավել քան երբևիցե մեր սրտերը լի են վշտով Մերձավոր Արևելքի մեր ժողովրդի դրության և այն իրողության պատճառով, որ վերջին ժամանակների պատմության մեջ առաջին անգամ լինելով քրիստոնյաներին չի թույլատրվում այցելել Երուսաղեմի սուրբ շիրիմը։ Խնդրում ենք աղոթել մեզ և նրանց բոլորի համար։

Մենք տակավին հույս ունենք, որ հարուցյալ Աստվածը խաղաղություն կտա աշխարհին և հատկապես՝ իր սուրբ երկրին։

Խնդրում եմ Տիրոջը, որ Ձերդ Սրբությանը առատորեն բաշխի իր հարության ուրախությունը և օրհնի Ձեզ և ձեր հոգևորականներին ու հավատացյալ ժողովրդին։

Եղբայրական սիրով և ողջույններով Ձեր անձնվեր եղբայրը ի Քրիստոս՝

ՄԱՔՍԻՄՈՍ Ե

**Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի**

ԴԱՄԱՍԿՈՍ

* * *

Շնորհակալ ենք Ձեր զատկական ուղերձի համար։ Ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեռելներից հարություն առավ և հարություն տվեց մեզ, որ մեր մեղքերի մեջ մեռած էինք և մահվան տիրապետության տակ էինք գտնըվում։

Իր հարության այս փառավոր օրը մեծ ուրախության օր դարձրեց համայն մարդկության համար, քանի որ այն հաղթանակի, իսկական ազատության և այլ երկնային օրհնությունների օրն է։ Ուստի այս հրաշալի օր մենք մեծապես ցնծում ենք, սրտագին ողջունում Ձեր հղած ուղերձը և Ձերդ Սրբության հետ փոխանակում անկեղծ ողջույններ այս ուրախ առիթով։ Թող հարուցյալ Տերը պահի Ձեզ և իր մեծագույն օրվա օրհնությունները տեղա Ձեր և ձեր հավատացյալ ժողովրդի վրա։ Թող իր շնորհը Ձեզ հետ լինի։

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

**Սիրիայի օրթոդոքս եկեղեցու**
**և համայն Արևելքի Պատրիարք**

ԳԱՄԱՍԿՈՍ

* * *

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Այս բառերը հնչեցին ամբողջ աշխարհով մեկ և կհնչեն հավերժ։

Եկեղեցու զատկական պայծառ հաղթանակը բարոյական վերածննդի անսպառ աղբյուր է։ Եվ ինչպես ամեն մի աղբյուր հագեցնում է միայն ծարավ զգացողի և այդ աղբյուրի կենդանացնող ջուր որոնողի ծարավը, այնպես էլ եկեղեցին իր բարոյական վերածննդի աղբյուրներով իր բարերար ներգործությունն է անում միայն նրանց վրա, ովքեր իրենց շրթները մոտեցնում են այդ աղբյուրին։

Աղոթենք, որ հարուցյալ Տերը շարունակի ներշնչել մեզ և պաշտպանել մեր բոլոր ջանքերը, որոնք կատարվում են իր անվան փառքի համար։

Թող Տերը պահի-պահպանի մեզ գալիք բոլոր օրերում։

ԵՓՐԵՄ Բ

**Կաթողիկոս-Պատրիարք համայն Վրաստանի**

ԹԲԻԼԻՍԻ

* * *

Ձերդ Սրբություն,
Շատ սիրելի Եղբայր մեր ի Քրիստոս,

Լույսով առլեցուն հոգով Ձերդ Սրբությանն ենք հղում քրիստոնեական հազարամյա ողջույնը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Համկանում ենք, որ սրբազան ոգեկոչումը և վսեմագույն վերապրումը աստվածային այն գործերի, որոնց միջոցով կատարվեց մարդկության փրկությունը, մեզ՝ քրիստոնյա եկեղեցիների պետերիս, մղի ավելի խորը մտածել ու այն պատճառների մասին, որոնք արգելակում են, որ քրիստոնյա աշխարհը,—դեռևս չխոսելով համայն մարդկության մասին,—վայելի այն բոլոր բարիքները, որոնք տրամադրված են Աստուծո մեծ սիրով և խաչի վրա իր զոհաբերությամբ կնքված նրա Որդու վսեմ ուսմունքի քարոզչությամբ։

Մենք՝ քրիստոնյա եկեղեցու պետերս, գտնում ենք, որ սուրբ պարտականություն ունենք ամեն կերպ աշխատել, որ բազմապատկենք սերը մեր նմանի նկատմամբ, որպեսզի վերջ գտնեն աշխարհի տարբեր մասերում նյութական պակասությունները և քարոզական ստորացուցիչ տառապանքները։

Մեր ամբողջ ուժով պետք է նպաստենք այն բանին, որ աշխարհը դրվի սիրո և ճշմարտության, բարի հասկացողության և խաղաղության հիմքերի վրա։

Վերջապես մաղթում ենք Ձերդ Սրբությանը տոնել սույն Զատիկը լիակատար առողջությամբ, հոգևոր խնդությամբ և աստվածային լույսով ձեր սուրբ եկեղեցու եպիսկոպոսների, քահանաների և հավատացյալների հետ միասին՝ լցված մեր Տեր Հիսուս Քրիստոսի հարությամբ ընծայված բոլոր բարիքներով և նվերներով։

Սրբազան համբույրներով Ձեզ ողջագուրելով, մնում ենք Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս՝

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

* * *

Աստուծո կամքով մենք նորից զատկական օրվա լույսի և ուրախության մեջ ենք գտնվում։ Եվ նորից եղբայրական անկեղծ ջերմությամբ դիմում ենք Ձերդ Սրբությանը հավերժ ողջույնով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Մեր անունից և մեր սուրբ Սինոդի անունից ողջունում ենք Ձերդ Սրբությանը, ջերմագին աղոթում ենք, որ Աստուծո սուրբ Զատիկը հոգեկան ուրախությունների անսպառ աղբյուր դառնա Ձեր արդյունավետ ծառայության մեջ՝ ի փրկություն հավատացյալների և ի փառս Աստուծո եկեղեցու։

Հայցելով Ձեր աղոթքները, մնամ Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս։

ԿԻՐԻԼ
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

* * *

Թանկագին եղբայր ի Քրիստոս,

Սիրով ու անկեղծ հարգանքով շնորհավորում ենք Ձեզ Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ՝ հղելով Ձեզ և մեր քույր հայ եկեղեցու հոգևորականներին զատկական շնորհավորանքը՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց։

Թող ամենակարողն Աստված օգնի աշխարհի համայն մարդկությանը և պարգևի նրանց ամենայն ուրախություն՝ իրենց աստվածանվեր ծառայության մեջ:

Եղբայրական սիրո ողջույնիվ՝

ՀԵՐՄԱՆ
Պատրիարք համայն Սերբիայի

ԲԵԼԳՐԱԴ

• •
•

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սրտանց ողջունում եմ Ձեզ Քրիստոսի հարության լուսապայծառ տոնի առթիվ: «Քրիստոս յարեաւ»՝ քրիստոնեական այս հնագույն ողջույնը սիրով է լցնում մեր սրտերը:

«Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Յովհ. ԺԴ 27)՝ այս խոսքերով հայտնվեց իր աշակերտներին հարուցյալ Փրկիչը:

Թող Քրիստոսի խոր և անկապտելի խաղաղությունը թագավորի ամբողջ աշխարհում:

Թող Քրիստոսի հարության կենարար ուժը ամրապնդի Ձերդ Սրբության ուժերը՝ ի փառս Աստուծո և ի բարօրություն ժողովրդի:

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Եղբայրական սիրով և նվիրվածությամբ ի Քրիստոս՝

ՍՏԵՖԱՆ
Միտրոպոլիտ Վարշավայի և համայն Լեհաստանի

ՎԱՐՇԱՎԱ

• •
•

Սրբազնագույն Վեհափառ,

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քրիստոսի հարությամբ սկսվեց մարդկության կյանքում նոր դարաշրջան՝ Աստուծո Նոր Կտակարանի ժամանակաշրջանը մարդկանց համար: Հավատավ բարեպաշտության թագավորությունը՝ փրկություն ստանալու հնարավորությամբ լի: Սուրբ Ավետարանի ճառագայթներով մարդու սիրտը սկսեց ընդունել Աստուծո բարեգործության նոր ուժեր, որոնք ուղղություն են տալիս նրան ի կատարումն պատվիրանաց:

Ոգեշնչված մեր ընդհանուր ուրախությամբ, սրտանց շնորհավորում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, և ձեր սուրբ եկեղեցու հոգևոր եղբայրներին՝ ցանկանալով քաջառողջություն, հոգեկան անդորրություն և երկար կյանք:

Քրիստոսի հարության ուրախությունը թող միշտ միացնի մեզ եղբայրական սիրով, որպեսզի մենք մեր անսասան ուղղափառ հավատքով և գործերով կարողանանք վկայել ամբողջ աշխարհին Աստուծո կամքը՝ խաղաղության ամրապնդումը, ժողովուրդների համակեցությունը և բոլոր քրիստոնյաների մերձեցումը՝ հանուն կենարար Քրիստոսի ընդհանուր հաղթանակի:

Ջերմագին ողջագուրվելով համբուրում ենք Ձերդ Սրբությանը՝ սուրբ աղոթքներ հայցելով մեզ և մեր եկեղեցու համար:

Ծառա և եղբայր ի Քրիստոս՝

ԴՈՐՈԹԵՅ
Միտրոպոլիտ Պրագայի և համայն Չեխոսլովակիայի

ՊՐԱԳԱ

*
* *

Երկինք և երկիր ուրախության մեջ են, հրեշտակներ և մարդիկ ողջու-նում են միմյանց.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Երկնքի և երկրի Արարիչը՝ մեր փրկության համար մարդացած և խաչ-ված Փրկիչը, երրորդ օրը հարություն առնելով, սկիզբ դրեց բոլոր մարդկանց հարության:

Ուրախությամբ և տոնականորեն տրամադրված մտածումներով ողջու-նում ենք Ձերդ սիրեցյալ Սրբությունը:

Ամբողջ սրտով աղոթում ենք Ձեր քաջառողջության համար, որպեսզի բարձրյալն Աստված հոգեպես և մարմնապես զորացնի Ձեզ՝ Հայաստանյայց ս. եկեղեցու առաքելության և պայծառության նվիրված Ձեր աստվածահաճո աշխատանքներում:

Մնամ միշտ Ձերդ Սրբութեան եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ
Արքեպիսկոպոս Կիպրոսի

ՆԻԿՈՍԻԱ

* *
*

Շնորհակալություն հայտնելով Ձեր զատկական ուղերձի առթիվ, խնդ-րում եմ Ձերդ Սրբությանը ընդունել իմ եղբայրական ջերմ մաղթանքները, Աղոթում եմ հավերժ կենդանի Քրիստոսին, որ խաղաղություն շնորհի եկեղե-ցուն, բարգավաճում՝ մարդկային ցեղին, և պահպանություն՝ մեր սիրեցյալ ժողովրդին:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

* *
*

Թող զատկական ուրախությունն ու լույսը մարդկանց սրտերից հեռու վա-նեն տխրությունն ու խավարը:

ԲԼԵՅԿ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

ԺՆԵՎ

*
* *

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառավոր հարության տոնի առթիվ սիրով ողջունում ենք Ձերդ Սրբությանը եպիսկոպոսական եկեղեցու անունից:

Բոլոր քրիստոնյաները հարություն առան Քրիստոսի հետ: Այս ծանր օրերին մեր կարևորագույն պարտականություններից մեկն է հայտարարել երկրի վրա թագավորության միասնությունը հոգու զորության միջոցով:

Այս տոնի առթիվ խնդրում ենք Ձերդ Սրբությանը մեզ հետ աղոթել, որ մեր Հայրը, սուրբ Հոգու զորության միջոցով, միավորի ամբողջ մարդկությա-նը իր Որդու թագավորության մեջ, մեկ հավատքի և մեկ եկեղեցու մեջ:

Ամենայն լավագույն մաղթանքներով աղոթում ենք Ձերդ Սրբության քա-ջառողջության, արդյունավետ աշխատանքի և ձեր մեծ եկեղեցու ժողովրդի համար:

Ձեր սիրելի եղբայրները ի Քրիստոս՝

ՋՈՆ ԷԼԲՐԻՋ ՀԱՅՆԶ
Գերագահ եպիսկոպոս
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԻՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ
Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

* *
*

Սրտագինս շնորհակալում եմ Ձերդ Սրբությանը՝ սուրբ Զատկի տոնի առթիվ: Ցանկանում եմ քաջառողջություն, երկար կյանք:
Քրիստոս հարյավ ի մեռելոց:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լյութերական եկեղեցու արքեպիսկոպոս

ՌԻԳԱ

* *
*

Ձերդ Սրբություն,
«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի, Ալելուիա».
Հաճույքով ստացանք սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի Ֆրանցիսկյան միաբանությանն ուղղված Ձեր գատկական շնորհավորանքները:
Եվ մինչ մենք նախապատրաստվում ենք տոնելու Քրիստոսի հրաշափառ հարությունը այն նվիրական մատուռում, որն իր մեջ ամփոփում է մեր Տիրոջ գերեզմանը, որտեղից նա դուրս եկավ Զատկի օրը որպես մահվան հաղթանակիչ, մեր եղբայրական աղոթքների մեջ մենք չենք մոռանա Էջմիածնի եկեղեցու Գերագույն Հովվին, ողջ միաբանությանը և Ձեր հոգևոր խնամքին վստահված ամբողջ քրիստոնյա ժողովրդին:
Ձերդ Սրբության անձի քաջառողջության և գործոց հաջողության ամենաանկեղծ մաղթանքներով՝ մնում եմ Ձեր եղբայրը ի Քրիստոս:

ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԻԵԼԼԻ
Կուստոդ Ֆրանցիսկյան միաբանության

ԵՐՈՒՍԱՂԵՄ

* *
*

Ձերդ Սրբություն,
Խորապես զգացված իմ համեստ անձին ուղղված Ձերդ Սրբության այնքան սիրալիր բարեմաղթություններից, ինչպես նաև Արարատի հիասքանչ պատկերից, որը միշտ իմ աշխատանքի սեղանի վրա է, գալիս եմ, զատկական ուրախությամբ, արտահայտելու Ձերդ Սրբության նկատմամբ իմ ամենաանկեղծ և հարգալից զգացումները:
Այս ամառ պատմական ուսումնասիրությունների նպատակով մտադրվել եմ որոշ ժամանակ անցկացնել Հայաստանում: Ձերդ Սրբությանն արդյոք հաճելի՞ է այս ծրագիրը:
Կանխահայտ շնորհակալությամբ խոնարհվում եմ ստանալու համար Ձեր օրհնությունը և խնդրում եմ ընդունել դեպի Տերը իմ ունեցած կրոնական հարգանքի հավաստիքը:

ՇԱՌԼ ՌԱՅՈՒՊ
Եպիսկոպոս Մոնակոյի

ՄՈՆԱԿՈ

* *
*

Վեհափառ Տեր,
Քրիստոսի հրաշափառ Հարության սուրբ լույսով առլեցուն, Մխիթար աբբահոր որդիներս կու գանք ջերմորեն ողջունելու Ձերդ Վեհափառությանը և ներկայացնելու մեր անկեղծ շնորհավորությունները:

Փրկչին շնորհաբաշխ լույսեն թող ճառագայթեն խաղաղության, արդարության և սիրո նշույլները՝ տառապակոծ մարդկության վրա, ու պայծառանա մանավանդ հայ շինարար ժողովուրդը, Արարատի ստորոտեն մինչև ի սփյուռս աշխարհի:

Հավատքի ջահը մշտարծարծ թող մնա հայ հոգիներուն մեջ, իբր երաշխիք հավերժական հաղթանակի և անմահության:

Աղոթող ենք, որ Հարության լույսը պայծառակերպե նաև Ձերդ Վեհափառության կյանքն ու գործունեությունը ընդ երկայն ավուրս ի շնորհե սուրբ Էջմիածնի ուխտից արդյունաշատ հոգևոր բեղմնավորում:

Ամենախորին մեծարանքով՝

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՏԻԿՅԱՆ
**Ընդհ. աբբահայր Մխիթարյան միաբանության**

ՎԵՆԵՏԻԿ

* *
*

Օրհնյալ է հարությունն Քրիստոսի.

Ձեր Վեհափառության հարութենական գիրն ողջույնի՝ Քրիստոս հարյավ ի մեռելոց, խորապես կարձագանքե հոգիես ներս: Ջերմ զգացումներով կփութամ պատասխանել. Օրհնյալ է հարությունն Քրիստոսի:

Ջերմագին կմասնակցիմ Ձեր Վեհափառության աղոթքներուն, որ մեր Փրկչին՝ Հիսուսի լուսափայլ հարության ճառագայթները հալեցնեն և հեռացնեն եղբայրական սիրո և միության բոլոր արգելքները ազգերու միջև:

Կենսանորոգ լույսը Քրիստոսի հարության շողշողա մարդկության վերև, իբր առաջնորդ աստղը դեպի խաղաղություն և համերաշխություն:

Այս ս. հարության նվիրական զգացումներուն կմիանան աղոթքի սրտագին իղձերս, որ հարուցյալ Փրկիչը Ձեր Վեհափառության արդյունավետ կյանքը երկար և շատ երկար պահե քաջառողջ, ի պայծառություն և հօգուտ մեր սիրելի ազգին և թանկագին հայրենիքին:

Ամենախոր եղբայրական սիրո փոխադարձ զգացումներով, մնամ ի Քրիստոս աղոթակից՝

ՄԵՍՐՈՊ ՀԱԲՈԶՅԱՆ
**Արքեպ. և Ընդհ. աբբահայր**
**Մխիթարյան միաբանության**

ՎԻԵՆՆԱ



# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Վեհափառ և սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Աշխարհի Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի հրաշափառ Հարության ս. տոնին առթիվ կփութանք Ձերդ Սրբության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորությունները ու լավագույն մաղթանքները:

Մեր սրտի խորքերեն ջերմեռանդ կաղոթենք, որ ամենաբարին Աստված անփորձ և անխռով պահե ու պահպանե Հայց. ս. Եկեղեցին, Նվիրապետական ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության յուրո, և Ձեզի պարգևե մշտատև առողջություն և երջանկալից երկար կյանք:

«Ձեզ և մեզ մեծ աւետիք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:
Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ,

աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
**Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո**

ԱՆԹԻԼԻԱՍ

* * *

Մեր Տիրոջ սուրբ Հարության տոնի ուրախ առիթով Ձերդ Վեհափառությանն եմ ներկայացնում, ի դիմաց մեր միաբանության և ժողովրդի, մեր սրտագին շնորհավորությունները՝ մաղթելով Ձերդ Սրբությանը տևական առողջություն, երջանկություն և ձեր սուրբ Աթոռին՝ պայծառություն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
**Պատրիարք Հայոց Երուսաղեմի**

ԵՐՈՒՍԱՂԵՄ

---

* Տե՛ս նախորդ համարի 7-րդ էջը:

* *
*

Վեհափառ Տեր,

Քրիստոս հարյավ ի մեռելոց.

Մահվան վրա տարված հաղթանակի երգը կրկին մեր հոգիները կլեցնե հրճվանքով:

Մահվամբ զմահ կոխյաց.

Անմահը, որ մահկանացուի կերպարանք զգեցած էր, իր զգալի մահովը հաստատեց, թե մահը երևույթ մըն էր միայն:

Հարությամբն յուրով մեզ զկյանս պարգևյաց.

Հավերժության իրավունքը կյանքին է: Ու այդ իրավունքին գիտակցությունը և փաստը տրված է համայն մարդկության՝ Հիսուսի հարությամբ, ուրեմն՝

Փառք Քրիստոսի ամենազոր հարության:

Երջանկաբեր այս առիթով ես և մեր հոգևորական դասը, պաշտոնական մարմինները և հավատացյալ հոտը կուզանք շնորհավորել Ս. Օծությունդ՝ մաղթելով վերակենդանացումը մեր ակնկալությանց և հույսերուն, հաղթանակ բոլոր արդար դատերուն և վերածաղկում մեր եկեղեցիին:

Կմաղթենք միաժամանակ Վեհիդ թանկագին կենաց արևին մշտական շողարձակում և Իր հայրական սիրո ճառագայթում՝ Իր զավակներու սրտերուն մեջ:

Մատչելով ի համբույր Օծելույդ ս. աջին՝

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք Հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈԼ



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, ՀԱՅՈՑ ՆՈՐ, ՀԱՂԹԱԿԱՆ ԱՎԱՐԱՅՐԸ

Հայ ժողովրդի պատմության նոր շրջանն առավել աղետաբեր եղավ. Սենց պարսիկն ու խարդախ բյուզանդացուն փոխարինեցին իսլամական մոլեռանդապաշտությունն ու յաթաղանը:

Դարեր շարունակ օսմանյան կայսրության փաթթոցավոր կրոնապետներն ու յաթաղանակիր աշխարհիկ իշխանավորները, հավատարիմ իրենց հռչակած «մեկ ազգ, մեկ կրոն» սկզբունքին, անհամար աղետներ, կոտորած ու եղեռն բերեցին մեր ժողովրդին:

Դարեր շարունակ հայազգի մանկահասակ որդիներից պատրաստեցին մոլեռանդ ենիչերիներ, որոնք սրակոտոր էին անում թուրքիայի քրիստոնյա փոքրամասնություններին:

Դարեր շարունակ առավել մոլեռանդ թուրք բարբարոսներ լեզուն կտրելով պատժեցին հայախոս հայորդիներին, որոնք, ի զարմանս պատմության ու գիտության, հարյուր հազարներով թրքախոս դարձան՝ խորթ, պարտադրված լեզվով արտահայտելով իրենց բողոքն ու զայրույթը աշխարհի, մարդու, Աստուծո դեմ... Սակայն բարբարոսները այս բոլորից չգոհացան. Սուլթան Համիդը հայի արյունով հեղեղեց իր արյունոտ կայսրությունը և մարդասպանության կատարելագործված ձևերը ժառանգեց իր ծագուկներին՝ իթթիհադականներին...

1915 թ., եղեռն... այս թիվն ու այս բառը այսօր էլ սարսուռ են պատճառում ամեն հայի, երկրագնդի ամեն ազնիվ մարդու: Իթթիհադ ցեղասպաններն ծրագրել էին ու հետևողական կերպով կիրառեցին քաղաքակիրթ մի ամբողջ ժողովրդի մահ, սպանդ... Աշխարհը խառնվել էր իրար, պետք էր առիթը չփախցնել՝ իրագործելու դարերի ընթացքում հասունացած դավերի դավը՝ կոտորել մի ամբողջ ժողովուրդ: Թուրք տիրակալներն ատում էին հայերին, քանի որ վերջիններս ձեռներեց, գործունյա, պատվի ու փառքի տիրացած, բարձր քաղաքակրթության տեր ժողովրդի զավակներ էին: Այս բոլորին գումարվում էր նաև իսլամի քրիստոնեատյաց մոլեռանդությունը:

Ջնջել Հայաստանը քարտեզի երեսից, բնաջնջել հայ ցեղը,—այս դարձավ օրվա կարգախոսը: Եվ այս բոլորը քաղաքակիրթ ժողովուրդների աչքերի առաջ, ավելին՝ կայզերական Գերմանիայի ծրագրով ու խորհուրդներով: Իր պատմական հողերից Արաբիայի տոթակեզ անապատները արտաքսվեց աշխատասեր մի ժողովուրդ, ամոթխած աղջիկներ ու հարսներ ամոթալի կյանքով ապրելու փոխարեն նախամեծար համարեցին հավերժորեն փարվել հայոց հորդահոս գետերին... Միայն գիտության ու գրականության մի քանի մեծություններ՝ Անատոլ Ֆրանս, Մարկվարտ, Բրյուսով, Մեյե և ուրիշներ բողոքի ձայն բարձրացրին, որ դժբախտաբար մնաց որպես «ձայն բարբառոյ յանապատի»:

Բնականորեն կերպով «հիվանդ երկրի» այլությունոտ տիրակալները մասնակցեցին Առաջին աշխարհամարտին՝ աշխարհի վերաբաժանման ժամանակ «շտկել» ցանկանալով իրենց կայսրության սահմանները: Սա-

կայն արկածախնդրության հետևանքով նախկին թուրքական կայսրությունն էլ բաժան-բաժան եղավ: Ո՞ւմ հաշվին պետք էր փոքրիշատե ընդարձակվել: Այս անգամ յաթաղանը հայացքը հառեց Արևելյան Հայաստանին: Թուրքիան, օգտվելով երիտասարդ սովետական իշխանության մղած ներքին քաղաքացիական կռիվներից, սկսեց բռնագրավել Արևելահայաստանը: Ալյանդական Շիրակի հողերը պղծվեցին թուրք ասկյարի ու ռոմանդարի ատոտ մուճակներով: Սակայն յաթաղանը չէր հագենում: 1918 թ. մայիսի 21-ին տասը հազարանոց թուրքական բանակը Շևքի փաշայի գլխավորությամբ մտնում է Արարատյան դաշտը՝ հայոց հնօրյա ոստանը: Ամենուրեք ավար, ավեր, արյուն: Թուրքական բանակների առաջխաղացումը Հայաստանում առաջին հերթին նպատակ ուներ բնաջնջել ու հայ ժողովրդի արևելյան հատվածը ևս: Եվ իրոք, Շիրակի խոր-խոր ձորերը հայոց արյան հորդահոս հեղեղներով լցվեցին... Սակայն սև բանակը գալիս էր. ավեր, ավար, արյուն...

Արարատյան դաշտավայրում ապաստան էր գտել թուրքական յաթաղանից հրաշքով վերապրած հայությունը. հայը սեղմվել էր իր հնօրյա ոստանում: Սեղմված մատները բռունցք կազմեցին, մի զորավոր բռունցք, որ լեռնացած ատելությամբ ու վրեժխնդրությամբ հարվածեց թուրք ասկյարին ու ջարդեց նրան: 1918 թ. մայիսի 22—26-ը Արարատյան դաշտավայրում գտնվող կանոնավոր զորքի հայկական ստորաբաժանումները և մանավանդ աշխարհազորայինները Սարդարաբադում երկրորդեցին Ավարայրը, նոր, հաղթական Ավարայրը: Սարդարաբադում թուրք զորքը թողեց 3500 դիակներ և լեղապատառ փախավ: Խուժանը նահանջեց: Մինչ այդ Հայաստան աշխարհ զորքի շքերթով մտնող սև բանակը անփառունակ պարտություն կրեց, հայ մարդը սթափվեց, լցվեց իր պատմության սխրագործ կտրիճների ոգով, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Գարեգին և Զավեն եպիսկոպոսները խաչը ձեռքներին օրհնում են հայոց զորքը՝ երկնային ոգեկոչումներով լցնելով արիասիրտ հայորդիներին: Հայ քաջերը հաղթեցին, հաղթեց հայի ազատասեր ոգին, հայ ապրելու ձգտումն ու վճռականությունը: «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»,—մեզ պատգամել է Եղիշեն: Մեր ժողովուրդն արյամբ ապացուցեց, որ ինքը միանգամայն արժանի է իր փառապանծ նախնիների արժանի հետևորդները կոչվելու:

Պատմությունը դեպքերի ու իրադարձությունների սոսկ թվաբանական գումար չէ, օրեր կան, երբ հասարակայնորեն ազգը դարով է հասունանում: Սարդարաբադում՝ նորոգ կյանքով ապրելու, գաղափարով ու ոգով թարմանալու միտք ծառացեց հայ մարդու մեջ, ինչ որ ամփոփ ու խորիմաստ ձևակերպված է Վեհափառ Հայրապետի խոսքի հետևյալ մտքի մեջ. «Սարդարապատի հաղթության վեմին վրա բարձրացավ և կշարունակե բարձրանալ Մայր Հայաստանը ամենայն հայոց՝ հպարտ ու կենսալի»:

Հայտնի իմաստություն է՝ ազատ ապրել ցանկացող ժողովուրդը պետք է մեռնել իմանա: Այո՛, Սարդարաբադում ընկան նաև հարյուրավոր հայ քաջեր, որոնց անհայտ շիրիմներին անձեռակերտ արձաններ կանգնեցրեց հայոց փառքի հավերժ վկան՝ սպիտակափառ ու ալեհեր Մասիս սարը: Հերոսները չեն մեռնում. Սարդարաբադի հերոսամարտը դեռ դարեր հերոսական ոգևորությունների աղբյուր կհանդիսանա մեր ժողովրդի համար: Այսօր հայ դյուցազների պատվին այնտեղ հոյակերտ հուշարձան է կանգնեցված, սակայն մեծագույն հուշարձանը նրանց արյունով վերընձյուղած մեր հայրենիքն է՝ Սովետական Հայաստանը, որի Հոկտեմբերյան վերանվանյալ ջերմ գրկի մեջ հանգչում են Սարդարաբադի հերոսների ոսկորները:

Սարդարաբադը նոր Ավարայր է, հաղթական Ավարայր, ճանաչենք ու գնահատենք այն, մեծարենք Սարդարաբադում ընկած հայորդիների հիշատակը՝ «Նոր Վարդանների և Ղևոնդ Երեցների», որոնք ամենաթանկը՝ մատաղ կյանքը տվին իրենց ժողովրդի համար,՝ փայփայենք, գուրգուրենք ու հավերժ սիրենք Սարդարաբադի Վահագն Մանուկին՝ Սովետական Հայաստանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

# ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 50-ԱՄՅԱԿԸ

Բաբելոնացիների, ասորեստանցիների, փյունիկեցիների և այլ հնագույն ժողովուրդների հետ պատմության ասպարեզ իջած, սակայն ինքը միայն փյունիկ մնացած հայ ժողովուրդը հիսուն տարի առաջ, 1918 թվականի մայիսի 22—27-ին, Սև ջրից Սարդարաբադ տանող հարթավայրում և Սարդարաբադից Արաքս ու Կարաբուրուն (Կարմրաշեն) տանող տարածքներում փայլուն կերպով բռնեց իր գոյատևության իրավունքի դժվարին քննությունը:

1918 թվականի գարնանը հայ ժողովուրդը կորցրել էր ամեն ինչ, նրա առաջ փակվել էին բոլոր ճանապարհները, և նա պետք էր միայն ու միայն սեփական ուժերով մաքառեր իր ֆիզիկական գոյությունը պահպանելու և իր քաղաքական անկախության համար գոնե մի փոքրիկ հողամաս ապահովելու համար:

Եվ նա կարողացավ Սարդարաբադում կանգնեցնել Երզնկայից մինչև Արարատյան դաշտը անարգել եկած թուրք բանակին, ապա պարտության ու փախուստի մատնել նրան և իր հաղթական առաջընթացով հարկադրել, որ անողոք թշնամին ճանաչեր իր քաղաքական անկախությունը՝ խանձարուրի նմանվող մի փոքրիկ հողի վրա:

Ալեքսանդրապոլի գրավումից հետո (15/V 1918 թ.) թուրքական բանակը Շևքի փաշայի հրամանատարությամբ մայիսի 21-ին մտնում է Արարատյան դաշտը՝ հայ ժողովրդի հնօրյա օրրանը:

Երևանի զորաբաժնի ռազմաճակատը ձգվում էր Վեդուց մինչև Սուրմալու: Երևանի զորաբաժնի հրամանատար, գեներալ Սիլիկովը, որի շտաբը գտնվում էր Էջմիածնում, մայիսի 19-ին Սուրմալուն դատարկելու հրաման է տալիս իր տեղակալ և Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար, գնդապետ Դանիել բեգ Փիրումյանին:

Մայիսի 21-ին թուրքերը Ալեքսանդրապոլի կողմից երևում են Արարատյան դաշտում և առանց կռվի գրավում Սարդարաբադի գյուղն ու կայարանը:

Երկաթգծի ուղղությամբ Երևանի վրա արշավող թուրքական ուժերը թվով շուրջ 5—6 հազար կանոնավոր և շուրջ 3.000 անկանոն զորք, մայիսի 22-ին մոտենում են Ղամշլու կիսակայարանին, նպատակ ունենալով հասնել Կարխուն և մտնել Զանգիբասար: Այսպիսով, երկաթգծից դեռ հարավ գտնվող հայ զորքը և հայկական գյուղերի բնակչությունը դրված էին Երևանից և Էջմիածնից կտրվելու, գերի ընկնելու սպառնալիքի տակ: Խնուսի, Ալաշկերտի և ապա Սուրմալուի վերաբնակիչների հետ միասին, Մարգարայից մինչև Սարդարաբադ, գյուղերում ոչ պակաս քան հարյուր հազար բնակչություն կար, որ սպառնալիքի տակ տեղահան էր եղել և բռնել բոլոր ճանապարհները:

Մայիսի 22-ին երկաթգծից դեռ հարավ էր գտնվում Զեյթունցիների հեծյալ գունդը (300 ձիավոր)՝ Կարակալայի գետանցքի պաշտպանության դիրքերում, և կապիտան Երվանդ Մամաջանյանի Մարգարայի գումարտակը, գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը՝ շուրջ 800 սվին, 5-րդ գնդի երկու գումարտակը՝ շուրջ 500 սվին, կապիտաններ Սակելյարիի և Աթանեսյանի մարտկոցները, տրապիզոնցի Թռուցիկ Հովսեփի, բաշգյառնեցի Մակեդոնի, բուլանըղցի Մուրադի և եզդիների հեծյալ խմբերը՝ շուրջ 700 ձիավոր: Այսպիսով, ավելի քան չորս հազար ընտիր հայ զորք, շա՜տ ընտիր զորք: Բանակի շարքերում, զորամասերի մեջ, մնացել էին անհուսալի իրադրությունը ճիշտ գիտակցող զինվորները և սպաները, որոնք գիտեին, որ միակ փրկությունը անձնազոհ պայքարն է: Այս հիանալի զորքին, սակայն, գերի ընկնելու և կոտորվելու վտանգ էր սպառնում: Իր զինված ուժերին, ինչպես նաև դեռ տեղահան չեղած և տեղահան եղած հայ գյուղաբնակչությանը գերությունից և կոտորածից փրկելու համար խիզախ և

նմուշ գնդապետ Դանիել բեգ Աբիսողոմի Փիրումյանին ուրիշ ոչինչ չէր մնում, քան կովելով պատվավոր մահվան ընտրությունը: Աշխարհազորայինները և Ջհանգիր աղայի եզիդիներն արդեն ինքնագլուխ դեռ լույս 22-ի գիշերը Մոլլաբայազետ գյուղի շրջանում փոխհրաձգության մեջ էին մտել թուրքերի աջ թևում առաջ շարժվող անկանոն զորքերի հետ: Այդ փոխհրաձգությունը հնարավորություն էր ընձեռել մարտական կարգի բերելու հայ գնդերը և դասավորելու իրենց հրետանին: Եվ գնդապետ Դանիել բեգ Փիրումյանը Մոլլաբայազետից մինչև Էվջիլար ձգվող իր զորամասերին հակահարձակման հրաման է տալիս Սարդարաբադից հետո Գեչրլու մտած և դեպի Ղամիշլու հառած թուրքական զորքի վրա:

Մայիսի 22-ի առավոտյան սկսվում է բախտորոշ հակահարձակումը երկաթգծից հարավ ընկած հատվածում:

Ընդհանուր իրարանցման մեջ բոլոր ճանապարհները բռնված էին նահանջողների սայլերով, դատարկվում էին հինավուրց շեն գյուղերը: Ջախջախվում, փախուստի էին մատնվում ու ոչնչացվում թուրքական սեպաձև առաջացած զորամասերը:

Տրասլիզոնցի Թոռոսին Հովսեփի, Բոլյանըցի Մուրադի, Բաշգյառնեցի Մակեդոնի հեծյալ ջոկատները հետախուզություն էին կատարում, գործը հետապնդման հասնելիս առաջինն էին նետվում նահանջող զորքի վրա: Նրանք, զորամասերի այդ յուրատեսակ առաջապահները, թե՛ սեփական նախաձեռնությամբ և թե՛ հրամանատարության առաջադրանքները անձնվիրաբար կատարելով, դարձել էին զորքի պարծանքն ու սիրելիները:

Գաղթի բոլոր ճանապարհներին սայլերը կանգ են առնում, խուճապն ու վհատությունը փոխվում է խանդավառության: Շատերը ետ են դառնում իրենց տները: Իրար ձայն և օրինակ տալով՝ զենք ունեցող տղամարդիկ կազմում են աշխարհազորայինների հոծ խմբեր և անմիջապես համալրում կռվողների շարքերը: Այդ օրը հայ զորքը համարյա կորուստ չտվեց, կուստի մեծ բաժինը վիճակվեց անձնուրաց աշխարհազորայիններին:

Մայիսի 22-ն այդպես անցավ երկաթգծից հարավ ընկած հատվածում: 5-րդ գունդը կանգնած էր երկաթգծից հարավ Ղուրդուղուլի. Էվջիլար, իսկ նրա նորակազմ վաշտը Արաքսից էլ հարավ՝ Դաշբուռուն գյուղերում: Մայիսի 22-ին գնդի՝ հիմնականում Ղարաբաղցիներից կազմված երկու գումարտակը՝ գնդի շտաբի հրամանատարի հետ միասին Ղուրդուղուլուց ետ էր քաշվել և հասել երկաթգծից հյուսիս ընկած Հայի Ջեյվա գյուղը, որի մոտակա Քյորփալու գյուղում էր գտնվում Խորեն Իգիթխանյանի ուժեղացված հրետանային մարտկոցը (10 թնդանոթ):



Դանիել բեգ Աբիսողոմի Փիրումյան.
Ընդհանուր հրամանատար Սարդարաբադի
ճակատամարտի (1880—1922)

Գնդի նորակազմ գումարտակը Դաշբուռունից գետն անցել և գտնվում էր Մարգարա գյուղում՝ երկաթգծից հարավ: Երկաթգծից հարավ էր գտնվում նաև նույն գնդի Էվջիլարի գումարտակը: Այս երկու գումարտակները Դանիել բեգ Փիրումյանի հրամանով արդեն մասնակցում էին կռվին, սակայն երկաթգծից հյուսիս անցած երկու հիմնական գումարտակները և գնդին կից Իգիթխանյանի մարտկոցը դեռ լուռ էին:

Գևորգ Ե կաթողիկոսի ուղարկած ներկայացուցիչներ Գարեգին եպ. Հովսեփյանը և Զավեն եպ. Մահտեսի-Բաբայանը կանգնեցնում են 5-րդ գնդի՝ երկաթգծից հյուսիս անցած վաշտերը, օրհնում զինվորներին և գնդի հրամանատար Պավել Փիրումյանի կոչքին խաչը բարձր պահած կենաց և մահու կռվի առաջնորդում նրանց:

Կապիտան Խորեն Իգիթխանյանի մարտ-

կոցը ցերեկվա ժամը 12-ին իր տասը թնդանոթների կրակն ուղղում է Վերին ու Ներքին Կուլիբեկլու գյուղերը մտած և Ղամիշլու կի-



Խրիմյան Հայրիկ
(Սույն նկարը «Հայրիկը» ստորագրությամբ նվիրվել է Սարդարապատի ճակատամարտի ընդհանուր հրամանատար, գեներալ Դանիել բեգ Փիրումյանին, որը 1895 թ. Խրիմյան Հայրիկի ընդունելության հանձնաժողովի անդամ էր)

սակայարանը հասած թուրքական զորքի վրա և դիպուկ կրակով կանգնեցնում նրանց: Հրետանային հաջող նախապատրաստությունից հետո 5-րդ գնդի զինվորները շարժվում են դեպի Վերին ու Ներքին Կուլիբեկլու գյուղերը և Ղամիշլու կիսակայարանը:

Թուրք զորքի առաջխաղացումը կասեցված էր, մնում էր ընկճել նրան, կոտրել նրա դիմադրությունը և ոչնչացնել ու փախուստի մատնել: Թիկունքից շարունակ եկող աշխարհազորայինների գործոն օժանդակությամբ Ստեփան Խաչատրյանի գումարտակին հաջողվում է՝ հարավից պարտիզանական գնդի համագործակցությամբ՝ Կուլիբեկլու գյուղերից մինչև Ղամիշլու փռված բաց հարթության վրա, դեռ Գեչրլուն ու Սարդարաբադը ետ չգրաված, օղակի մեջ առնել և ամբողջությամբ ոչնչացնել «Գեյլիբոլու» դիվիզիայի երկու վաշտ, շուրջ 500 թուրք զինվոր:

Ղամիշլու հասած թուրքական երկու վաշտը ոչնչացնելու գործին, որ մասնակիցների հիշողության մեջ մնացել է «Սև ջրի կռիվ» անունով, ամենաեռանդուն մասնակցություն են ցուցաբերում «պատանքավորները», որոնք միջնադարյան կրոնական սպաՏերազմների մարտիկներին հատուկ ջերմեռանդությամբ և անձնազոհությամբ կռվում էին թևերում:

Ծուտով կռվին մասնակցում է գնդապետ Կարաքեշիշյանի մարտկոցը:

Օրվա երկրորդ կեսին կռվի վայրն է հասնում մինչ այդ անհանգիստ Ջանգիբասարին վերահսկող կապիտան Կլիչն իր ծանր հրետանու մարտկոցով: Անվրեպ նշանառու Կլիչն առաջին ռումբերն ուղղում է Սարդարաբադ կայարանի ջրհան աշտարակի վրա և դիպուկ կրակով խափանում է այն՝ այդ անջրդի անապատում թուրք զորքին զրկելով ջրի միակ աղբյուրից: Ծարավից տանջվող հոգնած թուրք զորքն սկսում է անկանոն փախուստ, հարմար թիրախ դառնալով 28 թնդանոթների ահարկու կրակին, Տաճատ Հովակիմյանի և Թևիկ Առաքելյանի գնդացրային վաշտերի հնձիչ հարվածներին և մանավանդ կատաղի մոլուցքով առաջ խոյացող աշխարհազորայինների դիպուկ գնդակներին:

Երեկոյան ժամը 7-ին պարտիզանական գունդը երկաթգծի հարավից առաջինն է մտնում Սարդարաբադ գյուղն ու կայարանը: 5-րդ գունդն ամրապնդում է հաղթանակը:

Տաճիկները ջարդվում են, նահանջում, ապա փախուստի դիմում: Կեսօրից քրքրոջված և հինգ-վեց ժամ տևած կռվից հետո նրանք Ղամիշլուից փախչում են մինչև Արաքս և Կարաբուրուն կայարանների միջև ընկած առապարներն ու բարձրությունները:

Հայ զորքը կռվի առաջին օրը կանգ առավ աշխարհազորայինների հեռման բնագծում և բնակավայրերից այն կողմ չանցավ:

Սարդարաբադը զոյամարտ էր, հայ ժողովրդի կորիզի կենաց և մահու կռիվ: Ինքնապաշտպանության համար ոտքի էին ելել հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները: Միապետականի հետ միասին կռվում էր կոմունիստը, դաշնակցականների հետ միասին՝ հնչակյաններն ու ռամկավարները, հրգեվորականների հետ միասին՝ սպարտակյանները: Ձենք էին վերցրել և զենք էին վերցնում ու Սարդարաբադ գնում զենքի ընդունակ և անընդունակ բոլոր տղամարդիկ՝ ծերունազարդ Թաղիանոսյանից մինչև պա-

տանի Ակսել Բակունցը: Այնտեղ կռվում էին իրենց կյանքում առաջին անգամ զենք տեսնող ուսուցիչներ և խանդավառ աշակերտներ, հողի մշակներ և աղաներ, արհեստավորներ և բանվորներ:

Արարատյան դաշտում վերաբնակված խնուսցիներն և ալաշկերտցիները հաճախ կռվում էին ամբողջ տոհմով՝ պապը, որդիները, թոռները, 14—16-ամյա ծոռները: Իր նորակազմ փոքրիկ խումբը ղեկավարում էր կարկառցի Եղիշը:

Հայ ժողովուրդը բոլոր կողմերից եկել ու կծկվել էր Արարատյան դաշտում: Բռունցքը սեղմվելու սահման ունի, որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Սարդարաբադում տաճիկները դեմ առան հայ ժողովրդի կծկված և քարի պես ամուր դարձած բռունցքին, որ ջախջախիչ հարված տեղաց նրանց գլխին:

Նրանց մեծ կորուստները սասանել էին տաճիկներին:

Երզնկայից մինչև Սարդարաբադ նրանք ոչ մի տեղ լուրջ կռիվ չէին մղել: Ալեքսանդրապոլ նրանք մտան, ինչպես սպառնացել էին, «շքերթով»: Սակայն Սարդարաբադում շքերթը վերածվեց հողարկավորության թափորի:

Հայ զորքը ռազմամթերքի պակաս չզգաց նախ այն պատճառով, որ Սարիղամիշից և Կարսից որոշ պաշար,—երբ դրությունն այդ ճակատներում անհուսալի էր դարձել,—շատ մեծ դժվարություններով, բայց, այնուամենայնիվ, վաղօրոք բերվել էր Երևան: Առանց այդ էլ Քանաքեռում զգալի պաշար կար:

Հայ զորքն իր թիկունքում հենվում էր հայկական կուշտ գյուղերի վրա, որոնք իրենց ամբողջ ունեցածը թե՛ կամավոր կերպով և թե՛ իրերի բերումով տրամադրել էին հայ զորքին:

Հայկական հրետանու դիպուկ կրակը, պարտիզանական գնդերի խոյական գրոհները, 5-րդ գնդի մեթոդիկ առաջխաղացումը և գնդացրային հնձիչ կրակը թե՛ ճակատից թե՛ կողքից և թե՛ թիկունքից հարվածող հեծյալ խմբերն ու աշխարհազորայինները Արաքս կայարանից դեպի Կարաբուրուն տանող ղըռերը մեծ գերեզմանոց դարձրին Գեյիբոլու դիվիզիայի համար, որ տաճիկների ամենամարտական զորամասն էր: Մայիսի 22—26-ի կռիվների ժամանակ թշնամին այդտեղ թողեց 3.500 դիակ:

Սարդարաբադի առաջին պարտության գույժն առնելով Բաթումում՝ Վեհիբ փաշան անմիջապես գլխի է ընկնում, որ սկսվել է հայ ժողովրդի ժողովրդական պատերազմը: Նա նույն օրը գիշերով, գնրմանական «Մերսեդեսով», Արդահանի վրայով մեկնում է Ալեքսանդրապոլ՝ անձամբ կոտրելու հայկական դիմադրությունը:

Սակայն արդեն շատ ուշ էր:



Գևորգ Ե կաթողիկոս Ամենայն Հայոց

Հայ ժողովուրդն սկսել էր անպարտելի ժողովրդական պատերազմ:

Սարդարաբադի կռվի առաջին օրը, մայիսի 22-ին, ժողովրդի ջերմ ու հուզիչ օգնությունը Սարդարաբադ հասավ առաջին իսկ օրը, առաջին կռիվը նոր վերջացած: Երևանում ստացվեց առաջին հուսադիր հեռագիրը՝ թշնամու առաջխաղացումը կասեցված է. այնուհետև՝ թշնամին ետ է շպրտված ու նահանջում է. ապա՝ մեր քաջարի մարտիկները ետ են գրավել Սարդարաբադ կայարանն ու գյուղը. ռմբակոծության ժամանակ վնասվել է Սարդարաբադ կայարանի միակ ջրհան աշտարակը, ջուր չկա, հաղթական զորքը ծարավ է... Քաղաքում այն ժամանակ ռադիո չկար, հեռախոս կար միայն պաշտոնատեղերում. հավաքման գլխավոր վայրը բուլվարն էր՝ Ազգային խորհրդի շենքի (ներկայումս՝ Երաժշտական կոմեդիայի թատրոնը) դիմաց: Մեկ ակնթարթում ուրախ լուրը տարածվում է ամբողջ քաղաքում. ժո-

ղովուրդը ոտքի է ելնում. ինքնաբերաբար հանդես են գալիս կարգադրիչներ, և ժողովուրդը, որ ինքն էլ լիասսովված և օրասյա-



Ծանիել բեգ Փիրումյանին ուղարկված երկտողը Խրիմյան Հայրիկի անունից՝ իր նկարի հետ միասին

րենով հաց էր ստանում, աննկարագրելի արագությամբ հավաքում է հաց, շաքար, թեյ, ծխախոտ և կժերով ու ամեն տեսակ ամաններով Երևանի ջուր։ Ժողովուրդն ինքն էլ վազելով դրանք տանում է կայարան, գնացք կազմում. մոտակայքում խոտի դեզ կար՝ մետաղալարերով սեղմ կապված խուրձերով. րոպեապես խուրձերը քանդում ու խոտը փռում են վագոններում՝ դասավորելով ջրի կժերն ու ամանները։ Մարտը դեռ նոր էր վերջացել, երբ թիկունքի առաջին համեստ նվերների գնացքը հասնում է Սարդարաբադ՝ երկարաձիգ սուլոցներով ազդարարելով իր ժամանումը։

Հոգեբանական մեծ նշանակություն ունեցան այդ գիլ սուլոցները,—պարտված և նահանջող տաճիկներն ավելի սարսափեցին՝ կարծելով, որ հայկական նոր համալրում ժամանեց։ Գոհունակության ժպիտ փայլեց հայ զինվորների շուրթերին, ուրախության ցնծագին աղաղակներով իրար ողջագուրեցին ծարավ զինվորը և նրան ջուր մատուցող հույ աղջիկն ու մայրը. մեկն արտասվա-

յորդ աչքերով հուզված աղոթում էր ու շատ-շատ խաչակնքում կուրծքն ու երեսը, մյուսը երգում և պարի էր հրավիրում Երևանից ժամանած հարազատ քրոջը, երրորդը մաքրում էր զենքը, հաշվում փամփուշտները և պատրաստվում էր իր մարտական հերթափոխին։ Ավելի սրտոտ հայուհիները փութեռանդ լավաշ ու ջուր էին տանում ամենաառաջավոր դիրքերը։

Մայիսի 22-ի հաղթանակից հետո Երևանում այդ իրեկո և գիշերը զորքի ցուցակագրման սեղաններ դրվեցին Անգլիական (ներկայիս՝ Կոմունարների) այգու մուտքի մոտ։ Սկետինգ-րինգում (հետագայում խորածարի ակումբի, ներկայիս Ունիվերմագի և հարակից ռեստորանի բակում) և Սեմինարիայի շենքի (ներկայիս պետհամալսարանի հին շենքի) դռանը։ Ինքնակամ ցուցակագրվողներն այնքան շատ էին, որ այլևս ամենքին չէին ցուցակագրում, խիստ ընտրություն էին կատարում։ Մարդիկ հաճախ ճարում էին մի հաստ գոտի, շալվարը հավաքում էին գուլպայի մեջ, որ դուռ տեսք տան իրենց և մերժման չարժանանան։ Կամավորները ներկայանում էին մեծ մասամբ իրենց զենքով և փամփուշտի բավականաչափ պաշարով։ Անգլիական այգում, Սկետինգ-րինգի բակում և Սեմինարիայի շենքի ծառուղիներում ամբողջ գիշեր ջոկատներ ու վաշտեր են կազմակերպվում, որոնք մայիսի 23-ի լուսաբացին այդպես մեկնում են Էջմիածին։

Մայիսի 24-ին գեն. Սիլիկովն Էջմիածնից արդեն հեռագրում էր Երևան. «Այլևս կամավոր չուղարկեք։ Ուղարկեցեք միայն սպա՝ տեղում հավաքվածներին զորամասերի մեջ կազմակերպելու և ղեկավարելու համար»։

Սարդարաբադի առաջին օրվա փայլուն հաջողությունը փոխեց կռվի ընթացքը։ Սարդարաբադում այնքան ուժ էր հավաքվել, որ հնարավոր եղավ մայիսի 23-ին Դոլուխանյանի գունդը, Կորոլկովի պարտիզանական հեծյալ գունդը, Զալինյանի հեծյալ գունդը, Սակելյարիի և ապա Իգիթխանյանի մարտկոցները, ինչպես նաև Բոյանդղի Մուրադի, Բաշգյառնեցի Մակեդոնի և այլ խմբեր եզիդիների հետ միասին ուղարկել Ապարան, որտեղով թուրքերն ուզում էին անցնել Երևանի թիկունքը՝ Քանաքեռ։

Սարդարաբադի առաջին հաղթանակից հետո գեներալ Նազարբեկովը Դիլիջանում հավաքված Ալեքսանդրապոլի զորաբաժնի զինվորներին և շրջանի հայությանը դիմում է հետևյալ կոչով. «Թվում էր, թե ամեն բան կորած է, և մեր նենգ թշնամուն մնում էր մի բան—շարունակել առաջխաղացումը հայկական երկրի խորքը... Աստծու ողորմածությամբ երևանյան քաջարի զորքը, որի դեմ

թուրքերը նույնպես, չնայելով գինադադարին, հարձակման էին դիմել, չստանալով և եռ մղելով հակառակորդի հարձակումները, ինքը հարձակման դիմեց և երկու օրվա կռվի մեջ ետ շպրտելով թուրքերին, ներկայումս հետապնդում է նրանց:

պարանի ու Ղարաքիլիսայի ճակատներում: Սարդարապատի և Ապարանի ճակատներում հաղթեց հայ զորքը, իսկ Ղարաքիլիսայի ճակատում անօրինակ սխրագործություններով զարդարելով հանդերձ իր գոյամարտը, հայ զորքը դժբախտաբար պարտվեց:



Սարդարապատի ճակատամարտին մասնակից 5-րդ հայկական հրաձիգ գնդի մի խումբ, որոնք ներկայումս ապրում են Երևանում. (ձախից աջ) Սարիբեկ Սարդարյան, Գրիգոր Ծիրինյան, Մանասեր Մանասերյան, Մարտին Մարտիրոսյան, Սերատ Չատինյան, Հակոբ Սիմոնյան, Գրիգոր Մարգարյան

Երևանյան զորքի հաղթությունը ոգևորել է ալեքսանդրապոլյան զորքի զինվորներին, կազմվել են վաշտեր, բատալիոններ ու գնդեր, որոնք շտապով ետ են դարձել, ունենալով միայն մի միտք ու մի բաղձանք—հաղթել կամ մեռնել»[1]:

Մայիսի 24—28-ը կատաղի կռիվներ տեղի ունեցան ինչպես Սարդարապատի ղըռերում՝ Զիմնի-ղըռ և Թուլքի-թափա բարձունքների մատույցներում, այնպես էլ Ապարանի...

Այսպիսով, Սարդարապատի մայիսի 22-ի հաղթանակը բեկումային եղավ 1918 թվականի հայ-թուրքական պատերազմի մեջ, ապահովելով ինչպես հայ ժողովրդի կորիզի ֆիզիկական գոյությունը, այնպես էլ խանձարուրի նմանվող մի փոքրիկ հողապատառ՝ նրա քաղաքական անկախության և տնտեսական ու մշակութային վերելքի համար:

Սարդարապատի հերոսամարտը հանդիսացավ հայ ժողովրդի պատմության առավել վճռական գոյամարտը, որտեղ հայ ժողովուրդը փայլուն կերպով բռնեց անկախ գոյատևության իրավունքի իր քննությունը:

[1] «Հորիզոն», 1918, մայիսի 28, № 100, «Պանծալի նահատակների կույր»:

## 1918 թվականի մայիսի լույս 22-ի գիշերը Էջմիածնում

Դեպի Կոտայք ու Սևան նահանջի ծրագրի համաձայն նպատակահարմար էր համարվել Գևորգ Ե կաթողիկոսին ևս առաջարկել մեկնել Սևան: Գեն. Սիլիկովը մայիսի 20-ին ներկայանալով կաթողիկոսին՝ նրան առաջարկում է մեկնել Սևան:

Էջմիածնի միաբանությունը քսաներորդ դարի առաջին երկու տասնամյակներում աչքի էր ընկնում իր ինչպես գիտական կարող ուժերով, այնպես էլ հասարակական գործունեության ջիղով օժտված եռանդուն հոգևորականներով:

Տարաժամ մահը մոտեցել էր: Թշնամին դիմադրության չհանդիպելով մտել էր Արարատյան դաշտը և առաջ էր շարժվում: Հայոց Կենտրոնական Ազգային Խորհրդի ղեկավարները կտրված մնացել էին Թիֆլիսում, գլխավոր հրամանատար գեն. Նազարբեկովն Ալեքսանդրապոլի անկումով կազմալուծված հայ զորքի բեկորների հետ ապավինել էր Գիլիջան: Այդ տարտամ և հոգեվարքային օրերին հայ զորքին խանդավառելու և ժողովրդին ինքնապաշտպանական կռվի համար ոտքի հանելու գործում մեծ նախաձեռնություն ցույց տվեց Էջմիածնի միաբանությունը Գևորգ Ե կաթողիկոսի հաստատակամ ղեկավարությամբ: Հարկ է ասել, որ հետագայում էլ, մինչև 1918 թ. նոյեմբեր ամիսը, երբ թուրքական յաթաղանը կախված էր Էջմիածնի ու Երևանի վրա, ոչ ոք իրեն այնպես անհողդողդ չպահեց, ինչպես Գևորգ Ե կաթողիկոսը:

Գեն. Սիլիկովից հետո մայիսի 21-ին Արամ Մանուկյանը և Երևանի պարետ Արշո Շահխաթունին Երևանից ժամանում են Էջմիածին՝ կաթողիկոսին Երևան, ապա Սևան տանելու համար: Սակայն հաստատակամ կաթողիկոսը կտրուկ մերժում է նաև նրանց խորհուրդը:—«Եթե հայ զորքն ու ժողովուրդը,—պատասխանում է նա Երևանի հրավիրակներին,—ի վիճակի չեն պաշտպանելու այս սուրբ վայրերը, ապա ես ինքս մենակ սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր տաճարի գավթում, բայց չեմ հեռանա մեր պապերի ավանդ մնացած Մայր Աթոռից»: Այնուհետև կաթողիկոսը կարգադրում է ահազանգ տալ Մայր տաճարի զանգակատնից: Միաբանության անդամները գալիս ու հավաքվում են նրա շուրջը:—«Մեզ խորհուրդ են տալիս լքել Մայր Աթոռը և հեռանալ սուրբ Էջմիածնից,—ասում է կաթողիկոսը իր միաբաններին.—Ես ինքս մնում եմ, ձեզանից ովքեր ցանկանում են գնալ, ազատ են, կարող են գնալ»: Միաբանության անդամները բոլորում են նրա շուրջը ավելի սեղմ օղակով:

Հրավիրակներին ճամփու դնելով դեպի Երևան, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանը, ծերունազարդ ու դողդոջուն, սակայն վճռական մարդու հանգիստ ու անվրդով քայլերով իջնում է վեհարանից և գիշերային աղջամուղջի մեջ իր քայլերն ուղղում դեպի Մայր տաճար, որտեղ Իջման սուրբ սեղանի առաջ արտասվաթոր աչքերով երկար ու երկար աղոթում է: Ապա հինավուրց տաճարի կամարների տակ երկինք է առաքվում հուզիչ «Տէր ողորմեա»-ն:

Սուրմալվի գաղթի երրորդ օրն էր: Մշո, Խնուսի և Ալաշկերտի վերաբնակիչ գաղթականներից շատերը դեռ ապրիլի սկզբին հանգրվանել էին Էջմիածնում և վանքի շուրջը: Սուրմալվի և Ղուրդուղուլու գաղթականներն էլ,—մեծ մասամբ տղամարդիկ, բոլորն էլ զինված,—նույնպես կանգ էին առել հինավուրց վանքի պարիսպներից ներս և պարիսպներից դուրս: Ահազանգը, որ Մայր տաճարից սկիզբ առնելով արդեն արձագանքում էր Գայանեի և Հռիփսիմեի զանգակատներից,— իսկ հետագա ութ օրերին անլռելի ղողանջում էր Արագածից մինչև Արաքս և Էջմիածնից մինչև Սևան,— թունդ էր հանել գաղթի ճանապարհներին փրկություն որոնող տարտամ հայ շինականին և նրան ավելի էր սեղմել դարավոր վանքի շուրջը, որի քանն ու անտառը և մերձակա փողոցները հեղեղված էին վճռական ձայնի ու ձեռքի կարոտ և իր հուսահատության մեջ սխրագործության պատրաստ ժողովրդի բազմությամբ: Ահասարսուռ ահազանգը զարթեցնում, զգաստացնում, սթափեցնում էր բոլորին, խանդավառում ամենքին համեստ զոհողության և հերոսական անձնազոհության:

Աղթամարա և Առաքելոց վանքերի միաբան երեք վարդապետ, բոլորն էլ անվրեպ կրակող քաջ ռազմիկներ, վաղորդյան մթնշաղի մեջ, երբ սրտամորմոք ու տրտմաթախիծ «Տէր ողորմեա»-ին հաջորդել էր կորովալի, «Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, Առ իս լոյս ծագեա»-ն, և արեգակի առաջին շողերն արդեն սկսում էին լուսե պսակ վառել սեգ Արարատի կատարին, հրացանը ձեռքներին մտնում են խուռներամ բազմության մեջ և իրենց հետևելու հորդոր են կարդում.—«Փրկության ուրիշ ճանապարհ չկա, պատանքներդ առեք ու միասին գնանք ստույգ մահվան»: Այդ առավոտ նրանք ավելի քան 500 «պատանքավոր» են տանում դեպի Սարդարաբադ:

Կաթողիկոսն իր մոտ է կանչում Գարեգին և Զավեն եպիսկոպոսներին, օրհնում նրանց և ուղարկում կռվի հորդոր կարդալու հայ զորքին: Գարեգին և Զավեն եպիսկոպոսները մայիսի 22-ի վաղ առավոտյան ձի հեծած

պլանում են Էջմիածնի մոտակա Հայ Ջեյվա և Բյուրիայու գյուղերը։ Պարթևահասակ Զավեն եպիսկոպոսը որպես Էրզրումի առաջնորդ Երզնկայից մինչև Արարատյան դաշտ հաճախ էր եղել ռազմաճակատի առաջին գծերում, իսկ փոքրահասակ, վտիտ Գարեգին եպիսկոպոսը որպես գրքի ու գիտության մարդ, առաջին անգամ էր կռվի դաշտ գնում։ Բայց Գարեգին եպիսկոպոսը կրակոտ ճառախոս էր, նա կարողանում էր ոչ միայն ոգևորվել, այլև ոգևորել ունկնդիրներին։ Ճեմարանի աշակերտները նրան այդ շնորհքի համար սիրով «Պողոս առաքյալ» մականունն էին տվել։ Նա ոգեշունչ խոսքով դիմում է իր հայրենակից դարաբաղցի զինվորներին, բացատրում է թշնամու անողորմությունը, վտանգի մեծությունը, օգնական ուժի և նահանջի ուղիների իսպառ բացակայությունը, այսքազան հողի վրա պատվով մեռնելու միակ հնարավորությունը։ Նա «մահապարտներ» է անվանում հայ ժողովրդին ու նրա զորքին, 5-յդ գունդը վերանվանում է Մահապարտների գունդ, աղոթք է չոքեցնում և երդվեցնում կռվի դուրս գալ անվախ ու աննահանջ։ Այսպ Գարեգին եպիսկոպոսը և Զավեն եպիսկոպոսը խաչը ձեռքերին բարձր պահած ընկնում են զորքի առաջ և հրամանատար գնդապետ Պավել Փիրումյանի հետ միասին նրանց առաջնորդում պատվավոր մահվան։

Հայկական հրետանին կրակում էր անվրեպ մեթոդիկորեն ոչնչացնելով տաճիկների նորանոր կրակակետերը։ Հայ զորքն առաջ էր շարժվում։ Խանդավառությունն աննկարագրելի էր։ Գարեգին և Զավեն եպիսկոպոսները շարունակ աղոթում էին միշտ տեսանելի բարձրություններ վրա կանգնած։

Այդ ծանր օրերին Մայր Աթոռը, Ամենայն Հայոց կաթողիկոսն ու միաբանությունը, հավատարիմ հայ եկեղեցու հայրենասիրական դարավոր ոգուն, միասնակամ ու աննահանջ դուրս էին եկել հասարակաց թշնամու դեմ հանուն հայրենյաց և ազգի։

Սարդարաբադում հաղթանակում էր հայ ժողովրդի հայրենասիրությունն ու սրտառուչ հավատքը։

ՊԱ-9625

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

# ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻՑ

Գնացքը չմեկնեց։ Սարդարաբադից քիչ հեռու երկաթուղագծերը պայթեցրել էին...

Ուղևորները գիշերեցին կայարանում։

Մութը ցրվում էր, երբ սև ամպեր կուտակվեցին Հայաստանի վրա...։

Կայարանում, քամու արագությամբ լուր էր շրջում թուրքական բանակի շարժումների մասին...

Երրորդ օրն էր... և գնացքը մնում էր տեղում։ Ոչ ոք ոչինչ չէր իմանում...

Ուղևորներից շատերը ճանապարհը շարունակեցին սայլերով...

Հերյանը որոշեց ամեն գնով հասնել Երևան...

Հինգերորդ օրը լուսաբացին խուճապ ընկավ կայարանում սպասող ուղևորների մեջ։

Հեռվից թնդանոթի խուլ ձայներ լսվեցին։

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց Հերյանը։

— Բա, չեմ իմանում, կռիվ է... թուրքերը փորձում են նվաճել Արարատյան դաշտը...։

Մի խումբ զինված մարդիկ մոտեցան կայարանին։

— Շատերը պնդում էին, որ վճռական ճակատամարտը մղվի Սևանում,—միջամտեց մի ուրիշը,—սակայն ժողովուրդը չուզեց, չուզեց որ մեր սուրբ դաշտը պղծվի, և ահա երեք ժամ է կռվում ենք...

Առաջին խրամատները։

Հայկական հրետանին հանգիստ չէր առնում։ Գնդացիրները անդադար կրակում էին։

...Զենքի բեկորներ, զգեստների պատռըված կտորներ, թիթեղի արկղներ, մի կողմը թեքված հրետանու անանիվ կառքեր, ռումբեր, դատարկված փամփուշտներ, ձիերի դիակներ...

Եկեղեցու նախկին խորանի վրա բժշկական գործողությունների սեղան էր սարքված։ Վարը պատահական բարձրությունների վրա, հարմարեցրել էին երկու ուրիշ սեղաններ։

Այդ ամենը կատարվում էր խոր, մեքենական լռության մեջ։ Հոգնած, սփրթնած երեսներով բժիշկների արյունած ձեռքերի վրա մի դույլից ջուր էին թափում և նրանց բերանների մեջ վառված ծխախոտ դնում։ Նրանք մի քանի անգամ քաշում էին, նետում և արագ վերադառնում գործի։

Ամենից շատ զբաղվածները ճերմակ հագած մի քանի կանայք էին։ Անդադար պըտույտ էին գալիս բժիշկների շուրջը, գործիքները եփում, վերքերը կապում, շտապ շտապ՝ կեր որոնող թռչունների նման աջ ու ձախ վազում և նորից գնում իրենց տեղը։

Դժգույն դեմքով, ճերմակ հագած մայրապետներ արյունալի պատարագներ էին մատուցում չար և ոխերիմ աստվածներին։ (Հինավուրց խորանի վրա երկարած մարդկային չարչարված այդ մարմինները արդյոք ահավոր զոհաբերություններ չէի՞ն, և նրանց շուրջը պտույտ եկող լռակյաց այդ մարդկանց և կանանց շարժումները մաս չէի՞ն կազմում խորհրդավոր այն արարողության, որի գաղտնիքը անըմբռնելի էր)...

Նոր վիրավորներ էին բերում։

Ամեն կողմ յոդոֆորմ էին սրսկում։ Պատերի հետև, խուլ ռոնոցով ռումբեր էին պայթում։ Գետնին պառկած վիրավորները մղկտում էին։

— Ջուր, ջուր,—չորացած շրթներր շարժելով խնդրում էին շատերը:

Ոմանք տնքում էին, ոմանք խրտում:

Այն օրը Սարդարաբադը գոռաց և վայնեց:

Հայ ժողովրդի բոլոր խավերը վիթխարի և վճռական թափով որոշել էին թշնամուն ետ մղել:

Մտան խրամատների մեջ: Պատռած, եռացող վերքերով մարմիններ կռեցին: Աշխատանքը այնքան շատ էր, որ Հերյանը ուժասպառ էր եղել. ծնկները դողում էին, շրթները չորացել էին:

Խլրտող կոնկորդներ, խոլ վայոցներ, ծանր տնքոցներ:

Արյունի, յոդոֆորմի, ացետիլենի և թթվածնի հոտը լցրել էր ճակատամարտի վայրը: Արարատը՝ մի կողմ քաշված՝ անտարբեր նայում էր: Երկնքի վրա կապարե ամպեր էին կախվել: Թեթև քամի էր փչում:

Դրսից դիտված՝ կռիվը շարունակվում էր անողոք, անանուն, մեքենական: Հրամաններր հնչում էին չոր, կտրուկ, և մարդիկ կատարում էին այդ հրամաններր վարժ. արագ շարժումներով, առանց հուզումի, սառնասիրտ, համառ:

Խրամատներից դուրս էին վազում, առաջ նետվում, պառկում:

— Կրակ...

Կրակում էին:

Գնդացիրները ջղայնացած տրաքտրաքում էին, թնդանոթները վայելով աղմկում: Անապատի կարծր հողերր վեր էին թռչում, հառաչելով պտույտ գալիս, թափվում:

Ծուխ, կրակ, երկաթ:

— Հարձակման պատրաստ...

Թողնել թուրքերին որ մտնեն Արարատյան դա՞շտ:—Այդ երբեք: Սի Եպիսկոպոս, խաչը ձեռքին, գնդակների տարափի տակ, խրամատից խրամատ էր անցնում և վառ ու պարզ խոսքերով այդ հիշեցնում հայերին:

Հայերը կռվում էին կատաղի կերպով:

Երկաթգծի հողաթմբի պատնեշի ետևից գնդերը դուրս նետվեցին և, դիմացի բլուրների վրա ամրացած թշնամու գնդակները արհամարհելով, համարձակ առաջ անցան և գրավեցին նոր դիրքեր: Հետևի հրետանին արագ տեղափոխվեց, և կրակը սաստկացավ:

Այնպես թվաց. կարծես ամբողջ դաշտը հանկարծ կատաղած տեղից շարժվել էր և զասումով լցված՝ նետվել առաջ:

Թուրքերը այդպիսի դիմադրության չէին սպասում:

— Պարոն գնդապետ, գործերը ո՞նց են գնում...

— Լավ: Թուրքերը ետ են քաշվում...

Ահ, Աստված, թուրքերը ետ են քաշվում...

Հիմա բավականին պետք էր քայլել հասնելու համար նոր բռնած դիրքերին: Ահա հետոն գնդերը շարժվում էին: Հրետանու մասերը անդադար տեղափոխվում էին: Թուրքերը հեռացել էին դիմացի բլուրներից:

Հայ գյուղացի տղաները՝ ծանրաշարժ, պնդակազմ՝ պատահական փոսերում շարքով պառկած անդադար կրակում էին: Ապա, հազիվ հրամանները հնչում էին, նրանք վեր էին ցատկում և ծանր կոշիկները գետնին խփելով վազում էին առաջ, մագլցում թմբերը, ծածկվում քարերի ետև և շարունակում կրակել:

Դաշտը դղրդալով ոռնում էր:

Թնդանոթները, որոնց առաջ մրոտած դեմքով մարդիկ քուրմերի նման միօրինակ շարժումներ էին անում, կրակում էին, ադաղակելով ետ քաշվում, նորից կրակում:

Երբեմն, նրանցից մեկը հանկարծ գամվում էր իր տեղը, սղոցած ծառի նման երերում և փլվում գետնին:

Պատահում էր, որ ռումբը ընկնում էր ամբողջ մի խմբի մեջ. ձյունամրրիկի նման պտույտ էր գալիս, ամեն ինչ կոտրտում, ծամում և օդը հանելով աղմուկով վայր թափվում: Մեկ էլ տեսնում էին, ինչպես պեղված հողի և ձյունի միջից, մեկը վեր էր ցատկում, բազուկները նոնելով, խենթացած վազում և, տասը քայլ հեռու, երեսի վրա երկարում:

Կամ այնտեղ, ուր քիչ առաջ քրմական շարժումներով լցնում էին թնդանոթը, հողերը մխում էին և մի կտոր ծանր լռություն սփռում թիթեղի արկղների, կոտրատված անիվների, մարդկային մարմնի կտորների և անասելի տակնուվրայության վրա:

Ա՜հ, Աստված, թուրքերը ետ են քաշվում...

Ահ Աստված, թուրքերը ետ են քաշվում...

...Գնդակները շարունակում էին սուլել:

Գիշերը Էջմիածնի զանգակները ղողանջում էին:

Հայերը մեծ հաղթություն էին տարել: Ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի էր կանգնել, նետվել մարտի դաշտ և հերոսաբար թշնամուն վտարել Արարատյան դաշտից դուրս: Այդ հաղթությունը հայ աշխատավոր ժողովրդի հաղթանակն էր:

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

1968 թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 5-ը հանդիսավոր պայմաններում գումարվեց խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարը Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաք Պրագայում։ Համագումարը տեղի ունեցավ Յու. Ֆուչիկի անվան զբոսայգում գտնվող և 18-րդ դարի վերջերին կառուցված շքեղ մի պալատի ընդարձակ դահլիճում։ Համագումարին մասնակցում էին 50 տարբեր երկրներից ժամանած ավելի քան 80 քրիստոնյա հարանվանական եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների շուրջ 500 պատգամավորներ, բազմաթիվ հյուրեր և դիտորդներ։ Համագումարին հրավիրված էր նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Պրագա՝ համագումար մեկնելու համար կազմված էր երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն, որի կազմում էին հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը և հոգևոր ճեմարանի դասախոս Պարգև Շահբազյանը։

Մարտի 25-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 17-ին, խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարի վերոհիշյալ պատգամավորությունը Նորին Ս. Օծության ս. աջը համբուրելուց և Նրա օրհնությունը ստանալուց հետո, ուղևորվում է Մոսկվա։ Մինչև համագումարի բացման օրը՝ մարտի 31-ը, մեր պատգամավորությունը մի քանի օր Մոսկվայում առիթ է ունենում մոտիկից ծանոթանալու ինչպես Սովետական Միության ռուս և վրաց պրավոսլավ, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և այլ քույր եկեղեցիների Պրագա մեկնող պատգամավորության անդամների, այնպես էլ արտասահմանից՝ Եթովպիայից, Հնդկաստանից, Սենեգալից, Լիբանանից, Ճապոնիայից, Կամերունից, Ցեյլոնից և այլ երկրներից եկած և Մոսկվայի վրայով Պրագա գնացող մյուս քույր եկեղեցիների ներկայացուցիչ-պատգամավորների հետ։ Ռուս պրավոսլավ եկեղեցին մարտի 28-ին կազմակերպել էր հանդիպում-ընդունելություն՝ ի պատիվ խաղաղության համաժողով մեկնող պատգամավորությունների։ Ի դեպ, նշենք, որ Պրագայի համագումարին որպես դիտորդ մասնակցելու էին եկել նաև մեր Միության ոչ-քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչներ ևս՝ մահմեդականներ և բուդդայականներ։ Սա ևս խոսում է այն մասին, որ խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարը տեղի էր ունենալու բացառիկ պայմանների մեջ։ Պրագայի նախկին համագումարին ոչ մահմեդականներ էին մասնակցել և ոչ էլ բուդդայականներ։

Ընդունելությունը, որը տևեց մոտ երեք ժամ, անցավ ջերմ և եղբայրական մթնոլորտում։

Մարտի 30-ն է։ Կարճատև հանգստից հետո համագումարի բացման նախօրեին Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատվիրակությունը, ռուս պրավոսլավ եկեղեցու բազմանդամ պատգամավորության հետ, Մոսկվա—Պրագա օդային ուղիով մեկնեց Չեխոսլովակիա՝ համագումարի։

Պրագայում հայ եկեղեցու պատգամավորությանը դիմավորելու էին եկել պրագայաբնակ ռեժիսյոր պ. Հայկ Մարտիրոսյանն ու եկեղեցիների խաղաղության կոմիտեի ներկայացուցիչները։

Պրագայում վեց օր հայ եկեղեցու պատգամավորությունը հյուրընկալվեց մայրաքաղաքի գեղեցիկ հյուրանոցներից մեկում՝ Պարկ-հոթելում։ Ինչպես իմացանք, այս հյուրանոցը կառուցվել է մասամբ եկեղեցի-

ների խաղաղության կոմիտեի օժանդակությամբ: Ահա թե ինչու նրա բակում երկաթե բարձր ձողի վրա համագումարի աշխատանքի օրերին միշտ ծածանվում էր վերոհիշյալ կազմակերպության կապույտ գծերով և հատուկ նշանով սպիտակ դրոշակը:

Ըստ ծրագրի մարտի 31-ին, ուղիղ ժամը 10-ին, Պրագայի ս. Սալվադոր ավետարանական եկեղեցում համագումարի բացման օրվա առթիվ տեղի ունեցավ կիրակնօրյա եկեղեցական պաշտամունք: Աղոթքի էին եկել Պրագա ժամանած մոտ 800 պատգամավորներն ու դիտորդները: Հոգևոր երգերից հետո ամբիոն է բարձրանում և քարոզում ճապոնական եկեղեցու պատգամավորության ներկայացուցիչ հոգ. հ. Սուզուկին՝ «Խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա» (սղմ. ԼԴ 15) բնաբանով: Այնուհետեվ հաջորդաբար ողջույնի խոսքերով հանդես են գալիս Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի անունից ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության ղեկավար, Լենինգրադի տ. Նիկոդիմ միտրոպոլիտը, Բուլղարիայի պատրիարք Կիրիլի անունից՝ բուլղար եկեղեցու պատվիրակության ներկայացուցիչը և Ռումինիայի պատրիարք Ժուստինիանի անունից՝ Ռումինիայի ներկայացուցիչը: Իր ողջույնի խոսքն է ասում նաև համայն վրաց պատրիարք և կաթողիկոս Տ. Եփրեմ Բ-ն:

Ժամերգությունը վերջանում է հոգևոր երգով: Հավարտ պաշտամունքի բոլոր պատգամավորները մայրենի լեզվով արտասանում են «Հայր մեր» աղոթքը:

Օրվա երկրորդ կեսին, ճաշից հետո, բոլոր պատգամավորները հավաքվում են համագումարի դահլիճը, ուր և տեղի է ունենում առաջին նստաշրջանի առաջին նիստը: Բեմի թավշյա մեծ վարագույրը փակ է, և ձախ կողմից նրա վրա վերից վար ձգվող սպիտակ երկարավուն կտավի վրա կապույտ գրերով ու հինգ տարբեր լեզուներով գրված է «Փրկեցե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է» համագումարի նշանաբանը:

Եվ ահա նախագահությունում են խաղաղության համաքրիստոնեական համագումարի նախագահ դոկտ. Ժ. Լ. Հրոմադկան և քարտուղարը՝ Ժ. Ն. Օնդրան, փոխնախագահները, առաջին հռետորները և ուրիշներ: Համագումարը բացված է: Ի դեպ, նախորդ՝ երկրորդ համագումարի համեմատությամբ, որը տեղի ունեցավ 1964 թ., ներկա համագումարն ավելի բազմամարդ էր, ինչ որ խոսում է Պրագայի շարժման ծավալման մասին: Այս անգամ շարժման մեջ ընդգրկվել էին նաև Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների եկեղեցիներն ու եկեղեցական կազմակերպությունները: Այդ շարժման մեջ Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի եկեղեցիները ևս նախորդի համեմատությամբ առավել լայն չափով էին ընդգրկված:

Առաջինը ելույթ է ունենում Մալգաշ հանրապետության լյութերական եկեղեցու ներկայացուցիչ և խաղաղության կոնգրեսի փոխ-նախագահ Ռ. Անդրիամանջատոն: Այնուհետև քննվում է ներկաների ցուցակը, ընտրվում է խմբագրական հանձնաժողով և տեղի է ունենում համագումարի բոլոր պատգամավորների տեղաբաշխումը աշխատանքային վեց խմբերի վրա: Ըստ ծրագրի, նախապես հաստատված այդ խմբերը հետևյալներն են.

ա) Աստվածաբանական հարցեր.

բ) Միջազգային հարցեր.

գ) Էկոնոմիկայի ազդեցությունը քաղաքական հարցերի լուծման վրա (էկոնոմիկա, խաղաղություն, պատերազմ).

դ) «Երրորդ աշխարհում» նոր հասարակարգի կառուցման կարևորությունը մարդու փրկության և միջազգային խաղաղության հաստատման համար.

ե) Նոր գիտակցություն և նոր հասարակարգ (այսօրվա ուտոպիան վաղվա իրականությունն է).

զ) ընդհանուր քրիստոնեական պատասխանատվություն անկախ դավանական պատկանելիությունից:

Ապա խոսք է առնում առաջին հռետորը՝ ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության ներկայացուցիչ գեր. տ. Միխայիլ արքեպիսկոպոսը՝ բնաբան ունենալով «Փընտրի՛ր խաղաղությունը և հետևի՛ր նրան» սաղմոսի խոսքերը (ԼԴ 15):

Հաջորդ զեկուցումը կարդում է Չեխոսլովակիայի պատգամավորության ներկայացուցիչ, ՔԽԿ-ի նախագահ դոկտ. Հրոմադկան՝ «Փրկեցե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է» համագումարի ընդհանուր նշանաբանով:

Համագումարի մարտի 31-ի օրվա առաջին նստաշրջանի երկրորդ նիստը տեղի ունեցավ երեկոյան ժամը 8-ին: Նիստի հենց սկզբին բոլոր պատգամավորների համար մեծ անակնկալ եղավ, երբ նախագահությունում նստած դոկտ. Հրոմադկան ներկայացրեց հենց նոր համագումար ժամանած հարավվիետնամցի չորս քրիստոնյա պատգամավորների՝ Ժոզեֆ Մարիայի գլխավորությամբ: Համագումարը նրանց դիմավորեց երկար ծափողջույններով: Նրանք Հարավային Վիետնամից ջունգլիներով փախել ու ոտքով անցել էին Հյուսիսային Վիետնամ և այնտեղից ժամանել էին համագումար: Խոսք է վերցնում պատգամավորության ղեկավարը, որի զեկուցումը

լսվում է մեծ հետաքրքրությամբ։ Նախագահը ի լուր ներկաների հայտարարում է, որ վիետնամցի եղբայրներից հենց այստեղ, համագումարի հավաքման շենքից, սենյակներ կտրամադրվեն. պատգամավորներից ով և երբ ուզենա, իրավունք ունի այցելելու նրանց և լուսաբանություններ ստանալու։

Հաջորդ զեկուցողն է հնդիկ պատգամավորության ներկայացուցիչ դոկտ. Ն. Թոմասը։ Նրա զեկուցման բնաբանն էր՝ «Աշխարհը և ընկերային հիմնական փոփոխությունները»։ Օրվա նստաշրջանի վերջում զեկուցում է դոկտ. Սանտա Անան Ուրուգվայից։ Նրա ծավալուն զեկուցման նյութն էր «Երրորդ աշխարհի տնտեսական դրությունը և նրա խնդիրները լուծելու առաջարկներ»։ Առաջին օրվա նստաշրջանում լսվեց նաև ՔԽԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Օդրայի զեկուցումը ՔԽԿ-ի աշխատանքային կոմիտեի գործունեության մասին երկրորդ և երրորդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում։

1-ը ապրիլի համագումարի երկրորդ օր և երրորդ նիստ։ Բոլոր պատգամավորները գնում են դեպի իրենց խմբերը։ Նշենք, որ բոլոր ենթախմբերը նիստերի բոլոր օրերին իրենց աշխատանքն սկսում էին և վերջացնում աղոթքով։ Առավոտյան, միշտ, աղոթքից հետո, ենթախմբերն ուսումնասիրում էին ս. Գրքից այս կամ այն համարը, ապա մի փոքր դադարից հետո սկսվում էր մտքերի փոխանակությունը։ Երեք խմբերում էլ հայ եկեղեցու պատգամավորները քննարկվող հարցերի վերաբերյալ միշտ գործուն մասնակցություն էին ցուցաբերում և մասնակցում քվեարկություններին։ Համագումարն այսպես իր աշխատանքները շարունակեց մինչև ապրիլի 2-ի օրվա երկրորդ կեսը, մինչև 8-րդ նիստը, երբ նորից տեղի ունեցավ լիագումար նիստ, ուր և հռետորների ելույթներից առաջ կարդացվեցին համագումարի պատգամավորներին ողջունող երկու նամակներ, մեկը՝ ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու Տանի, և մյուսը՝ Չեխոսլովակիայի հանրապետության նախագահ Սվոբոդայի կողմից։ Երկու նամակներն էլ, ողջունելով խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարի մասնակիցներին, նրանց գործերին հաջողություններ և բեղմնավոր աշխատանք էին մաղթում։ Այնուհետև լսվում են պրոֆ. Ժորժ Կազալիսի (Ֆրանսիա) «Մեր ելույթ հօգուտ ընկերային մարդասիրության», դոկտ. Ահարոն Թոյենի (Կամերուն) «Առաջին հերթին կարևորը ո՞րն է՝ փրկությո՞ւնը, թե մարդու կեցությունը», պրոֆ. Նասդի (Հունգարիա) «Մարդու ինքնամեկուսացումը, նրա վաստարկումներն ու հնարավորությունները այդ մեկուսացումը վերացնելու այնպիսի աշխարհի համար, ուր թագավորեր խաղաղությունը» և պրոֆ. Կ. Օգավայի (Ճապոնիա) «Ընդհանուր պարտականություններ կան համայն մարդկության համար» վերնագրեր ունեցող ելույթները։

3-ը ապրիլի, չորեքշաբթի։ Տեղի են ունենում ենթախմբերի հերթական 9-րդ և 10-րդ նիստերը։ Այս երեկոյան ժամը 20-ին՝ լիագումար նիստ, որտեղ շարունակվում են կարդացված զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությունները։

4-ը ապրիլի, հինգշաբթի։ Համագումարը նորից հավաքվում է լիագումար նիստի։ Հարմար նկատվեց այս նիստում ամփոփել ենթախմբերում ծավալված բանավեճերի արդյունքները, որպեսզի բոլոր վեց ենթախմբերում մինչ այդ ընդունված ամեն մի որոշում և տեղի ունեցած ամեն մի բանավեճ ձև և բովանդակություն ստանար։ Եվ ահա թե ինչու բացառիկ կարևորությամբ համագումարը, մի քանի այլ հարցերից բացի, կետ առ կետ քննարկեց և քվեարկեց Վիետնամի վերաբերյալ բանաձևի առաջին մասը և ձայների մեծամասնությամբ հաստատեց այն։

Համագումարի վերջին օրը՝ ապրիլի 5-ին, տեղի ունեցան 15-րդ, 16-րդ և 17-րդ նիստերը։ 15-րդ նիստը անցավ ընդհանուր բանավեճերով. ընդունվեցին մի քանի բանաձևեր ևս։ 16-րդ՝ լիագումար նիստի ժամանակ համագումարի մասնակիցները նախագահ Հրոմադկայի հայտարարությունից ցավով տեղեկացան խաղաղության պայքարի մարտիկ և միջազգային մրցանակների դափնեկիր վերապատվելի դոկտ. Մարտին Լութեր Կինգի սպանության մասին։ Այնուհետև ժողովականները վերսկսեցին Վիետնամի բանաձևի երկրորդ մասի քննարկումը՝ անելով անհրաժեշտ լրացումներ։ Բանավեճը տևեց բավական երկար։ Այն ամբողջացավ և ընդունվեց ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ բուռն ծափահարություններով։ Երեկոյան հաստատված և ընդունված այդ բանաձևը, համագումարի աշխատանքներում ընդունված չորս լեզուներով, բաժանվեց բոլորին։

Ապրիլի 5-ին կատարվեց հանգանակություն՝ Վիետնամի ժողովրդին դեղորայքով, պարենով և զգեստով օգնելու նպատակով։ Հանգանակությունից գոյացավ մոտ 7000 չեխական կրոն։

Վերջին նիստում տեղի ունեցան ընտրություններ։ ՔԽԿ-ի նախագահ և գլխավոր քարտուղար վերընտրվեցին դոկտ. Հրոմադկան և Օնդրան։ Վերընտրվեցին նաև

երեք փոխ-նախագահները: Վերջում ընտրվեց աշխատանքների շարունակող կոմիտե՝ բաղկացած շուրջ 140 հոգուց. հայ եկեղեցու պատգամավորներից Նարեկ վրդ. Շաքարյանը ևս ընտրվեց սույն կոմիտեի կազմում:

Այսպիսով, մեծ խանդավառության պայմաններում, ուրբաթ օրը, Պրագայի՝ խաղաղության համաքրիստոնեական հերթական երրորդ համագումարը երեկոյան ժամը 23-ին ավարտեց իր վեցօրյա բեղմնավոր աշխատանքները՝ նախագահ Հրոմադկայի եզրափակիչ հակիրճ խոսքով և փոխնախագահ միտրոպոլիտ Նիկոդիմի գոհաբանական աղոթքով: «Մենք հավաքվել ենք խաղաղության համաքրիստոնեական այս երրորդ համագումարին նրա համար, որ չնայած գոյություն ունեցող որոշ պակասություններին, մենք համոզված ենք, որ խաղաղությունը հնարավոր է ձեռք բերել: Խաղաղությունը հնարավոր է, որովհետև Աստված իր հավատարմությամբ փնտրում է մարդուն, ինչպես փնտրել է նրան ի սկզբանե անտի...

«Փնտրի՛ր խաղաղությունը և հետևի՛ր նրան»:

Փրկեցե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է»,—այս խոսքերով է դիմում համագումարը աշխարհի բարի կամքի տեր բոլոր մարդկանց:

Եվ իրոք, ըստ Աստվածաշնչի այն խոսքերի, թե «Փնտրի՛ր խաղաղությունը և հետևի՛ր նրան», խաղաղության հասկացությունը ինքնանպատակ հասկացություն չէ: Խաղաղությունը կարելի է նվաճել այն պայմանով, եթե բոլոր քրիստոնյաները ակտիվորեն պայքարեն խաղաղության համար: Խաղաղությունը պետք է որոնել. նրա համար պետք է պայքարել: Այդ պայքարի մեջ բոլոր քրիստոնյաների գործողությունները պետք է միավորել խաղաղության համար մաքառող մարդկանց գործողությունների հետ: Եվ վերջապես, խաղաղությունը «ստատուս կվո» չէ, այն ստատիկ վիճակ չէ. այլ, ընդհակառակը, պետք է համապատասխանի ժամանակի պահանջներին. խաղաղությանը պետք է տիրել:

Եվ կամ վերցնենք մյուս նշանաբանը՝ «Փրկեցե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է»: Համագումարը վճռական կերպով դրեց այն հարցը, որ մեր դարում, ատոմական դարում, երբ տեղի է ունենում սպառազինությունների մրցավազք, երբ մարդկությանը սպառնում է կատարյալ ոչնչացում, քրիստոնյաների կրավորական խաղաղասիրությունը կնշանակեր Քրիստոսի ուսմունքի ժխտում: Սակայն մարդկությանը սպառնում է ոչ միայն պատերազմը, այլև ընկերային խոր անհավասարությունը և անարդարությունը, հատկապես «Երրորդ աշխարհի» երկրներում: Համագումարը, իրավամբ, վճռական կերպով դնում էր այն հարցը, թե անհրաժեշտ է վերջ տալ ընկերային անարդարությանը, եթե նույնիսկ այն պահանջեր հեղափոխական եղանակների գործադրում:

Առաջնորդվելով այս խնդիրների կենսագործման ոգով՝ համագումարն ընդունեց մի քանի գործնական բանաձևեր Վիետնամի պատերազմի մասին, Եվրոպայի անվտանգության, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների կողմից իրենց անկախության և սուվերենության համար մղած պայքարի մասին:

Վերոհիշյալ փաստաթղթերի մեջ համագումարը դատապարտեց ամերիկյան ագրեսիան Հարավային Վիետնամում և արտահայտվեց հօգուտ Վիետնամի հարցի խաղաղ կարգավորման, պաշտպանեց խաղաղասիրական ուժերի ջանքերը Եվրոպայի անվտանգության համար մղվող պայքարում և Աֆրիկայի ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, ինչպես նաև դատապարտեց արևմտագերմանական նեոֆաշիստների դավադրությունները:

Այս փաստաթղթերում իրենց արտահայտությունը գտան Պրագայի շարժման կողմնակիցների մտքերն ու իղձերը և դրանց հետ միաժամանակ բոլոր բարի կամքի տեր մարդկանց ու առաջադեմ մարդկության ձգտումներն ու իղձերը ժամանակակից միջազգային կյանքի հրամայական հարցերի նկատմամբ: Սրանում են կայանում ահա խաղաղության պաշտպանության Պրագայի համագումարի ծառայությունները խաղաղության սրբազան գործին և նրա համաշխարհային նշանակությանը:

Ապրիլի 6-ին Չեխոսլովակիայի Հանրապետության մշակույթի մինիստրը բարեհաճում է ընդունել իր երկրի հյուրընկալ հարկի տակ գտնվող խաղաղության համագումարի աշխատանքներին մասնակցելու եկած շատ պատգամավորների: Հայ եկեղեցու պատգամավորությունից այդ ջերմ ընդունելությանը հրավիրված էր Նարեկ վրդ. Շաքարյանը:

Նույն օրը, երեկոյան, պատգամավորները հրաժեշտ են տալիս Պրագային:

Ապրիլի 7-ին Պրագայի համագումարից վերադարձած հայ եկեղեցու պատգամավորները Մոսկվայում, հայոց ս. Հարություն եկեղեցում, ներկա են լինում կիրակնօրյա պատարագի: Օրվա պատարագիչն էր Ռու-

սատանի թեմի առաջնորդ գեր. տ. Պարգև եպսկ. Գևորգյանը:

Հաջորդ օրը պատգամավորությունը ուղևորվում է դեպի Երևան: Այսպիսով, Հայաստանյայց առաքելական եկեղեցին մի անգամ ևս կատարեց իր սրբազան առաքելությունը «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» և ի փառս մեր սուրբ եկեղեցու:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Թող Աստված իր ս. Ավետարանի սիրո մեջ մեզ բոլորիս հաստատ պահի և զորավիգ լինի մեզ, որպեսզի իր առաջնորդությամբ մեր քայլերը ուղղվեն դեպի իր պահանջած խաղաղության սպասվիրական կատարումը:

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ

## ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱ

Պրագա, մարտ—ապրիլ 1968 թ.

### ԴԻՄՈՒՄ

Մենք՝ ավելի քան 500 հավատացյալներս—համայնքների անդամներ, աստվածաբաններ, հոգևորականներ, Աֆրիկայի, Ամերիկայի, Ասիայի, Ավստրալիայի, Եվրոպայի երկրների բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներ—1968 թվականի մարտի 31-ից մինչև ապրիլի 5-ը հավաքվել էինք Պրագայում՝ մասնակցելու խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարին: «Փնտրի՛ր խաղաղությունը և ձգտի՛ր նրան», «Փրկե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է» նշանաբաների ներքո մենք, որպես քրիստոնյաներ և քաղաքացիներ, խորհրդակցում էինք ամբողջ աշխարհում խաղաղության նկատմամբ մեր պատասխանատվության շուրջ, առանձին ժողովուրդների և մարդկանց բազմակողմանի զարգացման շուրջ՝ ամբողջ աշխարհում անող քաղաքական-ռազմական լարվածության պայմաններում:

**Ա.** Մենք հավաքվել ենք խաղաղության համաքրիստոնեական երրորդ համագումարին, որովհետև, հակառակ մեր բոլոր հիասթափությունների, մենք համոզված ենք, թե խաղաղությունը հնարավոր է: Խաղաղությունը հնարավոր է, որովհետև Աստված իր անսահման բարության մեջ փնտրում է մարդուն, ինչպես փնտրում էր նրան ի սկզբանե անտի: Հին Կտակարանում նա բոլոր ժողովուրդների միջից միայն մեկին ընտրեց որպես իր անխախտ հավատարմության վկա:

Մարմնացյալ Աստուծո որդի Քրիստոսի տառապանքներով և մահով նա քավեց մարդկանց մեղքերը և գթասրտորեն ներեց նրանց իրենց դավաճանությունը, եսասիրությունը և անարդարությունը:

Քրիստոսի հարությամբ նա դրեց նոր աշխարհի սկիզբը, որտեղ պետք է իշխեին խաղաղությունն ու արդարությունը, մարդը պետք է ապրեր որպես Աստուծո պատկերը, որպես նրա գործակիցը, այսինքն՝ որպես պատմության և հասարակության առաջ պատասխանատու էակ:

Խաղաղությունը հնարավոր է, որովհետև նա է նվիրել մեզ այն:

Իսկ եթե, հակառակ դրան, աշխարհում խաղաղություն չկա, ապա դա մեր մեղքն է:

Սուրբ Հոգու միջոցով նա կոչ արեց մարդկությանը դավանել իր նվիրվածությունը մարդկանց, պաշտպանել խաղաղությունը և պահպանել արդարությունը՝ անձնվիրաբար ծառայելով միմյանց:

Մենք հաճախ ենք ուրացել Աստուծո նվիրվածությունը հանձին Քրիստոսի, որովհետև չենք դավանել այդ բանը իրականում որպես բոլոր մարդկանց ընդգրկող սեր և արդարություն:

Մենք հաճախ ենք ուրացել Քրիստոսի փրկչական սխրանքը, որովհետև այն վերագրում էինք միայն մարդու ներքին կյանքին, այլ ոչ թե մարդու և համայն մարդկության ամբողջ կյանքին:

Մենք հաճախ ենք ուրացել մեր քրիստոնեական առաքելությունը, քրիստոնեական պատգամը, քանի որ մենք բացառում էինք քաղաքական կյանքը մեր՝ միայն հավատին նվիրված լինելու հանգամանքով և այդ իսկ պատճառով թույլ էինք տալիս շատ անարդարություններ հասարակական կյանքում, երբեմն մինչև իսկ դրանց պատճառ էինք դառնում:

Մենք հավատում ենք սուրբ Հոգու վերանորոգող ուժին, որը մեզ ազատություն է տալիս բոլորին ծառայելու համար և հնա-

բավորություն՝ գիտակցելու մեր պատմական խնդիրները և ընկալելու դրանք։

Խաղաղության համաքրիստոնեական համագումարը, որն առաջին անգամ գումարվել էր 10 տարի առաջ մարդկության ապագային սպառնացող ատոմային պատերազմի վտանգի առնչությամբ, այժմ էլ կանգնած է հին և նոր վտանգի առաջ, վտանգ, որը մեզնից պահանջում է պայքար՝ ի խնդիր խաղաղության պաշտպանության։ Փրկեցե՛ք մարդուն, ո՛չ միայն նրա հոգին, այլև ֆիզիկական գոյությունը ո՛չ միայն առանձին մարդու, այլև համայն մարդկությանը, որն այժմ ենթարկված է վտանգների և հետագայում ևս կարող է ենթարկվել։

Որպես մի մարդկային ընտանիքի և Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամներ, որպես պատասխանատու անձեր, որոնց տրված է մեր ժամանակաշրջանը հոգեպես ապրել և քննականորեն վերլուծել, մենք պետք է ըմբռնենք աշխարհիկ ծրագրերի, գաղափարախոսությունների և լավագույն ապագայի մասին մեր երազանքների խոր իմաստը, որպեսզի ի վիճակի լինենք ոչ-քրիստոնյաների հետ համագործակցել և նրանց հետ փոխադարձ զրույցի մեջ մտնել ի բարօրություն բոլոր մարդկանց, որպեսզի կարողանանք մեր ավանդը մուծել խաղաղության պաշտպանության, արդարության և ազատության գործում։

Խաղաղությունը հնարավոր է, որովհետև Աստված ինքն է նվիրել այն և ցանկանում է, որ լինի։

Բ. Խաղաղությունը հնարավոր է, բայց այն հնարավոր է առանձին անձանց և համայն մարդկության առաջ կանգնած խնդիրների լուծման պայմանով միայն։ Այդ խնդիրները գոյություն չունեն առանձին-առանձին. ընկերային, ազգային և գիտատեխնիկական հեղափոխության ընթացքում նրանք փոխադարձ կախվածության մեջ են։ Նրանք չեն կարող իրարից անջատ քննարկվել նաև այն պատճառով, որ ներկա պայմաններում գոյություն ունի որոշակի փոխադարձ կապ ամբողջ աշխարհն ընդգրկած ճգնաժամի հետ։ Այն ամբողջական ստրատեգիային, որը միշտ օգտագործում են այդ ճգնաժամերը՝ պատերազմի սպառնալիք ստեղծելու համար, մենք հակադրում ենք մեր ձգտումը՝ ստեղծելու «միասնական աշխարհ՝ խաղաղության, ընկերային արդարության և ազատության աշխարհ»։

Եթե խաղաղությունը, որը մեզ այնքան անհրաժեշտ է, այնուամենայնիվ հնարավոր չէ այսօր, ապա մենք ներկայումս պարտավոր ենք մեծ աչալրջությամբ հետևել ճգնաժամի հետևյալ օջախներին.

Մեզ հայտնի է արաբների և հրեաների բազմադարյան խաղաղ գոյակցությունը, հայտնի է նույնպես բազմաթիվ քրիստոնյաների մեղավոր լինելը հրեաների նկատմամբ։ Առավել ևս ամեն դավանանքի քրիստոնյաներին անհրաժեշտ է գիտակցել իրենց պատասխանատվությունը Մերձավոր Արևելքում արդար կարգուկանոնի հաստատման համար։

Մեր մոլորակի ողբերգական խնդիրների շարքին նույնպես պետք է դասել Աֆրիկայի մայրցամաքի խնդիրները, որտեղ միլիոնավոր մարդիկ ստիպված են պայքարել հանուն կյանքի պահպանման և հանուն տնտեսական և ազգային անկախության նվաճման։ Աֆրիկայում դեռևս շատ սուր կերպով է ի հայտ գալիս գաղութային իմպերիալիզմի և նեոգաղութակալության նախաձեռնությունների լուծը։

Հարավային Աֆրիկայում բազմաթիվ զարգացած երկրների փոխադարձ համաձայնությամբ շարունակում է գոյություն ունենալ և իշխել ապարտեիդի դաժան ռեժիմը։

Ռոդեզիայում Սմիթի ապօրինի իշխանության ներքո իշխում է լուծը, և շարունակվում են սևամորթների մահապատիժները։

Անգոլայում և Մոզամբիկում դեռևս շարունակվում է գաղութային դաժան ռեժիմը, որը հեղափոխական զինված շարժման առաջացման պատճառ դարձավ։

Նիգերիայում պատերազմ է սկսվել, որն արդեն կլանել է տասնյակ հազարավոր զոհերի և հնարավոր չէ ասել, թե ե՛րբ այն կվերջանա։

Հարավային Սուդանում տեղի է ունենում մարդկանց զանգվածային ոչնչացում։

Ամենուրեք Աֆրիկայում անհրաժեշտ են արմատական հեղափոխական փոփոխություններ, և մենք հատուկ համերաշխությամբ ու պատասխանատվությամբ կապված ենք այդ մայրցամաքի երկրների և ժողովուրդների հետ, որոնց ներկայացնում են բազմաթիվ պատվիրակներ 3-րդ քրիստոնեական համաշխարհային համագումարի համաժողովում։

1949 թվականից Չինական Ժողովրդական Հանրապետությունը, ամերիկյան ազդեցության տակ, դուրս էր մղված միջազգային համագործակցությունից։ Չինաստանի այս մեկուսացումը անհանգստություն առաջացրեց Հարավ-Արևելյան Ասիայում։ Ճիշտ է, «Կուլտուրական հեղափոխության» վերջին զարգացումը Չինաստանում մեզ

համար դեռևս շատ պարզ չէ, բայց հենց այդ պատճառով հետագայում մենք առավել մեծ ուշադրությամբ պետք է վերաբերվենք այն բոլորին, ինչ տեղի է ունենում Չինաստանում, որպեսզի ըստ էության հասկանանք Հարավ-Արևելյան Ասիայի ընկերային տեղաշարժերը և հեղափոխական փոփոխությունները:

Լատինական Ամերիկայում մենք նախ և առաջ նշում ենք Կուբայի շրջափակումը և Դոմինիկյան Հանրապետությունում ԱՄՆ-ի զինված միջամտությունը: Այս ցույց է տալիս մի նոր ողբերգության հնարավորության լուրջ վտանգը, նման այն ողբերգության, որն արդեն գոյություն ունի Վիետնամում, և որը տեղի ունեցավ ամբողջապես և բացառապես իմպերիալիստական ուժերի անպատասխանատվության, ինչպես նաև իշխանության ձգտելու պատճառով:

**Գ.** Խաղաղությունը հնարավոր է: Այն պետք է լինի մարդկային կյանքի անհատական և հասարակական հարաբերությունների մեջ, համայն մարդկության տնտեսական ու քաղաքական ոլորտների մեջ:

Հենց դրա համար էլ, ըստ երևույթին, աշխարհը պահանջում է, որ մարդկությունը վերջիվերջո ազատվի նոր պատերազմի մտավախությունից և հնարավորություն ստանա այդ մտավախության պատճառները ճանաչելու և դրանք հաղթահարելու:

Ներկայումս հիմնական վտանգը համաշխարհային քաղաքական և ռազմական ստրատեգիան է, որն սպառնում է ամբողջ երկրագունդն ընդգրկող ատոմային պատերազմով, նույնպես և տեղական կոնֆլիկտներում ընդունված զենքի կիրառմամբ: Այս վտանգը գոյություն ունի նույնպես այնպիսի ընկերային կացութաձևերի մեջ, որոնք պայմանավորում են ներգաղութային կախվածությունը, տնտեսական հետամնացությունը, մարդկային արժանապատվության բացակայությունը և, ոչ վերջին տեղում, նաև սովը:

Մարդկային ստեղծագործական ընդունակությունների ծաղկման և խաղաղ զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում անանուն տնտեսական ուժերը, որոնց անհրաժեշտ է քողազերծ անել, որպեսզի հնարավոր լինի նրանց դեմ պայքարել: Անհրաժեշտ է բացահայտել իմպերիալիստական տիրապետության նվաճողական ձգտման տնտեսական, ռազմական և քաղաքական ձևերի էությունը, եթե մենք ուզում ենք արթնացնել մարդկանց խիղճը և պայքարի հանել նրանց այդ ուժերի դեմ:

Որպես քրիստոնյաներ մենք կոչված ենք աջակցել ինչպես աշխարհում դրությունը ամրապնդելու ձգտումներին (այսինքն՝ իրականացնելու խաղաղ գոյակցությունը), այնպես էլ փոփոխությունների նոր քաղաքական ստրատեգիայի իրագործման ձգտումներին: Ե՛վ մեկը, և՛ մյուսը մտնում են խաղաղությանը ծառայելու մեր պարտականության մեջ: Նման ծառայությունը պետք է իրագործվի ժողովրդական շարժումների կողմից, որոնք ձգտում են մարդկային և հասարակական նոր կարգերի հաստատման:

**Դ.** Խաղաղությունը հնարավոր է, բայց իսկական խաղաղություն մեր ժամանակներում անհնար է պատկերացնել առանց համաշխարհային հասարակություն ստեղծելու, մի հասարակություն, որտեղ ընկերային և տնտեսական արդարությունը կդառնա իրականություն:

1) Երկրագնդի բնակչության երկու երրորդին վերաբերող հետամնացության հարցը իրենից չի ներկայացնում պարզապես զարգացման նախնական աստիճանի հարց, այլ շատ բարդ դրություն, որտեղ գոյություն ունեցող միջազգային տնտեսական, քաղաքական և սոցիալական կացութաձևերը կազմում են մի կախարդական շրջանակ, որի հետևանքով ունևորների և չունևորների միջև եղած անջրպետը անընդհատ մեծանում է: Այն դիմումը, որը ներկայացնում է այդ դրությունը, կրում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բնույթ և կհասցնի ամբողջ աշխարհում լայն փոփոխությունների:

2) Այդ իսկ պատճառով, խոսքն այստեղ ոչ թե օգնության կամ բարեգործության մասին է, այլ թույլ զարգացած և առավել զարգացած երկրներում մարդկային արժանապատվության պահպանման մասին է: Այն հասարակությունը, որը շահագործում է Երրորդ աշխարհը, չի վախենա իր սեփական շարքերում թույլ մարդկանց շահագործելուց: Այն սիստեմը, որն ի վիճակի չէ հարգելու ուրիշներին, յուրայիններին էլ կմերժի իրենց մարդկային իրավունքները: Տիրապետող իմպերիալիստական շրջանների ձեռքում գտնվող տնտեսական նվաճումները ծառայում են հաղթահարելու տիեզերական տարածության հեռավորությունները և մեծացնելու անջրպետը մարդկանց մեջ:

3) Այն, ինչ գոյություն ունեցող սիստեմի մեջ կոչվում է՝ օգնություն, կապված է անսահմանափակ պատասխան-ծառայությունների հետ և հարուստների կողմից աղքատ երկրների անընդհատ աղառակող շահագործման հետ: Իսկապես անշահախնդիր

օգնությունը, որ կատարում են որոշ եկեղեցիներ, երկրներ և մեծ ընկերություններ, արդեն չեն բավարարում աճող պահանջները: Ընդ որում, չպետք է նաև մոռանալ հետևյալը. հնարավոր է, որ կասկած առաջանա, թե դրամ տվողը դրանով իսկ ուզում է հանգստացնել իր խիղճը՝ չձգտելով սակայն հասարակարգի փոփոխության, հասարակարգ, որ պատճառ է դարձել աղքատության և թշվառության, և չգիտակցելով, որ դրամ տվողներից շատերը հենց իրենք այդ հասարակարգի մասն են կազմում:

4) Հեղափոխական շարժումը կարող է հանգեցնել բռնության գործադրման, սակայն, մյուս կողմից, չի կարելի մոռանալ, որ մարդու շահագործումը, հավանաբար, բռնության ամենահամառ և ամենաանտանելի ձևն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր կացության մեջ պետք է նշել, թե կարո՞ղ է արդյոք գործողությունը առանց բռնության ազդեցիկ լինել այս կամ այն սիստեմի նկատմամբ, որը վճռել է չզիջել իր ուժի դիրքը և տեղ տալ արդարությանը: Լատինական Ամերիկայի վիճակն ի նկատի ունենալով պետք է ենթադրել, որ փոփոխություն՝ առանց բռնության գործադրման հատկապես հարցական է. սակայն բռնության գործադրումը ժխտող, բայց չնայած այդ բանին, հանուն սոցիալական փոփոխությունների պայքարող քրիստոնյաների անկեղծությունը պետք է ճանաչվի:

5) Ժամանակակից համաշխարհային իրադրության մեջ եկեղեցիները պետք է հրաժարվեն այս հարցերի վերաբերյալ իրենց անտարբերությունից և խրախուսեն քրիստոնյաների գործուն միջամտությունը հանուն այդ փոփոխությունների մղվող պայքարում: Եկեղեցիները, նախ և առաջ, պետք է խուսափեն այն բանից, որ իրենց կազմակերպությունները խոչընդոտ չդառնան հեղափոխական շարժման մեջ քրիստոնյաների գործնական ընդգրկմանը, այն շարժման, որը պետք է հանգեցնի նոր հասարակության ստեղծմանը. Նրանք պետք է կոչ անեն քրիստոնյաներին՝ մասնակցելու այդ հասարակության ստեղծմանը, որտեղ ապահովված կլինեն ընկերային արդարությունը, խաղաղությունը և յուրաքանչյուր մարդու՝ իր ընդունակությունները և իր անձնավորությունը զարգացնելու հնարավորությունը:

6) ՔԽԿ-ն պետք է ստեղծի քրիստոնեական հաստատություն, խաղաղության և մարդկային զարգացման համար, որպեսզի շոշափելի ձևով իր ավանդը մուծի այն մարդկանց ձևավորման մեջ, որոնք իրենց վրա են վերցնում նոր հասարակության կառուցման և վաղվա օրվա խաղաղության ապահովման պատասխանատվությունը: Այս հաստատությունը պետք է՝

ա) Նպաստի ինչպես զարգացած, այնպես էլ ոչ զարգացած երկրների մարդկանց զարթոնքին, որպեսզի ամեն մարդ նոր հասարակության կառուցման ժամանակ գիտակցի իր պատասխանատվությունն ու իր խնդիրները.

բ) Սկիզբ դնի թույլ զարգացած երկրների՝ իրենց մեջ հաստատվելիք կայուն շփումների, որպեսզի նրանք ավելի լավ հասկանան իրար նոր հասարակության կառուցման իրենց ձգտումների մեջ, ինչպես և ստեղծի հնարավորություն զարգացած և թույլ զարգացած հասարակությունների հանդիպումների համար.

գ) Ուշադրությամբ հետևի տարբեր միջազգային համաժողովների, որոնք արծարծում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ առևտուրը և զարգացումը, և ամենուրեք, որտեղ հնարավորություն է ներկայանում, իր մասնակցությունը բերի նախապատրաստված և գործուն կերպով:

Ե. Հնարավո՞ր է խաղաղությունը: Վերջին տարիներին անընդհատ աճող երիտասարդ քրիստոնյաների փոքրամասնությունը սկսեց գիտակցել ժամանակակից աշխարհի անարդարությունները և պայքարել դրանց դեմ: Այն, ինչ սկզբից առանձին մարդկանց ձգտումն էր, վերաճել է բողոքի շարժման, իսկ այժմ արդեն դարձել է դիմադրություն: Այս պայքարի փորձից ելնելով՝ երիտասարդությունը բացահայտեց, որ այդ անարդարությունները ոչ թե մարդկանց առանձին մոլորություններն են, այլ իմպերիալիզմի միջազգային սիստեմի, ռազմամոլության և տնտեսական շահագործման հետևանքներ: Երբեմն երիտասարդների այս ըմբոստացումը համարում են զուտ բացասական մի բողոք, որը հեշտ է անտեսել: Սակայն դրա պատճառները հաճախ շատ խոր են և ծագում են հենց նույն խնդրից, որից ծագում է նաև իմպերիալիզմի և շահագործման դեմ մղվող պայքարը, այսինքն՝ փոքրիկ անանուն ընտրյալների տիրապետությունից, որոնք որոշումների ընդունման մասնակցությունից հեռացնում են նրանց, որոնց կյանքը կապված է հենց այդ որոշումների հետ: Այդ նոր գիտակցությունը ընդգծում է կացութաձևերի փոփոխության հեղափոխական մեթոդների պայքարի առաջնայնությունը: Սակայն այդ գիտակցությունը պահանջում է հանուն մարդու ազատագրման անընդհատ և անընդմեջ պայքար և դեմոկրա-

տական համագործակցության ու ինքնորոշման ձևերի ստեղծման դեռևս չիրագործված խնդիրների իրագործում: Երիտասարդ սերնդի այս շարժումը աշխարհի ընդվաճման և հասարակության մարդկայնացման իրագործման հիանալի նմուշ է:

Զ. Խաղաղությունը հնարավոր է: Վերջին համաշխարհային պատերազմի փորձը ամենուրեք արթնացրել է քրիստոնյաների խիղճը: Տասը տարի առաջ ՔԽԿ-ի հիմնումը դարձավ քրիստոնյաների խղճի զգոնության արտահայտությունը այն հրավերի դիմաց, որ նրան տվել էին այդ համաշխարհային քաղաքական խնդիրները:

1) ՔԽԿ-ն ինչպես իր ծագման ժամանակ, այնպես էլ ապագայում պետք է ընդլայնի էկումենան, հասկանալով այն ընդհանրական իմաստով, որպես Աստուծո ամբողջական ժողովուրդ, որի վրա է դրված պատասխանատվությունը ամբողջ աշխարհի համար: Այսպիսով, էկումենան իր առաջ խնդիր պետք է դնի առանց խտրության Աստուծո սիրով ծառայել բոլոր մարդկանց:

2) Այս էկումենիկ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ ենք համարում ուժեղացնել համագործակցությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և այլ քրիստոնեական մեծ կազմակերպությունների հետ՝ հանուն խաղաղության պայքարի և ամբողջ աշխարհում ընկերային և քաղաքական մեծ խնդիրների լուծման:

Մենք անկեղծ սիրով և մեծ հետաքրքրությամբ սպասում ենք Ուփսալայի համագումարի արդյունքներին: Մենք պատրաստ ենք մեր դրական ավանդը մուծել այս համագումարի աշխատանքներին, մասնավորապես խաղաղության պահպանման և մարդկությանը համաշխարհային ատոմային աղետից փրկելու պայքարին:

3) Մենք կշարունակենք մեր համագործակցությունը եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի հետ, հատկապես Եվրոպայի անվտանգությանը վերաբերող հարցում: Դրա համար էլ մենք նախապատրաստում ենք քրիստոնեական եկեղեցիների և կազմակերպությունների կոնֆերանս Եվրոպայի անվտանգության հարցերի վերաբերյալ:

4) Մենք ողջունում ենք այն հեռանկարները, որոնք բացվում են ավելի լավ համագործակցության համար հռոմեադավան քրիստոնյաների հետ: Մենք ուզում ենք ամրացնել մեր փոխհարաբերությունները նրանց հետ:

5) Մենք պատրաստ ենք ամրապնդել մեր համագործակցությունը բոլոր այն կրոնական և աշխարհիկ կազմակերպությունների հետ, որոնք ծառայում են խաղաղության, արդարության և ազատության պաշտպանությանը: Մենք գիտակցում ենք, որ քրիստոնյաները չեն կարող իրագործել մարդու փրկության գործի այս ծրագիրը առանց Աստուծո օգնության և առանց մյուս բոլոր մարդասիրական ուժերի համագործակցության:

Փնտրի՛ր խաղաղությունը և ձգտի՛ր նրան:

Փրկեցե՛ք մարդուն, խաղաղությունը հնարավոր է:



ՄԱՂԱՔԻԱ ԵՊՍ. ՕՐՄԱՆՅԱՆ

# ՀԻՆ ԷՋԵՐ «ԱՐԱՐԱՏ»-ԻՑ

## Էջմիածին

Եթե ազգային մարմնոց կազմության և նորա մասանց փոխի և սերտ կապակցության օրինակ մը փնտրեմք, կգտնեմք զայն բրգաձև մարմիններու վրա: Բրգաձևը կավարտի ի մի միայն կետ, որ գերագույնն է և յուրմն բովանդակ մարմնույն և այն մի կետն այնպես հանգչած է ստորադաս բոլոր մասերուն վրա, որ անոնցմե որն և խախտի գագաթնակետին հաստատության կդպչի. և փոխադարձաբար ամեն մի ստորադաս կետը կամ մասը - այնպես հարմարած է գագաթնակետին հետ, որ եթե անոր ուղղութենեն դուրս լինի մարմինեն ալ դուրս կսեպվի:

Մեր հայության մարմինն ալ չէ կարող այդ նմանության խստութենեն շեղիլ, և որք հայության մեջ են կամ լինիլ կկարծեն, անհրաժեշտ է որ գագաթնակետին հարաբերութենեն և ուղղութենեն շեղին, և տակավին, մարմնույն ամբողջության մեջ մնալ կարողանան («Արարատ», 1888, թիվ Ա, էջ 7):

* * *

Անհավասիկ խոսքերնուս նպատակին հասած եմք, և պետք է ըսեմք թե ի՞նչ է հայության բրգաձևին հաստատության և յուման գագաթնակետը, որու ուղղությունը պիտի գծե հայության պարունակությունը, և որու ազդեցությունը պիտի կազմե հայության մասերը:

Գագաթնակետը ս. Էջմիածինն է:

Եվ զայդ կարտասանեմք առանց բացատրության և առանց զարտուղության: Արդյոք ս. Էջմիածնեն զատ ուրիշ մը կարող եղե՞ր է, կամ կարող է՞, կամ կարող պիտի լինի՞ այդ դերը ստանձնել. այդ խնդիրներն մեզի համար ավելորդ խնդիրներ կսեպվին. քանի որ իրական գործերու լուծումը իրողական մեկնությամբ կդրվի, և ոչ հնարավորությանց բացատրությամբ:

Մեր գոյության խորհուրդը կրոնքն է, և գաղտնիքը եկեղեցին է. հայը հայ է զի հայադավան է, առանց այնր հայը հայությունը թողեր է և հայության համար կորեր է. թող խոսեն կրոնափոխությամբ ազգափոխ եղածներու տեղերը ու թիվերը: Իսկ հայուն կրոնքին և եկեղեցվույն յումը՝ անհակառակ Էջմիածինն է:

Մեր գոյության նշանը գործողությունն է, և կյանքը գործունեությունն է: Հայը հայ է զի հայաբար կգործե. առանց այս պայմանի գործունեությունն նպատակեն դուրս է և վնասակար է: Թող խոսին օտարասիրությամբ տարադեպ նպատակներու ծառայողներուն հիշատակները: Իսկ հայուն նպատակին ուղղությունը բովանդակողը՝ անհակառակ Էջմիածինն է:

Մեր գոյության միջոցը տկար զորությանց միավորության հարկավորությունն է: Հայը հայ է՝ երբ հայ ընկերաց միության մեջ է. արտաքո այդ միության աշխատանքը իզուր չարչարանք է, առանց օգնության մնալը անտարակույս վտանգ է: Իսկ հայուն սեպհական զգացմանց միակ կեդրոնը՝ անհակառակ Էջմիածինն է:

Մեր գոյության արդյունքը մեր քրտանց բեղմնավորությունն է, մեր պարտեզին պըտղաբերության աճումն է: Հայը հայ է, երբ հայ պարտեզին մշակն է և երբ յուր հասուցած պտուղը օտար թույնով խանգարված չէ: Թող խոսին հայության անվամբ գործված շատ մը բաներու պատճառած անզգայի վնասները: Իսկ հայուն անխառն քաղցրություն պատրաստողը՝ անհակառակ Էջմիածինն է («Արարատ», 1888, թիվ Ա, էջ 8—9):

•
• •

Մեր եկեղեցվո հովվությունը հիմնական չորս իշխանական աստիճաններ ունի: Գերագույնն է Ամենայն Հայոց Հայրապետ ս. Էջմիածնա կաթողիկոսը: Երկրորդական են Սսո և Աղթամարա մասնավոր կաթողիկոսները և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսո պատրիարքները: Երրորդական են արքեպիսկոպոսները կամ մետրապոլիտները, և անոնց տեղը կբռնեն երբեմն ընդարձակագույն վիճակներու առաջնորդները: Վերջին աստիճանը ունին վիճակներու առաջնորդները երբեմն եպիսկոպոս և երբեմն լոկ վարդապետ («Արարատ», 1888, թիվ Բ, էջ 68):

•
• •

Ո՞ւր էր թե մեր ցրվյալ հայության ամեն կողմերեն առ Մայր Աթոռն առաքելական սիրո վկայություններ, քաղձանաց բացադրություններ, հոժարության արտահայտություններ, ընդունելության վստահություններ, աշխատության խոստումներ, զոհողության ապահովություններ հասնեին առատորեն: Ո՞ւր էր թե հարաբերության կապեր առավելապես մշակվեին և զորանային:

Հայնժամ մեր միության նվիրական գագաթնակետը կբարձրանայր երկնային փառոք: Առաջին հոդվածին մեջ հիշված օրինակնիս փոխադարձ կապեր կպահանջե. գագաթնակետը կպսակե բոլոր մասերը, այլ ներքի մասերն են՝ որ ի վեր կբարձրացնեն գագաթնակետը:

Ս. Էջմիածին պսակ է ամեն հայուն, ամեն հայ հաստատություն է ս. Էջմիածնին («Արարատ», 1888, թիվ Բ, էջ 71):



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Ապրիլի 18-ին՝ Հինգշաբթի.**—*Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ուղեկցությամբ բարեշ. Եղիշե սրկ. Բաղրամյանի, մեկնեց Թբիլիսի։*

*Գեր. սրբազանը նույն օրը հասնելով առաջնորդանիստ ս. Գևորգ եկեղեցին, կատարեց Ոտնալվայի արարողությունը և երեկոյան, Խավարման ժամերգությունը, քարոզեց «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» բնաբանով։*

*Գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսը ապրիլի 21-ին, կիրակի օրը, նույն եկեղեցում մատուցեց ս. Հարության պատարագը և քարոզեց «Քրիստոս յարեաւ ի մեռելոց. անդրանիկն ի ննջեցելոց» բնաբանով։*

*Գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը ապրիլի 22-ին, երկուշաբթի օրը, վերադարձավ Մայր Աթոռ։*

*Այսօր Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը մեկնեց Օրջոնիկիձե՝ մասնակցելու հին տոմարով Ավագ շաբաթվա և Զատկի տոնակատարություններին։*

*Հոգ. հայր սուրբը ճրագալույցին մատուցեց ս. պատարագ և քարոզեց «Խորտակեաց զդրունս դժոխոց և ելոյծ զզօրութիւն մահու և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան» բնաբանով։*

*Հաջորդ օրը, ապրիլի 21-ին, Զատկի կիրակի, հոգ. տ. Նարեկ վարդապետը պատարագեց և քարոզեց «Հաւատարիմ է բանս զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին և կեցցուք» բնաբանով։*

*Հոգ. հայր սուրբը ս. պատարագ մատուցեց նաև ապրիլի 24-ին՝ Նահատակաց հիշատակի օրը, և քարոզեց «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին, երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» բնաբանով։*

* * *

**Ապրիլի 21-ին՝ կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակե).**

*Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը։*

* * *

**Ապրիլի 28-ին՝ կիրակի.—Բ կիր. Աշխարհամատրան (Կանաչ կիրակե).**

*Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը։*

* * *

**Մայիսի 5-ին՝ կիրակի.—Գ կիր. (Կարմիր կիրակե).**

*Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը և քարոզեց «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են քարոզութիւնք մեր և ընդունայն են հաւատք ձեր» բնաբանով։*

* * *

**Մայիսի 12-ին՝ կիրակի.—Դ կիր. Երևման Ս. Խաչի.**

*Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը և քարոզեց «Այսօր ընդ ամպս լուսաւորս երեւեալ Նշան Տէրունական խաչին» բնաբանով։*

* * *

**Մայիսի 19-ին՝ կիրակի.—Ե կիր.**

*Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։*



## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 24-ին՝ չորեքշաբթի, ԺԱ օր Ցինանց.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի:

Օրվա խորհուրդը Մայր տաճարի սրբազան կամարների տակ էր հավաքել հավատացյալների մի հոծ բազմություն, որը ս. պատարագի հոգեպարար հնչյունների տակ ապրում էր իր նահատակ հայրերի բյուր տառապանքները:

Ժամը 10.30-ին սկսվեց ս. պատարագի արարողությունը: Պատարագիչն էր արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը և հավատացյալների բազմությունը սգահանդես թափորով ուղղվեցին դեպի ս. Էջմիածնի շրջափակում մեծ Եղեռնի նահատակների հիշատակին կառուցված հուշարձանը, ուր կատարվեց հոգեհանգիստ:

Օրվա հիշատակի տոնախմբությունը ավարտվեց ներկաների կողմից խմբովին երգված «Հայր մեր»-ով և գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով:



ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՇԱՏԱԽԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Շատախը Վասպուրականի գավառներից էր, որն ընկած էր Վանա լճի հարավային ափերով ձգված հայկական Տավրոս լեռնաշխարհում: Գավառն իր մեջ ընդգրկում էր պատմական Ռշտունիքից Բուժունիքը, Մոկաց աշխարհից՝ Արքայից և Ջերմաձոր գավառները, Անձնացյաց երկրի մեծ մասը: Շատախն ուներ 110 գյուղ, որոնցից 58-ը հայաբնակ, մնացածը՝ քրդաբնակ: 1915 թվականի տվյալներով հայ բնակչության թիվը շուրջ 10 հազար էր:

Շատախի կենտրոն Թաղ ավանը գտնվում էր գավառի երեք գլխավոր ձորերի միացման հանգուցակետում Արևելյան Տիգրիսի գեղատեսիլ ափին: Թաղը զուտ հայաբնակ մի ավան էր:

Տիգրիսի ձախափնյա առավել արգավանդ գետահովիտն ու Տաղու լեռնադաշտը, որոնք հնուց ի վեր պատկանել էին հայերին, վերջին շրջանում բնակեցված էին Արտուշի աշիրաթի քրդական քոչվոր, կիսաքոչվոր և նստակյաց ցեղերով: Օսմանյան կառավարության հրահրումով արտուշցիները աստիճանաբար այդ վայրերից վտարել էին նրա բնիկ տերերին և յուրացրել նրանց ավանդական հողերը: Համառ մաքառումների և ծանր զոհերի գնով հայերին հաջողվել էր այդ գավառամասում պահպանել հայկական Քըրմենց, Առոսկի, Կվերս, Տղասպար, Առիգոմ, Ենղջանց, Վախրով, Մաքուշկ և Մազրա գյուղերը, որոնց մի մասում արդեն բնակվում էին նաև քրդեր:

Քրդաբնակ գյուղերից շատերը դեռ պահպանում էին իրենց հայկական անունները՝ Խարենց, Հացիս, Մառնոց, Նորհանդ, Արխանիս, Պաղք, Մուղ, Գոմեր և այլն:

Հայրենի գյուղերից վտարված շատախցիները բնակություն էին հաստատել Տիգրիսի աջափնյա լեռնահովիտներում ու ձորերում, և Տիգրիս գետը վերածվել էր հայկական ու քրդական գյուղերի միջև բնական մի սահմանի:

Շատախցիներն իրենց նոր բնակավայրերում կարողանում էին համախմբվել, նվաճել կիսանկախություն և սանձել արտուշցիների զավթողական հետագա քայլերը: Շատախցիները «Միշտ ալ զինական դիմադրությամբ կծառանային տաճկական և քրդական բռնակալության դեմ»[1]:

Օսմանյան բռնակալության հարաճուն ճնշումների հետևանքով 1870-ական թվականների վերջերին Շատախը կորցնում է իր կիսանկախությունը: Բայց նոր պայմաններում շարունակվում է նրանց ազատագրական պայքարը՝ ավելի կազմակերպված ձևով: Դրան նպաստում է 1880 թվականին գավառում դպրոցական ցանցի զգալի ընդլայնումը: Դպրոցներ են հիմնվում ոչ միայն Թաղում, այլև գյուղերի մեծ մասում, ուր աճում ու դաստիարակվում է Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկի), Միքայել Նալբանդյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, հայր Ղևոնդ Ալիշանի, Րաֆֆու, Ռ. Պատկանյանի հայրենաշունչ ստեղծագործություններով ոգեշնչված մի սերունդ:

Օսմանյան չարաշուք տերության և նրա գործիքը դարձած համիդեական հրոսակախմբերի դեմ մղած տևական պայքարում կոփվում է Շատախի հայությունը: Շատախը դառնում է հայ ազգային շարժման նշանավոր օջախներից մեկը Արևմտյան Հայաստանում և հայապահպանման անառիկ մի պատվար՝ Վասպուրականի հարավ-արևմտյան լեռնաշխարհում: Բռնատիրության դեմ ինքնապաշտպանական կռիվներում աճում ու մարտական մկրտություն են ստանում շատախցի բազմաթիվ շինականներ ու արհեստավորներ, որոնց անունները ակնածանքով էին տալիս Վասպուրականում և նրա սահմաններից դուրս: Արմենակ Նկարյանն իր հուշերում նկատել է, թե Շատախը Վասպուրականի «Զեյթունն էր, մաքուր ու կտրիճ հայությամբ մը և, հետևաբար, միշտ փուշ թշնամիի աչքին»[2]:

Շատախի ազգային շարժման հնագույն և նշանավոր դեմքերից են Կաճեթ գյուղացի Չաթոն (սպանված Դերխավանքում 1884 թ.), Շերոն (զոհված

---

[1] Աճեմյան Հայկ, Վասպուրական, Վենետիկ, 1930, էջ 387:

[2] Նկարյան Արմենակ, Հուշեր, Գահիրե, 1947, էջ 188:

Նույն Վանքի շրջանում 1895 թ.), Մուքոն (զոհված Հայոց ձորի Կուռապաշ գյուղում 1889 թ.), Հովհաննես Ավետիսյանը (զինատար խմբի հրամանատար, զոհված Աբաղայի Խաչան գյուղի մոտ 1898 թ.), Կաղպի գյուղացի Վահրամ Ղազարյանը (զինատար հեծյալ խմբի հրամանատար, զոհված Սարայի Ռազի գյուղի մոտ 1904 թ.), Անտիկին գյուղացի Բագին Պետրոսյանը (զոհված Կոտոլի ձորում 1918 թ.),



Շատախ գավառի քարտեզը

Կոռովանք գյուղացի Հարություն Գլանյանը (մահացած Իրաքում 1920 թ.), Հինենց գյուղացի Ազո Հարությունյանը (վախճանված Աշտարակում 1937 թ.), Կաղպի գյուղացի Մուրադ Փիրումյանը, Առեղ գյուղացի Թովմաս Քանդարյանը (Դինո) և ուրիշներ։

1896 թվականի Վանի հերոսամարտին մասնակցել են բազմաթիվ շատախցիներ, որոնցից քաջի անուն են վաստակել Կաղպի գյուղացի Փոխիկը (զոհված Գարահիսարի լանջին 1896 թ.), նույն գյուղացի Մընջոն, Անտիկին գյուղացի Մուրադ և Սարգիս եղբայրները, Խումար գյուղացի Ռաշոն, Ծերոն, Ջնդոն (բոլորն էլ նահատակված), նույն գյուղացի Աբրահամ Մանուկյանը (ուսուցիչ), Թաղեցի Հովսեփ Զաքարյանը, Աբրահամ Տեր-Մարգարյանը, Մուրադը և շատ ուրիշներ։

1895—1896 թվականների համիդյան արհավիրքների օրերին ծանր փորձություն ապրեց նաև Շատախի հայությունը։ Արտոշցի համիդեական հրոսակախմբերը Միրմհեի և Ճարբ աղայի գլխավորությամբ անակնկալ հարձակումներով հրկիզեցին ու ամայացրին գավառի Խումար, Կոճեր գյուղերը, լիովին կողոպտեցին հայկական բոլոր բնակավայրերը։ Ունեզրկված բնակչության մի մասը ապաստանել էր լեռնային կածաններում, անտառներում, մյուս մասը կենտրոնացել էր Թաղ ավանում ու Փեսանդաշտում։ Այս վայրերը շուտով դարձան Շատախի հայության զինված ինքնապաշտպանության օջախներ։ Ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ Շատախի հայությունը փրկվեց զանգվածային ջարդերից։ Հայ զոհերի թիվը գավառում հաշվվում էր 248 մարդ։

Համիդյան ճախճիրներին հաջորդեց հայկական և համիդեականություն չընդունած քրդական գյուղերի հողերի հափշտակումը, գյուղացիների բռնի ճորտացումը։ Գավառում մոլեգնում էր սովը։ Շատախի հայերին օգնության հասան գավառի ոչ-համիդեական քրդերն ու Մոկսի հայերը։ Վերջիններս զերծ էին մնացել օսմանյան ջարդերից՝ Մոկսի քուրդ ցեղապետ Մուրթուլա բեկի օգնությամբ։

1895—1896 թվականներին արևմտահայերի նկատմամբ օսմանյան բռնակալության կազմակերպած ահավոր կոտորածները կարևոր դաս եղան Շատախի հայ ազգային գործիչների համար։ Օսմանյան «քաղաքակիրթ» կառավարության հանդեպ նրանց չնչին հույսերն անգամ իսպառ մեռան։ Այս շրջանում արդեն պարզ դարձավ, որ օսմանյան երկրի չարիքների պատճառը սուլթանական ռեժիմն է։ Թուրք ազնվականության ներկայացուցիչները երկիրն իսլամացնելու մոլուցքով բռնված՝ հայկական բնակավայրերը դարձրել էին խոշտանգված դիակների համատարած գերեզման։ Այս պայմաններում միամտություն էր հուսալ, թե հնազանդության և հավատարմության միջոցով կարելի կլինի զերծ մնալ թուրքական արհավիրքներից, երաշխավորել հայության գոյատևությունը։ Ժողովրդի հավանական փրկության համար մնում էր միակ ճշմարիտ ուղին՝ զինված ինքնապաշտպանությունը։ Հենց այս ուղին դարձավ առավել հեռատես ու բանիմաց ազգային գործիչների նշանաբանը։ Մինչև ընդմիշտ այդ ճանապարհի վրա կանգնեց նաև Շատախի հայությունը։ Շատախում այս դեպքերի ազդեցությամբ ժողովրդա-ազատագրական շարժումն առավել իմաստավորվեց, հասունացավ և վերածվեց սուլթանական ռեժիմի դեմ գիտակցված պայքարի։

Շատախի հայ ղեկավար գործիչները համառ աշխատանք ծավալեցին քուրդ բնակչության հետ միասնական ճակատ ստեղծելու համար։ Նրանց հաջողվեց բարեկամական հարաբերություններ հաստատել քրդական ոչ-համիդեական ցեղերի հետ։ Փոխադարձ օգնության, եղբայրական լավագույն փոխհարաբերություններ ստեղծվեցին Մոկաց ամիրա Մուրթուլա բեկի և նրան ենթակա ամբողջ քուրդ բնակչության հետ։ Այս իրադրությունը հնարավորություն տվեց, որ 1907 թ. աշնանից Շատախում լայն շարժում սկսվի ճորտատիրության լուծը թոթափելու համար։ Հայ շինականներն ամբողջ գավառում հրաժարվեցին իրենց բերքի զգալի մասը հանձնել համիդեական ինքնակոչ «տերերին»։ Նրանց ներկայացուցիչներին դուրս վտարեցին հայերենի գյուղերից՝ Կոռովանք, Նիծանց, Հինենց, Ջնուկ, Կանեթ, Կաղպի, Արմշատ և այլ գյուղե-

րում տեղի ունեցան զինված ընդհարումներ, որոնք վերջացան հայերի հաղթանակով: Գավառի մի շարք քրդական գյուղերի բնակչությունը, հետևելով հայերի օրինակին, նույնպես սկսեցին վտարել իրենց գյուղերը ճորտացնող համիդեական աղաներին:

Ճորտատիրության դեմ գավառում ծավալված զինված պայքարը գլխավորում էին Ծիծանց գյուղացի Գյուլամիր Մուրադյանը, Կոռովանք գյուղացի Հարություն և Աբրո Գլանյանները, Հինենց գյուղացի Ավո Հարությունյանը, Արմշատ գյուղացի Մելիք Աբրահամյանը, Ջենուկ գյուղացի Միրզո Բալյանը, Կաղալի գյուղացի Արշակ Մկրտչյանը և ուրիշներ:

Օսմանյան սահմանադրական կարգերի հռչակումը ուրախությամբ ընդունվեց նաև Շատախում: Բայց գավառի փորձված գործիչները մեծ հույս չկապեցին այդ սահմանադրության հետ և շարունակեցին հոգալ ժողովրդի ինքնապաշտպանության մասին: Շատախի մարտական խմբերը դուրս չբերվեցին ընդհատակից. բնակչությունն իր աղքատիկ միջոցներով աշխատում էր զենք և ռազմամթերք ձեռք բերել: Այդ օրերին «Շատախ գավառի 10 հազար գյուղացիությունը մոտ 7 հազար օսմանյան ոսկի տրամադրեց իր ինքնապաշտպանության գործին»[3]:

1908 թվականից գավառում սկսեցին լույս տեսնել «Տիգրիս» և «Անկախ Տիգրիս» գաղտնի խմորատիպ պարբերականները: Թաղում ցուցադրվում էին հայրենասիրական ներկայացումներ: Ազգային գործիչների ջանքերով գյուղերում կազմակերպվում են երիտասարդության զինավարժություններ և դասախոսություններ: Հովսեփ Չարարյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է գավառի ջուլհակների արհեստագործական միություն:

Այս բոլորը վկայում են Շատախի հայ ղեկավար գործիչների հասունության և հեռատեսության մասին: Գավառի տարբեր ազգային կազմակերպությունների միջև պայքարը երբեք սուր բնույթ չէր ընդունում: Վտանգի ժամին, թշնամու դեմ նրանք իրենց քաղաքական նեղ շահերը կարողանում էին ենթարկել ժողովրդի ընդհանուր շահերին և հանդես գալ միասնաբար:

Կիլիկիայի հայության 1909 թվականի ապրիլյան աղետն ու Ադանայի ջարդերը եկան վերջնականապես մարելու օսմանյան սահմանադրության հետ կապված Շատախի հայության աղոտ հույսերը: Դրան հաջորդող շրջանում որքան ավելի պարզորոշ էր դառնում իթթիհադի նոապետության թշնամանքը հայ ժողովրդի նկատմամբ, այնքան ավելի զգաստ քայլերի էին դիմում Շատախի հայ գործիչները: Դեռ 1912 թվականին Թաղում գումարված մարտական խմբերի ղեկավարների ժողովը որոշում է՝ «Ի նկատի ունենալով, որ Օսմանյան սահմանադրությունը և նրա ղեկավար իթթիհադ կուսակցությունը թշնամական դիրք են բռնած հայ ժողովրդի շահերի նկատմամբ, անհրաժեշտ է ինքնապաշտպանությանը զարկ տալ և պատրաստվել դիմագրավելու ամեն մի անակնկալ»[4]:

Նույն թվականին գավառում հիմնվում է ինքնապաշտպանության մարմին, որն զբաղվում է զենքի, զինամթերքի հայթայթման, ժողովրդին զինելու հարցերով:

1915 թվականի հունվարին Թաղում քննվում ու հաստատվում է գավառի ինքնապաշտպանության նախապատրաստման ծրագիրը: Ընտրվում է զինվորական ղեկավար մարմին, սահմանվում են պաշտպանական դիրքերը, տեղաբաշխվում են մարտական խմբերը, զինամթերքի և պարենի պաշարներ են կուտակվում հենակետային դիրքերում: Ավելի ջերմ հարաբերություններ են հաստատվում քուրդ ռայա բնակչության, Մուրթուլա բեկի և իր ցեղի հետ: Մուրթուլա բեկը հանձն է առնում թուրք-համիդեական ուժերին արգելել Մոկաց գավառի սահմաններից հարձակվելու Շատախի վրա, իսկ նահանջի դեպքում խոստանում է ապաստան տալ հայերին: Այս իրադրությունը զգալիորեն ամրացնում է Շատախի հայության դիրքը իր բնաշխարհում: Շատախը դառնում է մի դժվարամարս պատառ օսմանյան գիշատչի համար:

Թուրքական կառավարությունը «միջոցառումներ» էր ձեռնարկել, որպեսզի Շատախի հայության բնաջնջումը չձախողվի: Կուսակալության հրամանով քուրդ զորակոչիկներից ովքեր հանձն էին առնում մասնակցելու հայկական կոտորածներին, ազատվում էին ռազմաճակատ մեկնելուց: Դա շահագրգռում էր քրդերին, որովհետև ռազմաճակատի մահվան վտանգի փոխարեն այստեղ նրանց սպասում էր «դյուրին» հաջողություն ու առատ ավար: «Շատախի մի քանի աչքի զարնող քրդերի հետ ունեցած խոսակցության ատեն մարդիկ ազատ կերպով կխոստովանեին, որ իրենց նախընտրելի կհամարեին հայերին, որովհետև նրանց սպանելով իրենք այսօր, փոխանակ կռվի առաջին գծի վրա լինելու, իրենց զինվորական ծառայությունը կկատարեն Շատախ՝ իրենց տների մեջ»[5]: Այս ձևով Շատախի հայության դեմ դուրս էին եկել Արտոշի աշիրաթի մեջ մտնող քրդական մոտ 50 ցեղեր ու ցեղախմբեր: Նրանց միացել էին Բարվարի, Սղերդի, Խիզանի և Դիարբեքիրի հարավ-արևելյան շրջաններում ապրող քրդական ցեղերից շատերը:

Շատախի դեմ հանված էր նաև Վանում եղած թուրքական զորամասերից մեկը: Շահեն Աբրիկյանի վկայությամբ՝ Շատախի վրա կենտրոնացված էր մոտ 8 հազարի հասնող զինվորական ուժ[6]:

Պատերազմի դեռ առաջին օրերից թուրքական կուսակալությունը Շատախի Սետիկին և Գոմեր գյուղերում կազմակերպել էր նոր պահակախմբեր, որոնք Խան, Սակ, Խումար գյուղերի ու Թաղի պահակախմբերի հետ միասին հսկողության տակ էին վերցրել գավառի հայկական գյուղերը ու հաղորդակցության

---

[3] Անճեմյան Հայկ, Վասպուրական, Վենետիկ, 1930, էջ 62 (Ա. Մեսրոպյանի հուշերը):

[4] Անճեմյան Հայկ, Վասպուրական, էջ 62—63:

[5] Տիգրան Բաղդասարյան, անտիպ հուշեր՝ գրված 1915 թ. Աշտարակում (բնագիրը՝ Երևանի Պետ. թանգարանի արխիվում):

[6] Տե՛ս Վան-Տոսպ, 1916 թ. № 24, էջ 8:

ճանապարհները։ Երկնապատկվել էր մեր մարտական խմբերի անձնակազմը։ Թաղի պահակակազմը 90-ից հասցվել էր 100 մարդու։ Կազմակերպվել էր նաև մի շրջիկ պահակախումբ, որը պատժիչ արշավախմբի դեր էր կատարում։

1914 թվականի դեկտեմբերից սկսած, իրար հաջորդող տագնապալի լուրեր էին հասնում Շատախ՝ Սարայի Բաշկալեի, Աղբակի, Բերկրու, Թիմարի, Կարկառի, Ալջավազի և այլ գավառներում թուրք-համիդեականների սանձազերծած սոսկալի վայրագությունների մասին։ Շուտով հայտնի է դառնում թուրքական բանակ զորակոչված հայ երիտասարդների զինաթափման ու զանգվածային գնդակահարությունների փաստը։ Թուրքական բանակ զորակոչված թաղեցի 75 երիտասարդներից 65-ը գնդակահարվել էին՝ առանց որևէ պատճառի։ Մնացած տասը մեծ դժվարությամբ փախուստի էին դիմել, հասել տուն։

Մարտի սկզբներին իբրև հյուր Խումար գյուղի պահակատուն է հրավիրվում Կաճեթ գյուղի ինքնապաշտպանության ղեկավար Պետրոս Տեր-Հովհաննիսյանը, որը դեռ պահակատան շեմին ոտք չդրած, դավադրաբար սպանվում է՝ իրեն ուղեկցող ընկերոջ հետ միասին։ Մարտի կեսերից, զորակոչից խուսափողներին հայտնաբերելու և պատերազմական հարկերը գանձելու պատրվակով, թուրքական պատժիչ արշավախումբը ոտքի տակ է տալիս գավառի բոլոր հայկական գյուղերը։ Զարհուրելի վայրագություններ են կատարվում Կաճեթ, Ջնուկ, Հինենց, Կաղպի, Սակ գյուղերում։

Այս դեպքերն անշուշտ հայության համընդհանուր կոտորածի նախանշաններն էին, որոնց հանդեպ չէր կարելի անտարբեր մնալ։ Թեև դաշնակցության նահանգային կենտրոնը հրահանգում էր խաղաղ մնալ, բայց շատախցիների համբերությունը սպառվում էր։

Ապրիլի սկզբներին թուրքական ոստիկանության ծառայող քուրդ Բենոն խմբապետ Ակատ Սիմոնյանին հասցեագրած գաղտնի նամակով հայտնում է թուրքական կառավարության ծածուկ հրամանի մասին՝ Շատախի հայերին իսպառ ոչնչացնելու վերաբերյալ։ Այդ կարգի նախազգուշացումներ լինում են նաև ուրիշ քրդերի միջոցով։

Ապրիլի 10-ին կառավարությունը ձերբակալում է Շատախի աչքի ընկնող 6 հայ գործիչների, այդ թվում նահանգային ժողովի անդամ, գավառի հայկական դպրոցների տեսուչ Հովսեփ Չոլոյանին։ Խուզարկության ընթացքում նրա մոտ հայտնաբերվում են գավառի հայկական մարտական խմբերի ցուցակները, տվյալներ զենքերի ու փամփուշտների քանակի մասին։

Ինքնապաշտպանության զինվորական մարմինը պահանջում է գավառապետից՝ կալանքից ազատել ձերբակալվածներին։ Գավառապետ Համդի բեյը, հակառակ դրան, խնդիր է դնում՝ անհապաղ հանձնել բոլոր զենքերը և զորակոչի ենթակա երիտասարդներին։ Կողմերի հանդիպումներն ու բանակցությունները ավարտվում են առանց արդյունքի։ Ստեղծվում է լարված դրություն. զենքերը հանձնել՝ նշանակում էր թուրք դահիճների «խղճմտանքին» ենթարկել գավառի անզեն, անպաշտպան բնակչությանը. չհանձնել՝ նշանակում էր ընդունել կառավարության մարտահրավերը և դիմել զենքի։

Ապրիլի 11-ին Թաղում գումարվում է ազգային գործիչների գաղտնի ժողով, ուր քննվում է այս կացությունից ելք գտնելու հարցը։ Ժողովականները միաբերան պահանջում են չհանձնել զենքերը, գավառում հայտարարել զինվորական դրություն, մարտական խմբերը դուրս բերել ընդհատակից, կռվել մինչև վերջին մարդը և վերջին փամփուշտը։ Ժողովը հաստատում է այս պահանջները։ Ընտրվում է զինվորական նոր շտաբ, որի մեջ մտնում են Տիգրան Բաղդասարյանը, Սամվել Մեսրոպյանը, Ակատ Սիմոնյանը, Գյուլամիր Մուրադյանը, Հովիկ Պապիկյանը և Թովմաս Գալստյանը։ Ստեղծվում է մատակարարման հանձնաժողով՝ Հմայակ Չոլոյանի և Հմայակ Բաղդասարյանի գլխավորությամբ, զինվորական արհեստանոց՝ Կարապետ Դադոյանի ղեկավարությամբ. եկեղեցու գավիթը տրամադրվում է զինարհեստանոցին։ Կազմակերպվում են ամրաշեն բանվորների, սուրհանդակների, հիվանդապահների ջոկատներ։

Ժողովը որոշում է Թաղ ավանը դարձնել գավառի ինքնապաշտպանական գլխավոր հենակետ։ Թաղը հայկական գյուղերը միացնող կարևոր ճանապարհների նախադուռն էր։ Թաղում պիտի վճռվեր պաշտպանական կռիվների հաջողության կամ պարտության բախտը։ Թաղի վրա կենտրոնացված էին թշնամու գլխավոր ուժերը։ Ժողովը որոշում է Թաղում ստեղծել պաշտպանական վեց դիրք՝ Գարունյանի տուն-դիրքը՝ 20 ռազմիկներով (ղեկավար՝ Չոլո Պետրոսյան), քարե կամուրջի դիրքը՝ 13 ռազմիկներով (ղեկավար՝ Տերտերանց Գրիգոր), փայտյա կամուրջի դիրքը՝ 14 ռազմիկներով (ղեկավար՝ Շահեն Աբրիկյան), Գլկանց տուն-դիրքը՝ 17 ռազմիկներով (ղեկավար՝ Միլան Մուրադյան), Տեր-Մարգարյանի տուն-դիրքը՝ 20 ռազմիկներով (ղեկավար՝ Հովսեփ Գարունյան), Ազգային այրի դիրքը՝ 6 ռազմիկներով (ղեկավար՝ Տղասպարցի Զիրո)։

Նշված դիրքերը փակում էին թշնամու ճանապարհը Թաղի միջով Շատախից դեպի Վան, խզում էին նրա կապը Տիգրիսի աջափնյա վայրերի հետ, ուր կային հայկական 50 գյուղեր, և հսկողության տակ էին պահում թշնամու զինված ուժերի տեղաշարժերը Թաղի մատույցներում։

Ժողովի որոշմամբ Փեսանդաշտի գավառամասը նույնպես վերածվում է պաշտպանական կարևոր հենակետի, որտեղից սպասվում էր թուրքական բանակի հարձակումը։ Վանից դեպի Շատախ տանող ճանապարհները անցնում էին Արտոսի Բարատոտիկ և Կարաբլախ լեռնանցքներով ու Փեսանդաշտի լեռնահովտով։ Փեսանդաշտի և Գավաշի միջև ընկած Արտոսի լեռնաշղթան իշխող դիրք էր, որտեղից կարելի էր փակել թուրքական զորքերի ճանապարհը Վանից դեպի Շատախ։

Փեսանդաշտում կազմակերպվում է ինքնապաշտպանության առանձին շտաբ՝ Լևոն Շաղոյանի և Մնձակ գյուղացի Ասպո Գրիգորյանի ղեկավարությամբ։

...տարի կազմում ընտրվում են նաև Մկրտիչ Մա-...ոնյանը (Կարկառի Հաղթ գյուղից), Միհրան Չա-...ղյանը (Շատախի Կաճեթ գյուղից), Արշակ Ակա-...րդյանը (Կարկառի Եղեգիս գյուղից):

Այդ հատվածի պաշտպանությունն ամրացնելու ...պատակով Շատախի մարտական ուժերից առանձ-...ացվում են 85 զինյալ, որոնք Գավաշից և Կարկառից ...ված 75 ռազմիկների հետ միասին տեղաբաշխվում ...4 գլխավոր դիրքերի վրա. Բարատտիկի լեռ-...անցքի դիրքը՝ 80 ռազմիկներով, Լևոն Շաղոյանի և ...սպո Գրիգորյանի հրամանատարությամբ, Կա-...րքյախի լեռնանցքի դիրքը՝ 95 ռազմիկներով, Սոր-...տողցի Մուրադի հրամանատարությամբ, Շահրուրա...րդի դիրքը՝ 25 ռազմիկներով, Բագիկ Պետրոսյա-...ն հրամանատարությամբ, և Նառ գյուղի դիրքը՝ 15 ...ազմիկներով, կարկառցի Մանուկի հրամանատա-...րությամբ:

Շատախի ինքնապաշտպանական հանգույցներից ...նաև գավառի հարավ-արևմտյան ծայրամասերում ...ված Արմշատ գյուղը, որտեղից սպառնում էին ...արվարի, Սղերդի և Խիզանի թուրք-համիդեական ...ակախմբերի հարձակումները: Այդ հատվածի ...աշտպանությունը հանձնարարված էր Արմշատ և ...սենք գյուղերի մարտական խմբերին, որոնք միա-...րում էին մոտ 100 ռազմիկ: Ինքնապաշտպանու-...ան ղեկավար էր նշանակված արմշատցի Մելիք ...ահամյանը:

Պաշտպանական մի շարք դիրքեր են ստեղծվում ...գրիսի ափերին ընկած գյուղերում և կամուրջների ...ա: Դրանցից Խոլբոսի կամուրջի դիրքը 35 ռազ-...միկներով փակելու էր հարավային շրջաններից թուր-...րի հարձակման ճանապարհը Թաղ ավանի վրա ...ղեկավար՝ Ալո Հարությունյան), Ռելա գյուղի դիրքը ... ռազմիկներով պաշտպանելու էր Միվկատան կա-...մուրջը և Մոկաց ճանապարհը (ղեկավար Սեթ Բո-...յան), Սոզվանց գյուղի դիրքը 18 ռազմիկներով ...պաշտպանելու էր շրջկենտրոնի թիկունքը և ապա-...հովելու էր նրա կապը Շատախի ձորի գյուղերի հետ ...ղեկավար՝ Սահակ Չոլոյան), Հաշկանց գյուղի դիր-...ը 11 ռազմիկներով պաշտպանելու էր Հաշկանից ...կամուրջը (ղեկավար՝ Արշակ Պետրոսյան), Քրմենց ...գյուղի դիրքը 12 ռազմիկներով ապահովելու էր Տիգ-...րիսի աջ ափին ընկած հայկական 8 գյուղերի պաշտ-...պանությունը (ղեկավար՝ Հակոբ Աղեկյան): Ժողովի ...որոշմամբ այդ գյուղերի հայությունը կենտրոնանալու ...Քրմենց գյուղում, ուր կազմակերպվելու էր նրանց ...ինքնապաշտպանությունը: Կոռովանք գյուղացի Ար-... Գլանյանի և Կաղպի գյուղացի Արշակ Մկրտչյա-...մարտական խմբերը 40 ռազմիկներով պաշտպա-...ու էին գավառի արևմտյան ճանապարհները:

...կազմակերպվում է նաև 50 հոգուց բաղկացած ...հեստի մարտական խումբ Ազատ Սիմոնյանի ...րամանատարությամբ:

...Այսպիսով, Շատախի հայությունը Գավաշից և ...Կարկառից փոխադրված 75 ռազմիկների հետ միա-...ն թշնամու 6 հազարանոց զինվորական ուժի դեմ հանում էր ընդամենը 520 ռազմիկ[7]: Ուժերի այս անհավասարության պայմաններում Շատախի հայ ռազմիկները հանձն են առնում ամբողջ գավառի պաշտպանության գործը:

Հայկական դիրքերի պայտաձև կորագիծը ձգվում էր ավելի քան 80 կիլոմետրի վրա: Վճռված էր թշնամուն չզիջել ոչ մի գյուղ և ոչ մի թիզ հող:

Ապրիլի 12-ի երեկոյան Թաղում գումարվում է մարտական խմբերի ղեկավարների ընդհանուր ժողով: Ժողովը քննում և ընդունում է մարտական գործողությունների ծրագիր:

Ապրիլի լույս 13-ի գիշերվա ընթացքում Շատախի մարտական խմբերը անակնկալ հարձակումներով ոչնչացնում են հայկական գյուղերում եղած թուրքական բոլոր պահակակետերը ու պահակախմբերը, կտրում են գավառը Վանի հետ կապող հեռախոսալարերը, մի քանի տասնյակ կիլոմետրերի վրա փշացնում են հեռախոսագծերի սյուները, քանդում են Տիգրիսի փայտյա կամուրջները, փակում են ճանապարհները, խզում են հաղորդակցությունը Շատախի ու Վանի թուրքական ուժերի միջև և նույն օրվա վաղ լուսաբացին դիրքավորվում են գավառի հարավային ծայրամասից սկսած, Տիգրիսի աջ ափի երկարությամբ մինչև Թաղ, այստեղից էլ մինչև Քարե դաշտ ու Արտոսի լեռնաշղթան:

Ապրիլի 14-ին Գյուլամիր Մուրադյանի, Ալո Հարությունյանի և Աբրո Գլանյանի մարտական խմբերը Սակ գյուղում շրջապատում ու ոչնչացնում են թուրքական պատժիչ արշավախումբը: Մարտական գործողությունների ընթացքում հերոսաբար զոհվում է Շատախի անվեհեր զավակ Գյուլամիր Մուրադյանը:

Նույն օրը գավառապետ Համդի բեյը, Մանսուր Էֆենդիի միջոցով, պահանջում է, որ գավառի 30 աչքի ընկնող անձինք ներկայանան իրեն՝ բանակցություններ վարելու համար: Ներկայանալու դեպքում Համդի բեյը խոստանում է կալանքից ազատել Հովսեփ Չոլոյանին: Ինքնապաշտպանության զինվորական շտաբը բանակցություններ վարելու իբրև նախնական պայման պահանջում է ազատ արձակել գավառի 6 նշանավոր գործիչներին, զինաթափ անել և ցրել Թաղում կուտակված թուրք-համիդեական հրոսակախմբերը, քանդել հայերի դեմ կառուցված ռազմական ամրությունները: Զինվորական շտաբն իր հերթին պատրաստակամություն է հայտնում ցրել հայկական մարտական խմբերը, քանդել դիրքերը՝ եթե թուրքական կողմը վաղօրոք իրագործի առաջարկված պայմանները: Զինվորական շտաբի պահանջները մնում են անարձագանք:

Սկսվում է Շատախի հայության հերոսական ինքնապաշտպանությունը:

---

[7] Տիգրան Բաղդասարյանն իր հուշերում Շատախի հայ ռազմիկների թիվը հաշվում է 921 մարդ: Մեզ համար պարզվեց, որ նրա հաշվի մեջ չեն մտել Արմշատի, Կաճեթի, Փեսանդաշտի ուժերը: Կռիվներին մասնակցած մարդկանց շնորհիվ մեզ հաջողվեց ճշտել այս թիվը:

Նորդուզի գավառապետ Խալըդ Նըզգի բեյը 300 համիդեականներով հարձակվում է Քրմնեց գյուղի վրա, ուր կենտրոնացված էր Տիգրիսի ձախափնյա շրջանի հայկական 6 գյուղերի բնակչությունը։ Օրհասական կռիվ է բորբոքվում հակառակորդի և Հակոբ Աղեկյանի գլխավորած 12 ռազմիկների միջև։ Նկատելով, որ թշնամու գերազանց ուժերի դեմ անհնար է երկարատև դիմադրությունը, Աղեկյանը դիմում է հանդուգն քայլի. նա իր եղբոր՝ Մանուկի հետ միասին, հանձն է առնում թշնամու 300 հրոսակներին դիմադրելու ծանրությունը և մարտական խմբի մյուս 10 ռազմիկներին հանձնարարում է բնակչությանը դուրս բերել վտանգի ենթակա շրջանից ու զինված պաշտպանության տակ փոխադրել Տիգրիսի աջ ափը։ Եղբայրները մի ամբողջ օր հերոսաբար ետ են մղում հակառակորդի հարձակումները, ապահովվում են հայ բնակչության գետանցումն ու պաշտպանությունը։ Մարտում ծանր վիրավորվում և տեսողությունից զրկվում է Հակոբ Աղեկյանը։ Թշնամին ի վերջո գտնում է նրա թաքստոցը, գերում ու սպանում է նրան։

Գավառի ամբողջ հայ բնակչությունը լծված էր ինքնապաշտպանության գործին։ Կանայք մարտական խմբերին սնունդ և տաք կերակուր էին հասցնում, մասնակցում էին ռազմական ամրությունների կառուցմանը, ավերված դիրքերի վերաշինությանը, առաջին օգնություն էին ցույց տալիս վիրավորներին, խնամում էին նրանց հիվանդանոցներում, կատարում էին սուրհանդակի դեր և հաճախ զենքը ձեռքին մասնակցում էին կռիվներին։ Մարտերում աչքի ընկավ Առուսկի գյուղացի Մարթան (այժմ ապրում է Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղում)։ Հերոսի անուն վաստակեց 12 տարեկան սուրհանդակ Արթուհի Կուկոյանը և ուրիշ կանայք։

Պատանիները համազարկերի տակ շեղջը ձեռքերին վազվզում էին հայկական դիրքերի շրջակայքը, հավաքում ու զին. արհեստանոց էին բերում թշնամու արձակած գնդակները, մասնակցում էին փամփուշտներ լցնելու աշխատանքներին և պատրաստի փամփուշտները հասցնում էին հայ ռազմիկներին։

Դարբին Կարապետ Դուդոյանի, նրա տղաներ Աբրահամի և Բաղդիկի ջանքերով Թաղի զին. արհեստանոցում կազմակերպվել էին զենքերի վերանորոգման, վառոդի արտադրության, փամփուշտի լիցքավորման բաժանմունքներ։ Ապրիլի 30-ին Դուդոյան հայր ու տղաների նախաձեռնությամբ պատրաստվում է մի թնդանոթ, որի զարկերից փուլ են գալիս թշնամու տուն-դիրքերը և խուճապ է առաջանում նրա շարքերում։ Մի շաբաթ հետո արհեստանոցը պատրաստում է երկրորդ թնդանոթը, բայց մետաղի և վառոդի սղության պատճառով հնարավոր չի լինում թնդանոթները միշտ օգտագործել։

Ամրաշեն ջոկատները վարպետ Մելքոն Ղուկասյանի, Գրիկ Թովմասյանի, Հակոբ Տեր-Մարգարյանի ղեկավարությամբ կառուցում էին պատնեշներ, վերականգնում էին ավերված դիրքերը, հաղորդակցության անցքեր ու խրամատներ էին բաց անում տների և դիրքերի միջև։

Ինքնապաշտպանական կռիվների առաջին օրերին թշնամին իր գլխավոր հարվածներն ուղղում է Թաղի, Արմշատ, Բոլս, Սոգվանց գյուղերի և Խոյբոտար կամարջի հայկական դիրքերի վրա։ Ապրիլի 18-ից հարձակողական մարտեր են ծավալվում նաև Փեսանդաշտի ուղղությամբ։ Փամփուշտի խնայողության համար հայկական մարտական ուժերը հարձակողական կռիվներ չէին մղում։ Հակառակորդի կատաղի համազարկերին հաճախ պատասխանում էին հայրենասիրական երգերով և ռազմաշունչ պարերով. զենքի էին դիմում միայն, երբ թշնամին գրոհի էր անցնում։

Փեսանդաշտի պաշտպանական հատվածում հակառակորդն իր գլխավոր ուժերը կենտրոնացրել էր Բորատոտիկի վրա և ամեն կերպ ձգտում էր իր ձեռքը վերցնել այդ լեռնանցքը։ Դրա գրավումով նա կդառնար Արտոսի իշխող բարձունքների և կվերականգներ Վանի ու Շատախի թուրքական ուժերի միջև խզված կապը։ Լեռնանցքի 80 պաշտպանների դեմ գործում էր Վանից ուղարկված թուրքական 600 զինվորներից բաղկացած զորամասը։ Ապրիլի 16-ից 24-ը տևած համառ մարտերի ընթացքում կատարելապես ձախողվում են լեռնանցքը գրավելու թշնամու ջանքերը և վերջանում նրա լուրջ կորուստներով։

Ապրիլի 24-ին Հաջի Դևրիշը համիդեականների մի ջոկատի հարյուր հրոսակների գլուխ անցած կոտորում ու հրդեհում է Գավաշի հայկական Մոխրաբերդ, Նորագյուղ, Գանձակ, Ընձակ, Վանեց և Փայխներ գյուղերը։ Կարճկանցի Մուրադի և Շատախցի Միհրան Չաթոյանի մարտական խմբերին հաջողվում է թշնամու վայրագություններից փրկել այդ գյուղերի բնակչության հիմնական մասը և փոխադրել Փեսանդաշտ։ Ապրիլի 27-ին Հաջի Դևրիշի ջոկատները միանալով թուրքական զորամասին, համառ մարտեր են ծավալում Բորատոտիկի պաշտպանների դեմ։ Այս հատվածում թշնամու զորքերի թիվը ավելանում է մինչև 1000 զինվորի։ Ապրիլի 28-ին լեռնանցքի պաշտպանների դեմ թշնամին դուրս է բերում նաև մի լեռնային թնդանոթ։ Այդ օրը թշնամին կատաղի հարձակման է անցնում, բայց տալով 25 սպանված, ետ է նահանջում։

Ապրիլի 30-ին թուրք-համիդեական ուժերին հաջողվում է թևանցումով Արտոսի բարձրադիր լանջերից հայ ռազմիկների թիկունք փոխադրել մոտ 100 զինվոր և լեռնանցքի պաշտպաններին հարվածի տակ առնել նաև թիկունքից։ Թուրքական հարյուրակը լեռան իշխող բարձունքներից սկսում է մոտենալ հայկական դիրքերին՝ անընդմեջ կրակոցներով։ Հայերը չեն արձագանքում թշնամու զարկերին, թույլ են տալիս մոտենալ այնքան, մինչև հակառակորդը կորցնում է դիրքային առավելությունը, որից հետո հայ ռազմիկները նրան շեշտակի կրակի տակ են առնում։ Թուրքական հարյուրակը խուճապահար փախչում է։ Գլխիկոր ետ են նահանջում նաև ճակատից հարձակվող ասկյարները։

Կարաքլախի և Շահյուլաս բերդի ուղղությամբ թշնամու հարձակումները նույնպես անհաջողությամբ են մատնվում։ Ապրիլի 30-ից հետո հակառակորդ

ամրացված դասավորում է մարտական գործողությունները Փեսանդաշտի ուղղությամբ և իր գլխավոր ուժերը փոխադրում է Վան, որ թունկված էր ապրիլ-մայիսյան հերոսամարտը:

Փեսանդաշտը թշնամու համար դառնում է անմատչելի, այդ պատճառով թշնամին Շատախում ունեցած իր ուժերի հետ կապվում էր միայն Տիգրիսի վերին ձորերից իջնող դժվարանցանելի ճանապարհներով: Նամակների փոխանակությունը տևում էր ոչ պակաս 20 օր: Վանից ուղարկված թուրքական երկու թնդանոթը մինչև հասնում են Շատախ, տևում է 25 օր:

Փեսանդաշտում պաշտպանվում էին նաև ջարդերից մի կերպ ազատված Թիմարի, Հայոց ձորի, Գավաշի, Կարճկանի գավառների բնակչության բզկտված զանգվածները՝ մեծ մասամբ կանայք, երեխաներ, որոնց թիվը հասնում էր 7000-ի: Փեսանդաշտի հայկական 4 գյուղերի 112 ընտանիքները գրկաբաց պատսպարել էին նրանց շինականի իրենց համեստ հարկերի տակ: Եվ նրանց սնունդով ապահովելու համար հանրայնացրել էին իրենց սարենային պաշարները, ոչխարները ու խոշոր եղջերավոր անասունները, կազմակերպել էին նորմավորված սնունդ թե՛ տեղացի և թե՛ եկվոր բնակչության համար:

Ապրիլի 15-ից մինչև մայիսի 1-ը տեղի ունեցած մարտերի ընթացքում թշնամու գերազանց ուժերի հարձակումները հերոսաբար ետ են մղվում նաև Թաղի, Արմշատի և այլ պաշտպանական հատվածներում: Հայկական պաշտպանական շղթան ճեղքելու ուղղությամբ հակառակորդի համառ փորձերը ձախողվում են ամենուրեք:

Այդ պայմաններում մայիսի 2-ին Թաղում դարձյալ գումարվում է մարտական խմբերի ղեկավարների ժողով: Քննվում է դաշնակցության նահանգային կոմիտեի նամակը, որով պահանջվում էր Շատախի մարտական ուժերը դուրս բերել գավառից և փոխադրել Վան, իսկ բնակչությանը թողնել տեղում: Ժողովը կրկին մերժում է այս կարգադրությունը. «Բոլորս ուժգին հակառակվեցանք այդ մտքին և ըսինք, որ մենք մինչև վերջին շունչը պիտի պաշտպանվինք և մեր կիներու ու տղաքներու հետ պիտի մեռնինք»[3]: Լևոն Շաղոյանը հարց է տալիս՝ «Հապա վաղը եթե թնդանոթները գոռան ձեր գլխուն, ի՞նչ կընեք»: «Կմեռնինք,—լինում է մարտախմբերի ղեկավարների վճռական պատասխանը,—մեռնելե անդի բան մը կ՚ըր: Թող թքնեն մեր դիակի վրա, բայց ոչ երեսին»[4]:

Ժողովը մերժում է նաև Արմշատ գյուղի դիրքերը լքելու մասին գավառի զինվորական շտաբի առաջարկը:

Մայիսի սկզբներից հակառակորդն իր ուժերի զգալի մասը կենտրոնացնում է Արմշատի պաշտպանական հատվածի վրա, ուր կատաղի կռիվներ են բորբոքվում: Թշնամին ձգտում էր գրավել Արմշատ և Կաճեթ գյուղերը, թևանցել ինքնապաշտպանական շղթան և թիկունքից ու ճակատից հարվածի տակ վերցնել Թաղ ավանը: Արմշատի գծում կռվում էին միրկանցի, կավտանցի, մամխտանցի, ալանցի և եզդանցի համիդիական հրոսակախմբերը, իրենց ցեղապետերի գլխավորությամբ: Մայիսի 5-ի գիշերը թշնամուն հաջողվում է վերականգնել Զալկանց փայտե կամուրջը. մի քանի հարյուր հրոսակներ անցկացնել Տիգրիսի աջ ափը և հարձակողական մարտեր ծավալել Արմշատ գյուղի գրավման համար: Թաղից օգնության է շտապում Ազատ Սիմոնյանի պահեստի խումբը, բայց մինչև նրա հասնելը Արմշատի և Կաճեթի մարտական խմբերը ջախջախում են հակառակորդին, որը նահանջում է դեպի իր ելման դիրքերը՝ տալով 40 սպանված, մեծ թվով վիրավորներ և 12 գերի: Մարտում սպանվում է նաև միրկանցիների ցեղապետը:

Հակառակորդը այս անհաջողությունից հետո վերախմբավորում է իր ուժերը և գլխավոր հարվածը ուղղում Բոյս, Սոփկանց գյուղերի դիրքերի վրա: Մայիսի 8-ի գիշերը թշնամին վերականգնում է միակտուր փայտե կամուրջը և Ախտիկնա գետի աջ ափն է անցկացնում մոտ 400 մարդուց բաղկացած գումարտակ: Լուսաբացին հակառակորդի գումարտակը շրջապատման մեջ է առնում Բոյս գյուղը և կրակ բացում: Անհավասար, օրհասական կռիվ է բորբոքվում գյուղում ամրացած 15 հայ ռազմիկների և թշնամու գումարտակի միջև: Հայկական մարտական խմբի հրամանատար, 18-ամյա Սեթ Բոզիյանը, յրիվ շրջապատումից խուսափելու նպատակով իր ռազմիկների մի մասը թողնում է գյուղում, մնացած մասի հետ ամրանում է թշնամու վրա իշխող լեռնալանջին: Սրվա ընթացքում, անընդհատ համալրումներ ստանալով, թշնամին գնալով սեղմում է գյուղի պաշտպանման շղթան: Իրիկնադեմին նրան հաջողվում է ներխուժել գյուղի վերին թաղը, ուր կատաղի մարտեր են բորբոքվում յուրաքանչյուր տան ու փողոցի համար: Կռվին տարերայնորեն սկսում է մասնակցել նաև գյուղի ամբողջ բնակչությունը՝ կացիններով, բահերով, անգամ քարերով: Հայերը ընկնում էին, լուրջ կորուստներ պատճառելով թշնամուն: Վախրովցի Փիրուզը ջախջախում է թուրք ոստիկանի գլուխը, սպանում նրան անշնչացած, հետո ընկնում է նաև ինքը: Բացառիկ խիզախություն են ցուցաբերում գյուղի պաշտպանները: Նրանք մի կողմից կասեցնում են թշնամու գերազանց ուժերի առաջխաղացումը, մյուս կողմից կազմակերպում գյուղի բնակչության փոխադրումը կրակի գծից դեպի ներքին թաղ: Մարտական այդ խնդրի կատարման ընթացքում նահատակաբար զոհվում են Արմշատ գյուղացի Շահեն Թումոյանը, Կաղպի գյուղացի Մկրտիչ Մուրադյանը, Մուսկավա գյուղացի Տիգրանը: Նրանց կյանքը էժան չի նստում թշնամուն: Մինչև ուժասպառվելը վիրավոր Շահեն Թումոյանը սպանում է վեց, իսկ Տիգրանը 3 համիդեականի: Զոհված Շահենի փոխարինում է գյուղի երիտասարդ կանանցից մեկը, որը վերցնելով նրա հրացանը, շարունակում է պաշտպանել նրա դիրքերը: Ցավոք, մեզ չհաջողվեց իմանալ խիզախ հայուհու անունը. կռվի մասնակիցները նրան հիշում են միայն որպես «Մայիսյան հարս»:

---

[3] Վան-Տոսպ, 1916 թ., № 26, էջ 10:

[4] Անդ:

Մայրամուտին հակառակորդը գրավում է վերին թաղը, կողոպտում ու հրկիզում է այն։ Մարտական գործողությունները փոխադրվում են ներքին թաղ, ուր մինչ այդ ռազմիկներ Հաբեթն ու Գրիգորը կռվում էին թշնամու մոտ 100 հրոսակների դեմ։ Փամփուշտի սակավության պատճառով անհնար էր երկարատև դիմադրել։ Հայ ռազմիկները ստիպված գիշերվա ընթացքում իրենց պաշտպանության տակ եղած բնակչությանը փոխադրում են Ծիծանց գյուղ և, թողնելով ներքին թաղը, միանում են լեռնալանջի իրենց ընկերներին։

Օրվա մարտերում քաջությամբ աչքի են ընկնում Կաղպի գյուղացիներ Սախիկ Կուրդոյանը, Մինաս Մարտիրոսյանը, Մուրադ Զիրոյանը, Հոխան Ավդոյանը, Արմշատ գյուղացիներ Հովսեփ Սարգսյանը, Զոլո Խալաթյանը, Մուրադ Սանչոյանը, Ջնուկ գյուղացիներ Միրզո Բազյանը և Մելիք Զրմոյանը։

Մայիսի 10-ի լուսաբացին Սեթ Բոզեյանի խմբին օգնության են հասնում Հովսեփ Գարունյանի, Սահակ Զոլոյանի, Միհրան Չաթոյանի և Ազատ Սիմոնյանի մարտական խմբերը, որոնք միավորում էին 81 ռազմիկ։ Հակառակորդի դեմ հարձակումը նրանք սկսում են լեռնալանջի իշխող բարձունքներից և քայլ առ քայլ ակցանի մեջ են առնում ու սեղմում թշնամուն Սվտիկնա գետի ափին։ Հակառակորդը փորձում է նահանջել փայտաշեն կամուրջով, բայց հայ մարտիկները կրակով փակում են նրա ճանապարհը։ Ամբողջ օրվա ընթացքում թուրք-համիդեական գումարտակը տեղից տեղ է փախչում և չի կարողանում ելք գտնել կրակի օղակից. նա տալիս է ավելի քան 50 սպանված և մեծ թվով վիրավորներ։

Նույն օրը երեկոյան հայկական մարտական խըմբերը, առանց միմյանց տեղյակ պահելու, հեռանում են ռազմավայրից տարբեր ուղղություններով։ Թշնամու դեմ մնում է միայն Հովսեփ Գարունյանի 20 հոգուց բաղկացած խումբը, որն ամրացված էր Սոզվանց գյուղում։ Կրակի գծից հեռացել էր նաև Սահակ Զոլոյանի խումբը, որի վրա էր դրված այդ գյուղի պաշտպանությունը։ Զինվորական կարգապահության այս կոպիտ խախտումը, որը թույլ տվին Սահակ Զոլոյանը, Ազատ Սիմոնյանը և Միհրան Չաթոյանը, անհետևանք չմնաց։ Օգտվելով դրանից, թշնամին նոր համալրումներ ստանալով կարողացավ գրավել հայ ռազմիկների բաց թողած իշխող դիրքերը և մայիսի 11-ի լուսաբացին հարձակման անցավ Սոզվանց գյուղի վրա։

Հովսեփ Գարունյանի 20 խիզախ մարտիկները դիրքեր գրավելով Հեթում բարձունքի վրա, փակեցին թշնամու հարձակման ճանապարհը և օրհասական մարտի բռնվեցին թուրք-համիդեական 800 զինվորների դեմ։ Անհավասար կռվում ընկնում էին հայ քաջերը։ Վիրավոր ռազմիկները կռվում էին մինչև վերջին շունչ։ Ծանր վիրավոր Երեմ Մարկոսյանը շարունակում է կռվել, քանի դեռ փամփուշտ ունի։ Նկատելով, որ նրա փամփուշտները սպառվել են, թշնամու զինվորները հարձակվում են նրա վրա։ Բայց մինչև զոհվելը, Երեմը հավաքում է իր վերջին ուժերը և քարին խփելով ջարդում է իր հրացանը, որպեսզի այն չընկնի թշնամու ձեռքը։

Գարունյանի ռազմիկները իրենց կյանքի գնով կոտորածից փրկում են Սոզվանց գյուղի բնակչությանը։ Քաջի մահով ընկնում են շատերը, որոնց թվում մարտական խմբի անվեհեր հրամանատար Հովսեփ Գարունյանը։ Նրա պայծառ անունը հարգանքով է հիշում ամեն մի շատախցի։

Մրրկային կրակի օգնությամբ թշնամու գերազանց ուժերը տիրում են Հեթում բարձունքին։ Հայ վիրավոր մարտիկներ՝ Կաղպի գյուղացի Մկրտիչը (Մկրո) և թաղեցիներ Զաքար Մանուկյանը (Բրզո), Հեթիու Խաչոն, Բզո Ծահինյանն ու Արամ Դանիելյանը շարունակում են դիմադրել թշնամուն՝ դանդաղ նահանջելով։ Գրավելով Սոզվանց գյուղը, հակառակորդը հետապնդում է հայ ռազմիկներին։ Վիրավորված մարտիկները ապաստանում են Թաղից ոչ հեռու Աստվածաշեն վանքի գավիթում։ Թշնամին շրջապատում է վանքը, բայց նրա փորձերը ներխուժելու վանք և գրավելու այն, անցնում են ապարդյուն։ Հայ 5 վիրավորներ համառորեն ետ են շպրտում թշնամու մեկը մյուսին հաջորդող գրոհները։ Վերջիվերջո հրդեհում է վանքի փայտաշեն գավիթը, որից բոցավառվում է նաև վանքի դուռը։ Թանձր ծխից ուշաթափվում են վիրավորներից 2-ը, բայց մյուսները շարունակում են դիմադրել և ետ մղել թշնամու հարձակումները։

Հինգ վիրավոր ռազմիկների դրության մասին Թաղում հայտնի է դառնում միայն ուշ երեկոյան։ Կազմակերպվում է շտապ օգնություն և վիրավորները փոխադրվում են Թաղի հիվանդանոց։

Գրավելով Սոզվանց գյուղը՝ թշնամին պայտաձև շրջապատման մեջ է վերցնում Թաղ ավանը, խզում է կապը գավառի կենտրոնի, Շատախի ձորի և Սվտիկին գյուղի ինքնապաշտպանական ուժերի միջև։ Նույն օրերին թուրքական կառավարության դրդմամբ պատրաստվում են թիկունքից Շատախի վրա հարձակվել նաև Տինիսի, Խասխերի, Սոքանցի և Մոկսի համիդեական քրդերը։ Մոկսի վրայով փորձում են Շատախ ներխուժել նաև հյուսիսային Միջագետքից ուղարկված թուրք-համիդեական հրոսակախմբերը։ Տեղեկություն է ստացվում, որ կառավարությունը ըսպառնում է ոչնչացնել Մոկաց գավառի հայերին, եթե նրանք անհապաղ չհանձնեն զենքերն ու զորակոչի ենթակա մարդկանց։ Քուրդ Մուրթուլաբեկի հովանավորությամբ Մոկսի հայերը մարտական վիճակի մեջ են դնում իրենց զինված խմբերը և պատրաստվում ինքնապաշտպանության։ Այդ օրերին թշնամին ստանում է 2 թնդանոթ և հրետանային մշտական հարվածի տակ է առնում Թաղ ավանի հայկական դիրքերը։ Շատախի հայության վիճակը խիստ ծանրանում է։ Դարձյալ ժողովի են հավաքվում մարտական խմբերի ղեկավարները։ Սամվել Մեսրոպյանը հայտարարում է, թե պետք է Թաղը լքել և քաշվել։ Գոնե երիտասարդությունը ազատել[10]։

---

[10] Վան-Տոսպ, 1916 թ., № 26, էջ 11։

Շատախի հայրենասերներին խորթ էր հուսահատությունն ու մորթապաշտությունը։ Նրանք չէին կարող զենքը ձեռքին փախուստի դիմել՝ թշնամուն հանձնելով կանանց, երեխաների ու հարազատների բազմությունները։ Մարտական խմբերի ղեկավարները միշտ են Սամվել Մեսրոպյանի տանը։ Նրանք վճռում են՝ «Ոչ մի նահանջ, մինչև արյան վերջին կաթիլ մնանք ու մեռնենք մեր ընտանիքների հետ»[11]։ Ժողովում Շահեն Արթինյանը, Թովմաս Գալստյանը, Միլան Մուրադյանը և ուրիշներ դատապարտում են Սամվել Մեսրոպյանի բռնած դիրքը։ Սամվել Մեսրոպյանի ծերունի հայր Մեսրոպ Չոլոյանը արտահայտվում է՝ «Ով թողնի ժողովրդին և փախչի, թեկուզ նա լինի իմ որդին, կենդանի չի մնա։ Իմ առաջին գնդակը նրա ճակատին կխփեմ»[12]։

Ժողովը միջոցառումներ է մշակում գավառի ինքնապաշտպանությունը ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար։ Ըստ այդմ զգալիորեն սեղմվում է պաշտպանական շրջագիծը։ Արմշատ ու Կանեթ գյուղերից հայ բնակչությունն ու մարտական ուժերը փոխադրվում են Կաղպի գյուղ։ Պաշտպանական կրակագիծը նեղացնելու հաշվին նոր դիրքեր են կազմակերպվում Մոկսի սահմանների վրա։ Խնդիր է դրվում Մոկսի հայկական մարտական ուժերի առջև, եթե հնարավոր չլինի խուսափել զինված ընդհարումից, հայ բնակչությանը Մոկսից փոխադրել Շատախ և միանալ Շատախի ինքնապաշտպանական ուժերին։ Որոշվում է նաև հարձակողական մարտերով վերագրավել Բոլս և Սազվանց գյուղերը, թշնամուն ետ շպրտել իր նախկին դիրքերը, վերականգնել կապը գավառի ինքնապաշտպանական ուժերի միջև։ Հարց է առաջ քաշվում հարձակմանը մասնակից դարձնել նաև Փեսանդաշտի ուժերին։ Տիգրան Բաղդասարյանը գրում է իր հուշերում, թե Լևոն Շաղոյանը չի պատասխանում այդ հարցի առթիվ գին. չտարի նամակին։ Սևտիկին գյուղի հատվածի հայկական մարտական խմբերի հարձակման ղեկավարությունը ստանձնում է Շատախի հայդուկային շարժման նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ վաթսունամյա ծերունի Բագիկ Պետրոսյանը։

Անհրաժեշտ էր կապ հաստատել Սևտիկին գյուղի և Թաղի պաշտպանական ուժերի միջև և համաձայնեցնել նրանց մարտական փոխգործողությունները։ Այս դժվարին գործը իր վրա է վերցնում արհեստավորական համեստ ընտանիքի մայր, 50-ամյա Ասմարը։ Անվախ հայուհուն հաջողվում է գիշերով, թշնամու զինված ուժերի հսկողության տակ եղած վայրերով աննկատելիորեն նամակների փոխանակում կատարել հայկական պաշտպանական հատվածների միջև, նախապատրաստել նրանց համատեղ գրոհը։ Կողմերի համաձայնությամբ ծրագրվում է հարձակումն սկսել մայիսի 19-ի լուսաբացին։

Մինչ այդ համառ մարտեր էին տեղի ունենում Թաղի և Կաղպի գյուղի ուղղությամբ։ Օգտվելով հայերի համար ստեղծված անբարենպաստ իրադրությունից՝ թշնամին ձգտում էր ընկճել պաշտպանական այդ երկու օջախների դիմադրությունը և գլուխ բերել գավառի հայության բնաջնջումը։ Թշնամին առավել ջանքեր էր գործադրում Կաղպի գյուղին տիրելու համար, ուր փոխադրվել էր նաև Արմշատ ու Կանեթ գյուղերի անզեն բնակչությունը (նրանց մարտական խմբերը միացել էին Թաղի պաշտպաններին)։ Մայիսի 15-ին թուրք-համիդիեական մոտ 400 հրոսակներ հարձակվում են Կաղպի գյուղի վրա։ Այդ գյուղի գրավումով թշնամին նպատակ ուներ ավարտել Թաղի շրջապատումը, խզել ինքնապաշտպանական ուժերի կապը Մոկսի հետ և, անհրաժեշտության դեպքում, զրկել Շատախի հայությանը Մոկսում ապաստան գտնելու հնարավորությունից։

Թշնամու գերակշռող ուժերի դեմ կռվի են բռնվում գյուղի 8 հայ ռազմիկները՝ Արշակ Մկրտչյանի ղեկավարությամբ։ Օգտվելով իրենց դիրքային առավելությունից, 8 խիզախները մի քանի ժամ անընդհատ ետ են շպրտում հակառակորդի կրկնվող համառ գրոհները։ Կռվում հատկապես աչքի են ընկնում Սիմոն Մարտիրոսյանը և Սախիկ Կուրդոյանը։ Իրիկնադեմին Անտոսի յանջերի դիրքերից նրանց օգնության են հասնում Ազո Հարությունյանի և Աբրո Գլանյանի խմբերը 30 ռազմիկներով, որոնք անսպասելիորեն ճակատից և թիկունքից հարվածի տակ են վերցնում թշնամուն։ Հակառակորդը անակնկալ հարձակումից խուճապի է մատնվում և փախուստի է դիմում՝ մարտավայրում թողնելով մի քանի տասնյակ դիակ։

Մայիսի 16-ին Արմշատի և Կանեթի մարտական խմբերը Մելիք Աբրահամյանի գլխավորությամբ նոր ջախջախիչ հարված են հասցնում Կաղպի գյուղի ուղղությամբ կենտրոնացված թշնամու ուժերին և, հետապնդելով նրանց փախչող մնացորդներին մինչև Բարվարի սահմանները, վերագրավում են գավառի հարավում ընկած գյուղերը, այդ թվում նաև Արմշատն ու Կանեթը և նորից ամրանում են իրենց նախկին դիրքերում։

Թշնամու համար անհաջողությամբ են ավարտվում նաև Թաղի պաշտպանական հատվածի վրա նրա ձեռնարկած մայիսի 13-ի, 14-ի, 15-ի և 18-ի հարձակումները։ Առավել կատաղի բնույթ էր կրում ամսի 15-ի հարձակումը։ Այդ օրը թուրք-համիդիեական զինվորների խիտ շարքերը անցնելով կամուրջից, Թաղ ավանի պարտեզների միջով գրոհում են հայկական դիրքերի վրա։ Նրանց հաջողվում է գրավել ջրաղացն ու Դավոյի սրճարանը, դրանք դարձնել հարձակման հենակետ։ Հայերն իրենց գլխավոր ուժերը կենտրոնացնելով այդ ուղղության վրա՝ անցնում են հակագրոհի, միաժամանակ կրակի տակ են առնում թշնամու հարձակվող զինվորներին։ Հայ 5 ռազմիկներ (Սահակ, Պողոս, Հայկ, Միլան, Թովմաս) սրընթաց գրոհով անցնում են սրճարանի ետև, արագորեն քանդում են պատը և տասնոցները ձեռքներին հարձակվում են սրճարանի թուրք զինվորների վրա։ Վերջիններս հրդեհում են սրճարանը և փորձում են փախչել։ Նրանցից երկուսին հաջողվում է դուրս վազել շենքից, բայց գնդակահարվում են տեղն

---

[11] Ռուբեն Գասպարյանի անտիպ հուշերից։

[12] Անդ։

ու տեղը։ Մնացած թուրք զինվորները արձարանի հետ միասին հրո ճարակ են դառնում։ Նկատելով այդ, առանց որևէ դիմադրության, փախուստի են դիմում նաև ջրաղացում ամրացած թուրք զինվորները։ Հայերը շարունակելով հակագրոհը, լիովին մաքրում են Թաղ ավանը ու նրա պարտեզները թշնամուց։

Մայիսի 18-ին լուր է ստացվում, որ թուրք Մուրթուզաբեկը կարողացել է համոզել և ցրել Մոկսում կենտրոնացված համիդեական հրոսակախմբերին, որոնք պատրաստվել էին Շատախի վրա հարձակվելու։ Դրանով հնարավորություն է ստեղծվում Մոկսի սահմանի վրա ամրացած հայկական մարտական խմբերը փոխադրել Բոլս և Սոզվանց գյուղերի ազատագրման համար մղվելիք կռվի ասպարեզ։

Մայիսի 19-ին հայ ռազմիկները 2 ճակատից անակընկալ հարվածի տակ են առնում Բոլս և Սոզվանց գյուղերում բույն դրած թշնամու ուժերին և հանդուգն գրոհով վերագրավում են իրենց նախկին դիրքերը։ Թշնամին նահանջում է՝ տալով լուրջ կորուստներ։ Այսպիսով, հակառակորդի բոլոր ուժերը ետ են շըպրտվում դեպի Տիգրիսի աջ ափին ընկած նրանց նախկին դիրքերը։

Այդ վճռական հակահարվածից հետո, թեև չեն լռում թշնամու թնդանոթները ու հրացանները, բայց նա հարձակումներից ստիպված անցնում է պաշտպանության։ Իսկ հայ մարտիկները շարունակում են խնայել իրենց փամփուշտները և թուրքերի համազարկերին պատասխանել հայրենաշունչ երգերով, կրակոտ պարերով։

Շատախի հայության հերոսամարտը ավարտվում է հաղթանակով։ Հայ բնակչությունը փրկվում է կոտորածից։

Մայիսի 29-ին սկսվում է թշնամու խուճապային փախուստը ռազմաճակատի բոլոր հատվածներից։ Դրանից մի օր հետո Շատախ է հասնում հայկական կամավորական գունդը։ Թվում էր, թե հայրենի գավառը մեկընդմիշտ թոթափել է օսմանյան շարաշուք տիրապետության լուծը, փրկվել է նախճիրներից, բնաջնջման վտանգից։ Թվում էր. սակայն Շատախի հայության ուրախությունը մի ամիս էլ չի տևում։ Նրան սպասում էր իր համար անհասկանալի գաղթը հայրենի բնօրրանից, որի ամեն մի թիզ հողը իր որդիների արյունով էր շաղախված։ Նա կանգնած էր նոր, ավելի ծանր փորձությունների առաջ՝ քաղցի, մահվան ու տևական դեգերումների ճամփաներում։ Այդ փորձություններին էլ տոկացին շատախցիները՝ միշտ բարձր պահելով իրենց արժանապատվությունը։ Շատախի հայ ռազմիկները արժանի տեղ գրավեցին Վանի և Ատրպատականի 1918 թվականի գոյամարտերում։ Վասպուրականի մարտական խմբերի շարքերում շատախցիները բարձր պահեցին իրենց զենքի պատիվը՝ պաշտպանելով նահանջի հայության 1918 թվականի նահանջը Վանից—Սալմաստ—Ուրմի—Սոլդուզ— Սարինկալա — Համադան — Քերմանշահ—Բաղդադ։ Օտար և անհյուրընկալ այդ ուղիների վրա նրանք պատնեշ կանգնեցին Վասպուրականի հայրենազուրկ, բնավեր ու տնավեր հայության զանգվածներին՝ ոչնչացնելով նահանջի ճամփաները փակող ջարդարար ոհմակներին։ Կոտոլի ձորի, Սալմաստի, Ուրմիայի, Սոլդուզի և Սարինկալայի գոյամարտերում Վասպուրականի և Ատրպատականի հայ և ասորի ռազմիկների հետ միասին հերոսաբար ընկան նաև շատախցի քաջերից շատերը, ընկան անհիշատակ, անշիրիմ, ընկան անձնվիրաբար՝ չխնայելով իրենց թանկագին կյանքն ու արյունը, որպեսզի ապրի և գոյատևի մայր ժողովուրդը։



Սանահին. Գրիգոր Տուտեորդու գերեզման-խաչքարը

(Նկարիչ՝ Գր. Ավագյան)

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ*
## (1920—1967 թթ.)

## ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՎ

### Ա. Կիլիկիայի Աթոռի հաստատումը Անթիլիասում

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով Տանն Կիլիկիայի, Երուսաղեմի և Կ. Պոլսի Աթոռները, նույնպես ունեին իրենց գահակալները: Հայ եկեղեցին բուժում էր իր վերքերը, նորից ոտքի կանգնում և եկեղեցու առաջնորդության համար սկսվում էր վերանորոգության հուսալից մի շրջան:

Մայր Աթոռը աշխատում էր է՛լ ավելի ամրապնդել, սերտացնել գոյություն ունեցող կանոնական, եկեղեցական և բարոյական հոգևոր կապերն ու հարաբերությունները, համագործակցությունն ու միությունը Աթոռների միջև թղթակցությամբ, կոնդակներով և կենդանի շփումներով:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով ևս Տանն Կիլիկիայի կաթողիկոսն էր Տ. Սահակ Բ Խապայանը, որը 1928 թվականին գաղթական «Կիլիկիո կաթողիկոսության պետական նավը խաղաղության և ապահովության նավահանգիստը հասցնելու համար» (Կոնդակ) իրեն աթոռակից կաթողիկոս էր նշանակում տ. Բաբգեն եպս. Կյուլեսերյանին: Կիլիկյան թեմերի վերակազմությունից հետո աթոռակցի նշանակումը Տ. Սահակ կաթողիկոսի հիշատակության արժանի գործերից մեկն էր, Աթոռի ամրապնդման և գոյության տեսակետից:

1931 թվականի ապրիլին Հալեպում գումարված կիլիկյան թեմերի 35 հոգուց բաղկացած պատգամավորական ժողովը, օրինականացնելով Տ. Սահակ կաթողիկոսի ցանկությունը, տ. Բաբգեն եպս. Կյուլեսերյանին աթոռակից կաթողիկոս էր ընտրում: Աթոռակից կաթողիկոսի օծումը կատարվում էր 1931 թվականի ապրիլի 26-ին Հալեպի ս. Քառասնից Մանկանց եկեղեցում: Այնուհետև «երկու կաթողիկոսները փառավոր հուղարկով ճանապարհ ելան Հալեպեն և փառավորագույն ընդունելությամբ մտան Բեյրութ և անտի եկան Անթիլիաս» (ԲՆԿ, «Պատմություն կաթող. Կիլիկիոյ», էջ 1021):

Երկու կաթողիկոսները աշխատում են այնուհետև ամրապնդել տարագիր կիլիկյան Աթոռը Անթիլիասում:

Թեև «Հալեպին էր կաթողիկոսական քաղաք ըլլալու իրավունքը, որովհետև սկիզբեն ի վեր Սիսի հետ և անոր հավասար դիրք ունեցավ Հալեպ», ինչպես նաև երբեմն «Հալեպ կնստեին Կիլիկիո կաթողիկոսները», և Հալեպի ս. Քառասնից Մանկանց եկեղեցին տեսել էր «կաթողիկոսական և եպիսկոպոսական ձեռնադրություններ և օծումներ, արքայույս մեռոնի օրհնություններ», բայց նկատի առնելով, որ Սիրիայի և Լիբանանի ֆրանսիական գրավման օրով բազում այլ հարանվանությունների «հոգևոր պետերը Բեյրութ են հաստատած իրենց Աթոռները, իրերու բնական բերումովը Կիլիկիո Աթոռն ալ պիտի հաստատվեր Բեյրութ, և ասիկա փափաքն էր նաև բարձր կոմիսարության: Բայց Բեյրութի մեջ չկար հարմար

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1967 թվականի № ԺԲ-ից և 1968 թվականի №№ Ա—Դ-ից:

տեղ մը կաթողիկոսարան րնելու համար» («Սիոն», 1930, էջ 268):

Այս առթիվ կատարված բանակցությունների հետևանքով, Մերձավոր Արևելքում ամերիկյան որբախնամ ընկերությունը՝ Նիր Իստ Ռիլիֆը, Անթիլիասում գտնվող իր որբանոցի շենքերը տարեկան մեկ դոլար վարձով հանձնում է Տ. Սահակ կաթողիկոսին այստեղ հաստատելու համար կիլիկյան Աթոռը և բացելու եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստելու համար դպրոց:

1930 թվականի ապրիլի 7-ին Բեյրութում ստորագրվում է Անթիլիասի ամերիկյան որբանոցը կիլիկյան կաթողիկոսության տրամադրող և ութ հոդվածներից բաղկացած պայմանագրությունը:

1930 թվի դեկտեմբերի 28-ին կատարվում էր նորահաստատ կաթողիկոսարանի Ս. Թարգմանչաց եկեղեցու օծումը: «Քանի որ եկեղեցին հիմնովին կառուցված նոր շենք մը չէր, հարմար դատվեցավ օծել միայն Սեղանին վեմ քարը, խորհրդանոցները ու ավազանը» («Սիոն», 1931, էջ 28):

1931 թվականի հոկտեմբերի 13-ին բացվում է Անթիլիասի դպրեվանքը, «Դպրեվանք կաթողիկոսության Կիլիկիո» անունով, 37 ուսանողներով, արմաշական և Ղուրյան արքեպիսկոպոսի աշակերտ տ. Շահե ծ. վրդ. Գասպարյանի վերատեսչությամբ: Դպրեվանքի ուսումնական ծրագիրը հինգ տարի էր, երկուսը նախապատրաստական, երեքը՝ մասնագիտական: Դպրեվանքում դասեր ունեին տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսը և տ. Շահե ծ. վարդապետը: Կաթողիկոսարանը ունենում էր նաև իր մատենադարանը ու գրադարանը:

Նույն թվականին բացվում է Անթիլիասի փոքրիկ տպարանը, իսկ 1932 թվականի հունվարից սկսվում է հրատարակությունը կաթողիկոսարանի պաշտոնաթերթ «Հասկ»-ի, խմբագրությամբ տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսի: «Հայ ժողովրդի այն հատվածը, որ տառապանքի ճամփաներեն ու մահվան դաշտերեն անցնելով ապաստան գտավ Սյուրիո և Լիբանանի գիրկին մեջ, պետք ունի ատոք հասկերու սնունդին, պահելու և պաշտպանելու համար Ավետարանով լուսավորված իր ամուր հավատքը և ազգային մշակույթի թանկագին ավանդները ու ավանդությունները, իր մայրենի եկեղեցվո մեջ»,—գրում էր իր առաջին խմբագրականի մեջ տ. Բաբգեն աթոռակից կաթողիկո. («Հասկ», 1932, թիվ 1, էջ 1):

«Հասկ»-ը առաջին տարին լույս էր տեսնում ամեն ամիս երկու թերթ կամ չորս երկսյուն էջերով: Հաջորդ տարի նա հրատարակվում էր ավելի բովանդակալից և ավելի մեծ ծավալով, դառնալու համար տ. Բաբգեն աթոռակից և մանավանդ յուսահոգի Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի օրով սերլուրջ ու բովանդակալից եկեղեցական ամսագրերից մեկը:

1930 թվականին կազմակերպվում են կիլիկյան թեմերը՝ Բեյրութ, Դամասկոս, Հալեպ, Անտիոքն ու Կիպրոսը: Թեմերը ունենում են իրենց թեմական եպիսկոպոսներն ու ընտրված սահմանադրական վարչությունները՝ մշտական վարչական դրությամբ:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով սիրալիր հարաբերությունները Տանն Կիլիկիայի Աթոռի հետ շարունակվեցին և ամրապնդվեցին:

1932 թվականի նոյեմբերին Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովին պաշտոնապես հրավիրված էր նաև Տանն Կիլիկիայի Աթոռը՝ Տ. Գևորգ Ե կաթողիկոսի կազմած կանոնադրության համաձայն (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1962, Բ, էջ 22):

Տ. Սահակ կաթողիկոսի հրահանգով աթոռակից տ. Բաբգեն կաթողիկոսը պետք էր այդ ընտրության ներկայացներ Տանն Կիլիկիայի կաթողիկոսը, «բայց ժամանակը և քաղաքական պատճառները թույլ չտվեցին», որ Բաբգեն Վեհը կարենար ներկա գտնվել Մայր Աթոռում, ժողովի աշխատանքներին: Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությանը կիլիկյան Աթոռը 1932 թվի նոյեմբերի 12-ին ներկայացնում էր տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսին:

Տ. Սահակ և տ. Բաբգեն կաթողիկոսները ջերմորեն ողջունում և շնորհավորում էին 1932 թվականի նոյեմբերի 12-ի Տ. Խորեն Ա կաթողիկոսի ընտրությունը: Նորընտիր Ամենայն Հայոց Հայրապետը իր 1932 դեկտեմբեր 30 թվակիր և համար 897 նամակով գրում էր երկու կաթողիկոսներին հասցեագրված իր ողջույնի խոսքի մեջ.

«Տանն Կիլիկիո Կաթողիկոսական և Երուսաղեմի ու Կ. Պոլսո Պատրիարքական Աթոռները այսօր մեծ դեր ունեն կատարելու ի սփյուռս աշխարհի տարածված Հայ ժողովրդին իր Մայրենի Եկեղեցու ծոցում պահպանելու և Հայ Եկեղեցու վերակենդանացման ու զորացման աջակցելու առաջնարժեք գործում:

Հոգիս հրճվում է և զորանում տեսնելով հիշյալ Աթոռների և Մայր Աթոռի սիրո շաղկապը, որ Մեր օրով անշուշտ առավել պիտի զորանա, որով ծանր լուծս՝ բեռան բաժանմամբ՝ պիտի թեթևանա, և քաղցրանա, և հնարավոր դառնա կոչմանս մեծ պարտքը՝ գոնե մասամբ իվիք՝ ի կատար ածելու:...

Մաղթում եմ որ Տերը երկար կյանք պարգևի Ձեզ, գաղթականության ցուպն առած Սյուրիո արյունաքամ ու տանջված Հայ ժո-

ղովրդի բեկորները հուսադրելու, մխիթարելու, դաստիարակելու և անձամբ զորացնելու՝ և Ձեր պատվական Աթոռակցին, իսկ սիրելի հոգևոր եղբորս՝ կար և ույժ պարգևելու, **իբրև երկրորդ Մովսես նոցա Ավետյաց երկիր առաջնորդելու, որպեսզի իբրև ազգ ամբողջանանք և հոգևոր-ազգային զորավոր կեդրոն ունենանք ի մխիթարություն Մեր և Ձեր և համայն ազգի»** (ընդգծումը իմն է—Ա. Հ.):

Ողջագուրանքներս Ձեզ և Աթոռակցին, սիրո ողջույններս Ձեզ ենթադաս հոգևորականության և օրհնություններս սիրեցյալ հոտիդ»:

Տ. Խորեն Ա կաթողիկոսի նամակին պատասխանում էին Տ. Սահակ և Տ. Բաբգեն կաթողիկոսները, 1933 թվականի հունվարի 30-ին, նշելով, որ Մայր Աթոռը վստահ կարող է լինել **«մեր գործակցության և մեր անվերապահ սիրույն և նվիրման հանդեպ ս. Էջմիածնի»** («Հասկ», 1933, էջ 11):

Տ. Խորեն Ա կաթողիկոսը իր անդրանիկ հայրապետական կոնդակում 1933 թվականի հունիսի 1-ին մասնավոր ջերմությամբ էր ողջունում Տ. Սահակ և Տ. Բաբգեն կաթողիկոսներին և խոսում էր Սիրիա՚ում և Լիբանանում ապաստան գտած հայ ժողովրդի գաղթական զավակների մասին. «Հանուրեամբ տեղեակ եմք զբազմազան վաստակոց և աշխատանաց Ձերոց ի վերակազմութիւն կաթողիկոսարանիդ, ի բացումն դպրոցաց և աստուածահաճոյ հաստատութեանց առ Ձեզ և յամենայն քաղաքս և յաւանս, ուր բնակեալ և դադարեալ կան ազգայինք Մեր: Ուրախ եմք յոյժ ընդ վաստակ և ընդ յաջողութիւն Ձեր, զոր իմ իսկ սեպհական համարիմ»:

Ամենայն Հայոց Հայրապետի անդրանիկ կոնդակից ութ օրինակներ ուղարկվել էին Անթիլիաս: «Այս կոնդակները,—գրում է Բաբգեն Վեհը,—ղրկվեցան կաթողիկոսության թեմական առաջնորդներուն, որպեսզի հանդիսավորապես կարդացվին եկեղեցիներու մեջ և բացատրվի ժողովրդյան ատոր բովանդակությունը» («Հասկ», 1933, էջ 49):

Տ. Բաբգեն կաթողիկոսը «Էջմիածին և Անթիլիաս» իր բովանդակալից մի այլ հոդվածի մեջ, որը գրվել է Ամենայն Հայոց Տ. Խորեն Ա կաթողիկոսի անդրանիկ կոնդակի առիթով, խոսելով երկու Աթոռների հարաբերությունների և համագործակցության մասին, նշում էր կիլիկյան թեմերում Ամենայն Հայոց Հայրապետի անդրանիկ կոնդակի ընթերցվելու կապակցությամբ. «Էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսության պատմության մեջ նախընթաց չունի այս դեպքը» («Հասկ», 1933, էջ 58):

1935 թվականի դեկտեմբերի 9-ին Անթիլիաս էր հասնում Ամենայն Հայոց Հայրապետի լիազոր-նվիրակ տ. Գարեգին արքեպ. Հովսեփյանցը, երկու Աթոռների միությունն ու համագործակցությունը սերտացնելու, սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքում խաղաղություն և ներդաշնակություն հաստատելու առաքելությամբ:

Բաբգեն Վեհը ողջունելով հայրապետական պատվիրակին, ասում էր. «Հրճվանքով կողջունեմ մեր սիրելի եղբոր՝ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին պատվիրակը և մեր անձնական բարեկամը, հանձին Ձեր Սրբազնության մեր այս համեստ հարկին ներքև... **Դուք նոր Հայաստանի շունչը կբերեք մեզի և ս. Էջմիածնի կարոտը»** (ընդգծումը իմն է—Ա. Հ.):

Հայրապետական պատվիրակը պատասխանում էր «պաշտոն ունեմ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի եղբայրական ողջույնները բերել Ձեզ և մոտիկից ծանոթանալ կիլիկյան Աթոռի և նրա թեմերի գործունեությանը, որոնց կազմակերպությունը այնքան սուղ ժամանակի մեջ, արդեն ուրախություն է պատճառել մեզ»:

Այնուհետև հայրապետական պատվիրակը առանձին տեսակցություններ էր ունենում և՛ երկու կաթողիկոսների, և՛ կիլիկյան թեմերի եպիսկոպոսների հետ «երկու Աթոռներու հարաբերությանց մասին:

Այս տեսակցության մեջ անվերապահ կերպով արտահայտվեցան կարծիքներ, և այս ազատ արտահայտություններեն հայտնըվեցավ, որ ամենեն գլխավոր խնդիրն է Հայաստանյայց եկեղեցվո պահպանությունը ամեն տեղ և ամեն գնով: Տ. Բաբգեն կաթողիկոսը հայտարարեց և շեշտեց, **թե Կիլիկիո Աթոռը կպահվի Էջմիածնի Աթոռին համար և իր բոլոր եպիսկոպոսներով հավատարիմ է Մայր Աթոռին** (ընդգծումը իմն է—Ա. Հ.):

Այլևս շատոնց վերջ գտած են Գեորգ-Մկրտիչյան սնոտի բանավեճերը, և ամենքս նվիրված ենք հայ ժողովուրդը պահելու իր մայրենի եկեղեցվույն ծոցը, իր բոլոր կարելի միջոցներով, և թե **պատրաստ ենք միշտ գործակցելու Մայր Աթոռին՝ դյուրացնելու համար անոր աշխատանքը սփյուռքի մեջ**: Վստահ ենք, որ Ձեր Սրբազնության առաքելությունը, Հայաստանյայց եկեղեցվո ներքին միությունը պահելու սփյուռքի մեջ, հաջողությամբ կպսակվի»: Գարեգին սրբազան պատասխանեց և ըսավ՝ «թե՛ Ն. Ս. Օծություն Ամենայն Հայոց Հայրապետը, և թե՛ իր միաբանակից եպիսկոպոսներ միևնույն ոգիով տոգորված են, և թե ինքը այս Աթոռն ուժավորված և ոգևորված պիտի մեկնի շարունակելու իր առաքելությունը սփյուռքի մեջ: Եվ ակնարկելով տեղ-տեղ հառաջ ե-

կած եկեղեցական վարչական բաժանումներու, հայտարարեց.—Զոր օրինակ, նախ Մարսիլիո մեջ հառաջ եկած երկպառակությունը վերցնելու համար իմ տված հրահանգները և իմ ցույց տված կարգադրությունները հարգվին, վստահ եղեք, որ միությունը ինքնին պիտի գոյանա, և Ամերիկայի մեջ ալ նույնքան հաջողությամբ պիտի վերնա երկպառակությունը» («Հասկ», 1935, էջ 145)։

1936 թվականի մարտի 29-ին, կիրակի օր, Անթիլիասում Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսը կատարում էր իր առաջին և, դժբախտաբար, վերջին մեռոնօրհնությունը։ Հանդիսության ժամանակ Բաբգեն Վեհը նոր մեռոնի մեջ խառնում էր «պատմական մեռոններ՝ մեր Աթոռին հին մեռոնին հետ, ասինքն ս. Էջմիածնեն՝ Ղազար Ջահկեցվո (1737—1751 թթ.), Եփրեմ Ձորագեղցվո (1810—1835 թթ.) և Գևորգ Ե-ի (1911—1930 թթ.) մեռոնները՝ ցույց տալու համար, թե Մի է Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետությունը և կաթողիկոսունք և պատրիարքունք գործակիցներ ենք իրարու և պաշտոնյաները այդ սուրբ միության» («Հասկ», 1936, էջ 18)։

Բաբգեն Վեհը իր նոր օրհնած սրբալույս մեռոնից նվեր էր ուղարկում փոքր սրվակով ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներին՝ «իբրև նշանակ եղբայրության, սիրո և համերաշխության նվիրապետական Աթոռներու»։

Մայր Աթոռ ս. Էջմիածին ուղարկված մեռոնի սրվակի վրա գրվել էր հետևյալը.

«ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆ
ՕՐՀՆԵԱԼ
Ի Տ. ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ ԿԻԼԻԿԻՈՅ
յԱՆԹԻԼԻԱՍ—ԼԻԲԱՆԱՆ

**1936 մարտ 29, Կիրակի**

յՇրկրորդ աւուր Տօնի
Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մտիցն ի Վիրապն եւ նուիրեալ սուրբ սիրով
Առ սիրելի եղբայրն մեր
Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
Ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին

**Ծանօթութիւն**

Ի յօրհնելն մեր զայս Մեռոն Սրբալոյս, խառնեցաք
ի նա զերիս հնագոյն Մեռոնս ի Մայր Աթոռոյ Սրբոյ
Էջմիածնի, զօրհնեալսն ասեմ յերջանկայիշատակ կաթողիկոսացն Ղազարայ Ջահկեցւոյ, Եփրեմայ Ձաքեցւոյ, Գէորգայ վերջնոյ Տփղիսեցւոյ, որպէս և զվերջին անգամ օրհնեալն ի Ծերունազարդ Սահակայ Հայրապետէն մերմէ Կիլիկիոյ, ի նշան միութեան կաթողիկոսական Աթոռոյ և ազգային միասնականութեան նուիրապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Խնդրեմք զի և դուք խառնեսջիք ի սմանէ ի Սեռոնն, զոր օրհնելոց էք, եթէ կամեսցի Տէր»։

Մեռոնի օրհնությունից չորս ամիսներ հետո, 1936 թվականի հուլիսի 9-ին, հինգշաբթի օրը, անակնկալորեն մահանում էր Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսը (1868—1936) վաթսունութ տարեկան հասակում, կաթողիկոսական գործունեության կես ճանապարհի վրա («Հասկ», 1936, հուլիս—օգոստոս, էջ 91—94)։

Այրիացավ Անթիլիասի Աթոռը։ 1935-ի նոյեմբերի 25-ին մահացել էր նաև դպրեվանքի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Գասպարյանը։

Անթիլիասի «ավազուտի մը եզերքը բարձրացած այս կմախքային կառույց-վանքեն երկու սյուն մեկեն ինկան տասը ամիսներու ընթացքին, երկու սյուն քով-քովի՝ Շահե և Բաբգեն։ Բայց, շա՞տ է այս։

Նախկին որբանոց Անթիլիաս։

Որբ Անթիլիաս» («Հասկ», 1936, էջ 46)։

Ծերունազարդ և վշտահար Տ. Սահակ կաթողիկոս Խապայան 87 տարեկան հասակում այս առթիվ գրում էր արցունքով և արյունով.

«Կրկին զարկավ վիշտը նորահաստատ մեր բույնին։ Ինկավ այր մեծ հազգե մեզմե, այր մեծ և գործոն» («Հասկ», 1936, էջ 90)։

Տ. Սահակ կաթողիկոսի 1936 թվականի հուլիս 20 թվակիր և համար 116 կոնդակով Կիպրոսի առաջնորդ տ. Պետրոս արքեպ. Սարաճյան նշանակվում էր ընդհանուր փոխանորդ՝ կաթողիկոսի հետ միասին «խորհրդակցությամբ վարելու կաթողիկոսարանիս վերաբերյալ ներքին և արտաքին բոլոր գործերը» («Հասկ», 1936, էջ 104)։

1937 թվականի մայիսին կահիրեաբնակ կ. պոլսեցի տեր և տիկին Սիմեոն և Մաթիլդ Ղալըգճյանների նվիրատվությամբ (4000 անգլ. ոսկի) գնվում էր Անթիլիասի կաթողիկոսարանի կալվածը, որպես եկեղեցու և ազգի սեփականություն։ 1937 թվականի սեպտեմբերին կաթողիկոսարանի և ամերիկյան Նիյր իստ Ռըլըֆի միջև ստորագըր-

վեց Անթիլիասի կալվածների գնման համաձայնությունը:

Անթիլիասի կաթողիկոսարանի կալվածների գնման ուրախ լուրը մեծ գոհունակություն է պատճառում նաև Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին:

1937 թվականի օգոստոսի 30-ին համար 466 նամակում Տ. Խորեն Ա կաթողիկոսը գրում էր Տ. Սահակ կաթողիկոսին, իր մասնավոր գոհունակությունը և ուրախությունը հայտնելով այդ առթիվ:

Կաթողիկոսարանի կալվածների վերջնական գնումից հետո ևս Տ. Խորեն Ա կաթողիկոսը 1937 թվականի սեպտեմբերի 3-ին, գոհունակությամբ գրում էր նաև կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ տ. Պետրոս արքեպ. Սարաճյանին («Հասկ», 1937, էջ 121):

1939-ին վախճանվում էր Տ. Սահակ կաթողիկոս Խապայանը՝ 90 տարեկան հասակում (ծնված 1849 մարտ):

**Բ. Երուսաղեմի Աթոռը**

1930 թվականի ապրիլի 27-ին՝ կիրակի օրը, վախճանվում էր Երուսաղեմի պատրիարք տ. Եղիշե արքեպ. Դուրյանը (1868 փետրվարի 23—1930 ապրիլի 27)՝ շուրջ ութ տարի ու կես փառավորելուց հետո Սրբոց Հակոբյանց առաքելական Աթոռը:

Դուրյան պատրիարքի մահը սեղանի վրա էր դնում պատրիարքական ընտրության հարցը: Դուրյանը Երուսաղեմի վերջին պատրիարքն էր, որի ընտրությունը կատարվել էր Կ. Պոլսում, 1921 թվականի սեպտեմբերին՝ բացառաբար ազգային սահմանադրության համաձայն:

Այժմ, 1930 թվականին, ազգային սահմանադրությունը պատմության արխիվն էր անցել, Երուսաղեմն ընկել էր անգլիական հոգատարության տակ 1917 թվականից ի վեր:

Դժբախտաբար, մեծանուն պատրիարքը իր գահակալության տարիներին չէր կարողացել կազմել Երուսաղեմի հայոց հաջորդ պատրիարքների ընտրության վերաբերյալ որևէ կանոնադրություն, որով առաջնորդվեր ազգն ու միաբանությունը, մինչդեռ Մայր Աթոռում, 1925 թվականին Գևորգ Ե կաթողիկոսը Պոլոժենիայի դադարումից հետո, կազմել էր 25 հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն-հրահանգ (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1968, Ա համար, էջ 43), որով կատարվել էին Տ. Խորեն Ա, Տ. Գևորգ Զ և Տ. Վազգեն Ա կաթողիկոսների ընտրությունները:

Այս իմաստով Դուրյան պատրիարքի մահը դժվարությունների առաջ էր դնում և՛ ազգը, և՛ միաբանությունը:

1930 թվականի մայիսի 5-ին, Դուրյանի մահից անմիջապես հետո, վանքի Տնօրեն ժողովը հրավիրում էր Միաբանական ընդհանուր ժողով՝ վանական կանոնադրության 24-րդ հոդվածի համաձայն, պատրիարքական տեղապահ ընտրելու համար: Ժողովում պատրիարքական տեղապահ էր ընտրվում Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ տ. Մեսրոպ եպս. Նշանյանը, որի պարտականությունն էր լինելու «օրենքի գծած սահմանին մեջ առժամապես վարել սուրբ Աթոռի գործերը և գլխավորաբար հսկել պատրիարքական ընտրության գործառնության վրա» («Սիոն», 1930, էջ 156):

Ստեղծված նոր կացության առաջ և որ[illegible] ընտրական կանոնադրության բացակայության պայմաններում Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրության հարցը լայնորեն քննության նյութ էր դառնում հայ մամուլում, ազգային-եկեղեցական իշխանությունների և մարմինների համար:

Օրվա հրատապ հարցն էր՝ ո՞վ պետք է ընտրի Երուսաղեմի նոր պատրիարքին, ա՞զգը, թե մի բուռ միաբանությունը. ընտրությունը ինչպե՞ս պետք է կատարվի, ի՞նչ սկզբունքով և ոգով:

Առաջինը Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչության խառը ժողովը ի պաշտոնե և հանգամանորեն զբաղվում էր այդ հարցով և 1930 թվականի սեպտեմբերի 4-ի իր նիստում այն մասնավոր քննության առարկա դարձնելուց հետո, հետ երկար խորհրդակցության առնում էր հետևյալ որոշումները, որոնք պաշտոնական գրությամբ փոխանցվում էին Մայր Աթոռ:

1. Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը կատարել ազգի հավաքականության մասնակցությամբ.

2. Պատրիարքի ընտրությունը անպատճառ հետաձգել մինչև 1930 թվականի հոկտեմբերը՝ ս. Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի գումարումը.

3. Պատրիարքի ընտրությունը ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի նյութ դարձնել և հետ քննության՝ ժողովում մշակել պատրիարքական ընտրության մի նոր կանոնադրություն, **ուր ճշտված և չեշտված լինեն պատրիարքական ընտրության մեջ ազգի ձայնն և մատակարարական գործառնության մեջ նրա հականշռի իրավունքը»** (ընդգծումը իմն է—Ա. Հ.):

Մայր Աթոռում քննության են առնվում վերոհիշյալ առաջարկները և Գերագույն հոգե-

վոր խորհուրդը, տեղակալ տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի գլխավորությամբ, որոշում է գրել Երուսաղեմ պատրիարքության տեղապահ տ. Մեսրոպ եպս. Նշանյանին և իրազեկ դարձնել նրան և միաբանությանը.

«1. Ազգային-եկեղեցական հաստատության և հայ մամուլի մեջ տիրող տեսակետներին՝ հրավիրելով սուրբ Աթոռի միաբանությանը արտահայտվելու հետևյալ խնդրի նկատմամբ՝ նշելով ազգի բաղձանքների իրականացման հնարավոր ուղին, ըստ յուր հայեցողության.

2. Առանձին գրությամբ ստանալ Երուսաղեմի սուրբ Աթոռի ընթացիկ տարվա ելևմտացույցը.

3. Իրազեկ դարձնել Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարչությանը՝ Երուսաղեմ ուղարկված Մայր Աթոռի գրությունների բովանդակությանը և Գերագույն հոգևոր խորհրդի սեփական տեսակետներին, այդ հարցի առնչությամբ» (Արձանագրություն):

Մյուս կողմից Երուսաղեմի պատրիարքական տեղապահը և միաբանությունը աշխատում էին պաշտոնական քառասունքից հետո, ըստ կանոնադրության, սկսել աշխատանքները պատրիարքական ընտրության:

Այսպես, Միաբանական ընդհանուր ժողով էր գումարվում Երուսաղեմում 1930 թվի հունիսի 19-ին, տեղապահի նախագահությամբ զբաղվելու համար պատրիարքական ընտրության նախապատրաստական աշխատանքներով:

Ժողովը նախ արձանագրում է, որ **«այժմ ամենակարևոր և էական խնդիրը պատրիարքական ընտրության եղանակն է»** (ընդգծումը իմն է—Ա. Հ.):

Հետ խորհրդակցության Միաբանական ընդհանուր ժողովը, փոփոխության ենթարկելով Երուսաղեմի պատրիարքի ընտրության վերաբերյալ Ազգային Սահմանադրության 20, 21, 22 և 23 հոդվածները, կազմում էր **«նախագիծ միաբանական կանոնագրի պատրիարքական ընտրության վերաբերյալ հոդվածներուն»**, ըստ հետևյալի.

20. Երուսաղեմի պատրիարքի մահեն հետո միաբանությունը իր միջեն տեղապահ մը կընտրե և հոգաբարձու կառավարությունը կհաստատե զայն.

21. Պատրիարքի մահեն քառասուն օր հետո տեղապահը նիստի կհրավիրե Միաբանական ընդհանուր ժողովը, որ գաղտնի քվեարկությամբ պատրիարքական ընտրելյաց հնգանուն ցանկ մը կպատրաստե.

22. Պատրիարք ընտրելիք անձը գոնե 35 տարին լրացուցած և միաբանության անդամ (եպիսկոպոս կամ վարդապետ) պետք է ըլլա.

23. Հաջորդ օրը Միաբանական ընդհանուր ժողովը այս հնգանուն ցանկին մեջեն կընտրե պատրիարքը, գաղտնի քվեարկությամբ և բացարձակ մեծամասնությամբ:

Ժողովը արձանագրում էր նաև հետևյալ շատ կարևոր հանգամանքը.

**«Նկատելով նախ, թե ամեն կողմե բաղձանք կհայտնվի, որ Երուսաղեմի պատրիարքի ընտրության մեջ մասնակցություն ունենա նաև հայ ժողովուրդը և երկրորդ նկատելով, թե գոյություն չունի ուրիշ իրավասու կենտրոնական մարմին մը, որ փոխարինեք Կ. Պոլսի ազգային երեսփոխանական ժողովը, և եթե ունենար իսկ, դարձյալ հոգատար կառավարության արգելքին պիտի հանդիպեր այն սկզբունքով, որով կմերժե Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի մասնակցությունը: Ժողովս նպատակահարմար կդատե Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը ենթարկել Ամենայն Հայոց կաթողիկոսի վավերացման, ըստ որում սուրբ Էջմիածնի Հայրապետ ընտրված ըլլալով հայ ազգի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներե բաղկացյալ համազգային ժողովե մը, ամբողջ ազգը կներկայացնե ինք, որով և իր վավերացումը ազգային վավերացման կնիք կստանա»** (ընդգծումն իմն է—Ա. Հ.):

Նախագծում որպես 23-րդ հոդվածի շարունակություն արձանագրվում էր, որ **«ընտրության արդյունքը կհաղորդվի սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին, և Անոր վավերացումը ստացվելե հետո, հոգատար կառավարության միջոցով կներկայացվի Լոնդոն՝ թագավոր-կայսեր հաստատության»** («Սիոն», 1930, էջ 271—274): (Ընդգծումն իմն է—Ա. Հ.):

1930 թվականի հունիսի 19-ի Միաբանական ընդհանուր ժողովի կողմից պատրիարքի ընտրության վերաբերյալ բարեփոխված կանոնագիրը հունիսի 26-ին տեղապահի պաշտոնական գրությամբ հաղորդվում էր Երուսաղեմի կառավարչին ի գիտություն:

Այնուհետև պատրիարքարանի և կառավարության միջև շարունակվում են բանակցությունները «պատրիարքական ընտրության շուրջ պաշտոնական գործողության» («Սիոն», 1931, էջ 222):

1930 թվականի դեկտեմբերի 22-ին տեղապահը առանձին տեսակցություն էր ունենում Երուսաղեմի անգլիացի կառավարչի հետ՝ տ. Կյուրեղ վրդ. Իսրայելյանի ընկերակցությամբ՝ «պատրիարքական ընտրության շուրջ»:

Դեկտեմբերի 25-ին տեղապահը հանկարծակի Միաբանական ընդհանուր ժողով էր հրավիրում, ուր գրավոր զեկուցում էր կառավարության հետ իր բանակցությունների շուրջ: **Կառավարությունը մերժել էր Երուսաղեմի պատրիարքի ընտրությունը Ամենայն**

Հայոց Հայրապետի վավերացման ենթարկելու Միաբանական Սահմանադրության նախագծի 28-րդ հոդվածը»:

Միաբանական ընդհանուր ժողովը այդ զեկուցագրի հիման վրա իսկույն նահանջում է իր հունիսի 19-ի որդեգրած դիրքերից և իբր «հանգամանորեն խորհրդակցելէ ետք» հարմար դատեց և որոշեց բարեփոխել 23 հունիսին տված իր որոշումը միաբանական կանոնագրի պատրիարքական ընտրության վերաբերյալ հոդվածներու մասին»:

«Սուրբ Աթոռույս Միաբանական ընդհանուր ժողովը իր ներկա տարեշրջանի 25 դեկտեմբերի 1930 ԺԵ նիստին մեջ լսելե հետո Ձեր Սրբազնության զեկույցը գոր ըրավ Երուսաղեմի Վսեմ. Կառավարիչին հետ իր 1930 դեկտեմբեր 22-ին ունեցած տեսակցության առթիվ, հետ խորհրդակցության քվեարկեց հետևյալ որոշումները.

**Առաջին.**—«Նկատելով որ սուրբ Աթոռույս պատրիարքի ընտրությունը Ամենայն Հայոց Հայրապետին վավերացման ենթարկելու պարագան նախընթաց մը չունի, այս անգամվան համար առկախ թողնել իր ներկա տարեշրջանի 19 հունիս 1930 նիստին մեջ այս կետին վերաբերմամբ տված որոշումը, և այս խնդրին լուծումը հանձնել ընտրելի ապագա պատրիարքին»:

**Երկրորդ.**—«Խնդրել բրիտանական հոգատար, արդարասեր կառավարութենեն հայոց ազգին և միաբանությանս դարավոր իրավանց պահպանումը և հառաջիկա պատրիարքական ընտրության միաբանությանս վերապահումը, հնգանուն ցանկին վրայեն ընտրելու պատրիարքը, արտոնությամբ Նորին Վեհափառության **թագավորկայսեր,** որ իրավունք ունի ըստ նախընթացին հաստատելու և վավերացնելու ընտրյալը»:

Միաբանական ընդհանուր ժողովը, անգլիական կառավարության հետ համախորհուրդ, իր այս անօրինական որոշումով ազգը զրկում էր Երուսաղեմի պատրիարքական Աթոռի գործերի վրա հսկելու և պատրիարքի ընտրության մեջ ձայն ունենալու դարավոր իրավունքից: Մի անգամ ևս ոտնահարվում էին Ազգային սահմանադրությունը, հայ եկեղեցու դարավոր կարգ ու կանոնը, և պայմաններ էին ստեղծվում, որ մի խումբ վանականներ հետագայում ազգի հականշռից ապատված, տեր ու տնօրինություն անեին վանքում:

1931 թվականի հունիսի 8-ին պատրիարքարանում գումարվում է նորից Միաբանական ընդհանուր ժողով, ուր ընթերցվում է 1931 հունիս 2 թվակիր Երուսաղեմի անգլիական կառավարչի հետևյալ պաշտոնագիրը, որով արտոնվում էր պատրիարքական ընտրության փոփոխված վերոհիշյալ կանոնների գործադրությունը.

«Արտաքին գործոց նախարարը կընդունի, որ Երուսաղեմի հայոց նոր պատրիարքի ընտրությունը կատարվի Միաբանական ընդհանուր ժողովի 19 հունիս 1930 և 25 դեկտեմբեր 1930 նիստերու որոշումներուն համաձայն: Ընտրության արդյունքը հաղորդվելու է այս պաշտոնատան, որպեսզի կարգադրություններ ըլլան ընտրված պատրիարքին անունը Վեհափառ թագավորին ներկայացնելու՝ վերջնական հաստատման համար»:

1931 թվականի հունիսի 15-ին Միաբանական ընդհանուր ժողովում, ըստ նոր կանոնադրության, կազմվում էր «պատրիարքական ընտրելյաց հնգանուն ցանկ», իսկ հաջորդ օրը, հունիսի 16-ին, Միաբանական ընդհանուր ժողովը 41 միաբանների 34 քվեի բացարձակ մեծամասնությամբ Երուսաղեմի պատրիարք էր ընտրում Եգիպտոսի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանին՝ Օրմանյանի և Դուրյանի աշակերտին և հայ եկեղեցականության կարկառուն և ինքնատիպ դեմքերից մեկին:

Պատրիարքական տեղապահի ստորագրությամբ այս ընտրության տեղեկագիրը հաղորդվում էր Մայր Աթոռին, հուլիս 3 պաշտոնական գրությամբ («Սիոն», 1931, էջ 285):

Ամենայն Հայոց Հայրապետի տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսը 1931 թվականի օգոստոսի 4-ին և համար 238 գրությամբ «իր խնդակցությունն» էր հայտնում «հաջող ընտրության համար»՝ շեշտելով, որ տ. Թորգոմ պատրիարքը «ըստ ամենայնի կարենացն Մեր և ընտրողների հույսերն ու բաղձանքները յուր բոլոր ջանքերն ու օգտակար գործունեությունը նվիրաբերելով հայության նվիրական սրբավայր Երուսաղեմի Ս. Հակոբյանց ուխտի բարոյական և նյութական բարգավաճման» («Սիոն», 1931, էջ 286):

Տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսը օգոստոս 11 թվակիր և համար 244 գրությամբ շնորհավորում էր նաև նորընտիր պատրիարքին և ապա օգոստոս 12 թվակիր և համար 250 գրությամբ նշում, որ «այս անգամվա **պատրիարքական ընտրությունը, ըստ ձևի սահմանափակ էր, պակասում էր ազգի ձայնը, ազգային երեսփոխանական պատկառելի ժողովի մասնակցությունն ու որոշումը** (ընդգծումը իմն է—Ա. Հ.): Հանգամանքների և ստեղծված պայմանների հետևանքով, միաբանությունն է միայն, որ յուրովի կատարել է ընտրությունը, սակայն նույն միաբանությունը հեռատեսությունն է ունեցել խորապես գիտակցելու այդ հանգամանքը և յուր քվեները կենտրոնացրել է

այնպիսի մեկի վրա, որին անպայմանորեն միաձայնությամբ կընտրեր ազգի ընտրյալ ներկայացուցիչներից կազմված հեղինակավոր ազգային-եկեղեցական ժողովը» («Սիոն», 1931, էջ 319)։

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալը նույն պաշտոնական գրության մեջ, հանուն հայ ժողովրդի, թելադրում էր նորընտիր պատրիարքին, միջոցներ ձեռք առնել, որպեսզի հաջորդ պատրիարքական ընտրությունները չլինեն «ըստ ձևի սահմանադրական» և ապահովվի ընտրությունների մեջ նաև ողջ «Ազգի ձայնը, ըստ կարգաց և կանոնաց հայ եկեղեցու»։

1931 թվականի հոկտեմբերի 22-ին Ժորժ Ե թագավոր-կայսրը վավերացնում էր ընտրությունը և նույն թվականի նոյեմբերի 26-ին տեղի էր ունենում տ. Թորգոմ պատրիարքի գահակալությունը։

1931 թվականի դեկտեմբերի 9 թվակիր իր նամակով տ. Թորգոմ պատրիարքը գրում էր Մայր Աթոռ, իր ընտրության իշխանության կողմից հաստատման մասին և հավաստիացնում, թե ինքը անցել է իր պաշտոնի գլուխը և թե **«Ամենայն Հայոց հայրապետական իշխանության հանդեպ հավատարմությունն ու հնազանդությունը»** իր պարտքն է համարելու միշտ և **«Մայր Աթոռի բարոյական-տնտեսական բարգավաճումը՝** իր գործունեության նպատակը», ինչպես միշտ։

Արդարև, տ. Թորգոմ պատրիարքը Տ. Խորեն Ա կաթողիկոսի աջ բազուկն էր սփյուռքում, անխարդախ էջմիածնական, ջերմ պաշտպան Մայր Աթոռ ս. Էջմիածնի իրավունքների և գերագահության։

1916 թվականի սեպտեմբերին Գևորգ Ե-ը նրան նշանակել էր հայրապետական պատվիրակ «ելանել յայցելութիւն հոգևոր որդւոց մերոց գրելոց ի սահմանամերձ վայրս Եգիպտոսի և Սուդանի, ապա անտի անցանել ի հնդիկս, ի պարսս...»։

1929 թվականի օգոստոսին նույնպես տ. Թորգոմ արքեպիսկոպոսը նշանակվում էր հայրապետական պատվիրակ ողջ Եվրոպայի հայոց։

Տ. Խորեն Ա կաթողիկոսը Թորգոմ պատրիարքին էր հանձնում իր 1934 թվականի երկու կոնդակներով, սփյուռքում Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի հանդիսությունների ղեկավարությունն ու 1937 թվականին հայ եկեղեցու բարեկարգության վերաբերյալ Գերագույն հոգևոր խորհրդի զեկուցագրի ոգով աշխատանքները ղեկավարելու գործը։

Երբ հայրապետական նոր պատվիրակ տ. Գարեգին արքեպիսկոպոսը եկավ սփյուռք, տ. Թորգոմ պատրիարքը թելադրում էր այս առթիվ սփյուռքին.

**«Պետք է լռեն կիրքերը, պետք է ամենեն ավելի և բոլոր կողմերուն վրա իշխե զիջողության ոգին։ Պետք է ամենքը բոլորվին Մայր Աթոռի Առաքյա՛ին շուրջ և լսեն անոր խաղաղության խորհուրդները... Նվիրակը պետք է երգը իր շրթունքին վերադառնա Հայաստան, ի ս. Էջմիածին, Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին հաղորդելու համար սփյուռքի հայության որդիական համբույրն ու հարգանքը»** («Սիոն», 1936, հոկտեմբեր)։

Թորգոմ պատրիարքը իր յոթնամյա գահակալության շրջանին (1931 նոյեմբեր—1939 փետրվար 20) իր եկեղեցական-ազգային, հոգևոր-կրոնական, գրական-քարոզչական, վանական-վարչական կազմակերպչական գործունեությամբ հանդիսացավ Երուսաղեմի Աթոռի երախտաշատ հայրապետներից մեկը։

Նրա օրով բարձր ու կազմակերպված հիմքերի վրա դրվեց Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի ուսումնական գործը տ. Տիրան վրդ. Ներսոյանի տեսչությամբ, ինչպես նաև դպրոցական գործը առհասարակ Պաղեստինի հայ գաղութի ծոցում։ Ընծայարանում և Ժառանգավորաց վարժարանում դասավանդելու հրավիրվեցին ծանոթ մտավորականներ, որոնց թվում մանկավարժ, արվեստաբան Շահան Բերբերյանը, գրականագետ Հակոբ Օշականը։ Անձամբ ինքը՝ գրագետ պատրիարքը, մեծ նվիրումով դասավանդում էր գրաբար, եկեղեցական մատենագրություն, եկեղեցական իրավունք, կրոնից պատմություն և քարոզխոսություն։

Թորգոմ պատրիարքի օրով վանքի տպարանը օժտվեց արագատիպ, էլեկտրաշարժ մամուլով։ 1933 թվականին նշվեց վանքի տպարանի հաստատման 100-ամյակը։

Վանքի միաբանության մեջ Թորգոմ պատրիարքը հաստատեց վանական կարգապահություն և նվիրումի ոգի՝ ս. տեղյաց աննահանջ ծառայության և ազգային իրավունքների պաշտպանության։

«Սիոն» ամսագիրը տ. Թորգոմ պատրիարքի խմբագրության ներքո դարձավ հայ եկեղեցու ծանր հրետանին, նրա հոյակապ խմբագրականներով, սքանչելի «Նոթք և Նիշք»-երով, որոնցում ընդգրկում էր հեղինակությամբ, իմաստությամբ և համարձակությամբ գաղթաշխարհի ողջ կյանքը՝ իր լուսավոր և ստվերոտ կողմերով։

Թորգոմ պատրիարքը ճոխացրեց Դուրյան մատենադարանը, հիմնեց Դուրյան թարգմանչաց գրական մրցանակը։ Նրա օրով կենդանի մնաց միշտ եկեղեցու բեմը, պայծառ՝ եկեղեցիներն ու սրբավայրերը։

Տ. Թորգոմ պատրիարքը մեծ ուշադրություն

դարձրեց վանքի տնտեսական կացության բարվոքման վրա։ Նրա օրով վանքը ընկել էր շուրջ 100000 անգլիական ֆունտ ստեռլինգի պարտքի տակ։ Թորգոմ պատրիարքի ձեռք առած խնայողական ռեժիմի հետևանքով ոչ միայն «զգետնվեց պարտքի վիշապը» մեծ մասամբ, այլ նաև Երուսաղեմում, Յաֆայում, Բեթղեհեմում և Ամմանում վանքապատկան հողերի վրա կառուցվեցին հասութաբեր նոր շենքեր, մեծապես բարելավելով վանքի և միաբանության տնտեսական վիճակը։ Վանքի տնտեսական բարեկարգության գործում Թորգոմ պատրիարքի մեծ խորհրդականը եղավ ելևմտագետ-տնտեսագետ Ոսկան Բեյ Մարտիկյանը, որը պատրիարքի կողմից հրավիրվեց Երուսաղեմ՝ այդ գործի համար։

Թորգոմ պատրարքի կենսագիր Արշակ Ալպոյաճյանը նրան անվանել է հայ եկեղեցու «արթուն պահակ», որի «միշտ շահագրգռության առարկան եղան... ընդհանուր հայ եկեղեցվո շահերը, անոր կազմակերպության ուժեղացումը, անոր Մայր Աթոռին և մյուս Աթոռներուն վիճակը...։ Իր այս ջերմագին զգացումը և հարումը և հավատարմությունը դեպի Մայր Աթոռ մեծապես գնահատվեցավ Խորեն Ա կաթողիկոսեն, որ 1936 նոյեմբերին զինքը վարձատրեց սուրբ Գրիգոր Լուսավորչի պատվանշանին առաջին կարգի ականակուռ խաչով» (Արշակ Ալպոյաճյան, «Թորգոմ պատրիարք Գուշակյան», Կահիրե, 1940, էջ 668—670)։

Մեծանուն պատրիարքը մահանում էր 1939 թվականի փետրվարի 20-ին։

Կորուստ կորստի վրա էր կրում հայ եկեղեցու նվիրապետությունը։

Եթե Տ Խորեն Ա. կաթողիկոսի գահակալության տարիներին նվիրապետական Աթոռները ունեին իրենց գահակալները, ապա մինչև 1939 թվականը մահանում էին Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսը (1936 մայիս), Տ. Խորեն Ա կաթողիկոսը (1938 ապրիլ), Տ. Սահակ կաթողիկոսը (1939), տ. Թորգոմ պատրիարքը (1939)։ Այրիանում էին հայ եկեղեցու նվիրապետական երեք Աթոռները։

## Գ. Կ. Պոլսի Աթոռը

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի վրա էր գտնվում տ. Մեսրոպ արքեպ. Նարոյանը։ Առանձին ասելիք չունենք այս Աթոռի գործունեության մասին.

«Կ. Պոլսի հայ պատրիարքությունը, որ դարերե ի վեր դարձած էր վարչական կեդրոն մը Թուրքիո հայ եկեղեցվույն համար, այժմ ամփոփված է հին մայրաքաղաքի սահմաններուն մեջ, պահելով սիրտերու մեջ իր նախկին կազմակերպության և գործունեության հմայքը միայն» («Սիոն», 1930, էջ 35)։

Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով ոմանք արտաքին թելադրությամբ փորձեցին անխելք և վտանգավոր մի տագնապ ստեղծել Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի շուրջ։ Այդ տագնապի մասին կարդում ենք «Սիոն» ամսագրի մեջ. «Եկեղեցվո և ազգին շահերու անունով այդ անկարգապահությունը ընողներ ցույց տվին, թե իրենք ամենևին չեն հասկնար եկեղեցվույն և ազգին շահերը, ոչ ալ կզգան իրենց վրա ճնշող քաղաքական նոր մթնոլորտին ծանրությունը։ Սահմանադրություն մը ունինք, որու տառը և ոգին իրավունք կուտան ժողովրդին, որ պատրիարքները վերցնե-դնե... բայց օրինական միջոցներով։ Ատկե տարբեր բոլոր միջոցներ և կերպեր պարզապես դավեր են օրենքի և օրենքով ընտրված անձի մը դեմ։ Կ. Պոլսի Աթոռը կգտնվի այնպիսի փափուկ պայմաններու մեջ, որ հայ եկեղեցվո զավակներուն պարտքը պիտի ըլլա ներքին ցնցումներով նոր տագնապներ չստեղծել անոր շուրջ։ Չենք ուզեր անձնական տեսակետներե դիտել այս հավետ դատապարտելի փորձին պատճառները։ Բայց անարդարություն պիտի ըլլար, եթե դիտել չտանք, թե Կ. Պոլսի այսօրվան պատրիարքին պես ոչ փառատենչիկ, կասկածելի շահերե շատ վեր, իր նկարագրով անուշ, և իբրև հոգևորական մարդ, անբասրելի դեմք մը պետք էր, որ հարգանքի հարկ մը դրած ըլլար տխուր փորձը հղացողներուն և գործադրողներուն վրա» («Սիոն», 1930, էջ 68)։

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՁԵՌԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ա

Մաշտոցյան Մատենադարանի 1520 և 1521 համարների տակ պահվում են միևնույն ձեռագրի երկու մասերը: Ձեռագիրը իր չափսերով քավականին մեծ է, այժմյան վիճակով՝ 63×39 սմ: Ինչպես ցույց են տալիս կտրված լուսանցազարդերը, այն եղել է ավելի մեծ: Ձեռագիրը բաղկացած է եղել ՀԵ (75) պրակից կամ 75×12=900 հաստ թերթերից: Այս պատճառով կիսվել է երկու մասի՝ Ա—ԼԷ պրակ կամ 444 թերթ և ԼԸ—ՀԵ պրակ կամ 456 թերթ: Այժմ առաջին կեսն ունի 402, իսկ երկրորդը՝ 453 թերթ: Ձեռագրից պակասում է 45 թերթ (900—402—453): Ձեռագիրը թերթաթափ է երկու մասերի սկզբներից ու վերջերից: Այդ վիճակով էլ նկարագրվել է Շահնազարյանի և հրատարակվել Կարենյանի կողմից 1863 թ.: Նրանց Ցուցակում[1] կրում է 915 և 914 (1520 և 1521) համարները:

Ձեռագիրը Տոնական է կամ Ճառընտիր, գլխավոր հիշատակարանը չկա, բայց բազմաթիվ հիշատակագրությունները նույնանման են, որոնցից հայտնի են դառնում գրչի անունը, ստացողները, այն ուխտը, որի միաբաններն են ստացողները, ինչպես նաև ստորին երկու լուսանցքներում՝ ժամանակի վերաբերյալ երկու՝ 1404 և 1406 հիշատակություններ:

«Ողորմեսցի ստացողաց գրոցս, հարազատ կրաւնաւորացն Ստեփաննոսին և Թումային, և ծնաւղաց նոցին Մկրտչին և Մինային, այլ և քարտիս կոկողին Աւետիս աբեղին և ծնողաց նորին՝ Յոհաննիսին և Արուսին և Գրիգոր գծաւղին»[2], «Մանաւանդ Տէր Յոհաննէսին Նկարենայ եպիսկոպոսին և ստացողաց...»[3]: Հետագայում, հավանաբար 1405 թ., երբ տեր Հովհաննես եպիսկոպոսն «յանօրինաց, սպաննաւ և ի Քրիստոսէ պսակեցաւ»[4], ձեռագրի ստացողները դառնում են Նկարենա ուխտի առաջնորդները, «ողորմի ստացողաց գրոցս հարազատ կրօնաւորացն տէր Թումա եպիսկոպոսին և հայրապետ Ստեփաննոսին՝ առաջնորդաց Նկարենայ սուրբ ուխտին»[5]: Ստացող Ստեփանոս և Թումա եղբայրների Նկարենա ուխտի միաբան, ապա առաջնորդ լինելը թույլ է տալիս ենթադրելու, որ Ճառընտիրը գրվել է Ռըշտունյաց գավառի Նկարենա վանքում: Եվ իսկապես, այդ է վկայում այժմ անհայտացած մի Գանձարանի հիշատակարան[6]:

---

[1] Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տպագրեալ հրամանաւ տեսուռն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց: Ծախուք ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ դպրոցի ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի, Թիֆլիս, 1863 թ., №№ 915, 914:

[2] Մատենադարան ձ. 1520, էջ 52ա:

[3] Նույն տեղ, էջ 1ա:

[4] Մատենադարան ձ. 1521, էջ 332բ:

[5] Նույն տեղ, էջ 286բ:

[6] Հիշատակարանը բերում ենք ամբողջությամբ: Ձեռագիրը գտնվել է Կտուց անապատում, և հիշատակարանը տարբեր ժամանակներում ընդօրինակել են Գ. Փիրղալեմյանը, Օ. Բարաղամյանը և Ե. Լալայանը: Առաջինի ընդօրինակությունը համառոտ է և «Նոտարքում» գրված է 1401 թվականի տակ, (էջ 14) պակասավոր է նաև Լալայանի ընդօրինակությունը, որը Լ. Խաչիկյանը մուծել է «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի Ա մասում, տես

«Արդ գրեցաւ Գանձարանս այս յընտիր և ի ստոյգ աւրինակէ... ցանկացող եղեալ այսմ աստուածային... բուրաստանիս աստուածասէր և իմաստուն միայնակեացս, նայ, որ մականուն Նանուան կոչի... ստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց. յիշատակ իւրն և ծնողացն Սիմէոնի և Քնքուշոյ, և եղբաւրն Յովհաննիսայ և այլ ամենայն արեան մերձաւորացն:

Արդ գրեցօ ցանկալի մատեանս այս յերկիրս ըռըշտուն[ե]աց, ի հրեշտակայքնակ յարկիս, որ կոչի Նկար, ընդ հովանեաւ Սրբութեանս և սուրբ Աստուածածնին, և սուրբ Ստեփանոսին, ի հայրապետութեան տեառն Դաւթի և յաշխարհակալութեան Թամուր-ղանի, և ի տեղապահութիւն սուրբ ուխտիս՝ իմաստուն և հեզահոգի տէր Յոհաննիսի, որ կամակից եղև գրեյոյ սորայ մարմնաւոր պիտոյից և այլ ամենայն սպասաւորութեամբ: Եւ կան բնակեալ յայսմ անապատիս բազում կրոնաւորք: Այլ և Ստեփաննոս և Թումայ սպասաւորեցին մեզ ի պէտս կերակրոյ այլ և զմեծ հռետոր զԳրիգոր վարդապետ, զուսուցիչն մեր, որ զՏաւնականն սկսաւ ի գրել և ես զԳանձարանս, ի մարգաց ամիս ի միաշաբաթ եղև սկսումն գրոցս:

Ով սուրբ մանկունք յեկեղեցոյ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերնոց յիշեցեալսն»[7]:

Այստեղ նույն մարդկանց և երևույթների հետ գործ ունենք: Նույնն է Նկարեն կամ Նկար վանքը, առաջնորդը՝ «Յովհաննէս իմաստուն և հեզահոգի» եպիսկոպոսը, անապատի միաբաններ Ստեփաննոսը և Թուման, որոնք կերակրում էին Գրիգոր հռետորին, որ և ուխտի առաջնորդի, իրենց համար Տօնականն էր ընդօրինակում, և աշակերտին, որ Գանձարան էր ընդօրինակում: Համընկնում է նաև ժամանակը: Որ Տօնականը գրվել է Ռշտունյաց Նկարեն վանքում, հաստատում է Գանձարանի գրիչը: Երկու ձեռագրերն սկսվել են մի օրում նույն տեղում: Իսկ ե՞րբ են գրվել այս երկու ձեռագրերը:

Մինչ այդ պարզելը, անհրաժեշտ է գիտենալ, որ Ճառընտիրի գրիչ Գրիգորը, «սպասաւոր բանի» կամ «մեծ հռետոր Գրիգոր վարդապետը» Խլաթեցին է: Ապացույց՝ Մաշտոցյան Մատենադարանի շուրջ մեկ տասնյակ ձեռագրերը, որոնք գրվել են Ծերի որդի Գրիգոր վարդապետի ձեռքով Ցիպնավանքում, Խառաքաստավանքում և Երուսաղեմում:

Գրիգոր Խլաթեցին ինքնատիպ գրչություն ունի, նույնիսկ որոշ տառերի իրեն հատուկ գրչություն, որով անմիջապես մատնում է իրեն: Բացի այդ, Ճառընտիրում կան ճառեր և ներբողներ, որոնք հայտնի են Գրիգոր Խլաթեցու անունով, և դրանց առաջին անգամ հանդիպում ենք այստեղ, հեղինակի մակագրությամբ՝ «զԳրիգոր վարդապետ գըծաւղ սորին և յօրինող ճառիս»[8] կամ, «ի գըծաւղէս բան վասն տեառն Ներսիսի»[9]:

Այժմ անդրադառնանք ժամանակի հարցին: Գրիգոր Խլաթեցին երբ է սկսել Ճառընտիրի ընդօրինակությունը. «ի մարգաց ամիս, ի միաշաբաթ եղև սկսումն գրոցս»,— միջամտում է Գանձարանի գրիչ նրա աշակերտը: Այսպիսով մենք ունենք ձեռագրի ընդօրինակությունն սկսելու ամիսը և օրը (ոչ ամսաթիվը), մարգաց ամսի չորս կիրակիներից մեկը: Խլաթեցին Ճառընտիրի առաջին կեսի 293ա երեսի ստորին լուսանցքում գրում է. «ՊԾԳ (1404) թըւին: Զգործս ձեռաց մերոց՝ ուղիղ արա մեզ տէր, և զգործըս ձեռաց մերոց՝ յաջողեա մեզ»[10]: Այսպես գրում է Խլաթեցին (և ուրիշները), երբ գործը նոր է սկսում, կամ որոշ դադարից հետո վերսկսում: Այդպես էլ երևում է: Նա այդ գրում է 28-րդ պրակում, այսինքն՝ ձեռագրի 28×12=336-րդ թերթում[11] կամ ուլց ձեռագրի ավելի քան մեկ երրորդը ընդօրինակելուց հետո: Այստեղ հիշենք, որ Ճառընտիրն սկսված է մարգաց ամսին: Այդ ամիսը տարվա հայկական տասնմեկերորդ ամիսն է, որի միաշաբաթ կամ կիրակի օրերը ընկնում են 7, 14, 21 և 28-ին[12]: Եթե նույնիսկ առաջին կիրակի՝ այսինքն Մարգաց ամսի 7-ի օրը ընդունենք, որ «եղև սկսումն գրոցս», իսկ Խլաթեցու ՊԾԳ—թիվը գրված լինէր թեկուզ հաջորդ՝ հրոտից ամսի վերջերին, այսինքն՝ նոր տարվա սկիզբ նավասարդից մի քանի

էջ 16—17: (Հենվելով Փիրղալեմյանի վրա, դրել է 1401 թվականի տակ): Առավել հաջողը Բաղրամյանինն է, որ բերում ենք ամբողջությամբ, Մատենադարանի 6998 ձեռագրից:

[7] Մատենադարան ձ. 6999: Այս ձեռագիրը Ռ. Բաղրամյանի կազմած Կտուց, Լիմ և Վարագ անապատների ձեռագրերի ցուցակն է, համառոտ նկարագրությամբ և հիշատակարաններով:

Կտուցի № 78 ձեռագրի տակ կարդում ենք.

«Գանձարան, 29×19×11, սկզբէն ու վերջէն մագաղաթ պահպանակ՝ գրուած ստար գրով. հասարակ արուեստով ու կարմրադեղով ծաղկած, երկուստեք թուղթերը քափած և բուն յիշատակարանը ինկած, երկէջեան և մէն-միև քսանմեկ տող»:

[8] Մատենադարան, ձ. 1521, էջ 422բ:

[9] Նույն տեղ, էջ 407ա:

[10] Մատենադարան ձ. 1520, էջ 293ա:

[11] Պրակների թերթաքանակի և այժմյան էջերի անհամապատասխանության պատճառը ձեռագրի սկզբից թերթերի պակաս լինելն է:

[12] Բ. Ե. Թումանյան, Առձեռն Տոմարացույց, Երևան, 1965, էջ 99 («Շաբաթվա օրվա որոշումը հայոց Մեծ թվականով»: Տես Աղյուսակը):

օր առաջ, ապա շուրջ 50 օրում արագագիր և քաջ քալիտուղար Գրիգոր Խլաթեցին 63×39 սմ մեծությամբ, երկսյուն՝ սյունակը 47 տող (իսկ տողը՝ 25 տառ), 336 թերթ չէր կարող գրել: Եթե գրությանը ավելացնենք լուսանցազարդերը և երկու մեծ կիսախորանները, որոնք գրչի ձեռքով են կատարված, գործն ավելի կդժվարանա: Սրանցից բացի ծանր էր նաև թուղթ կոկողի գործը: Այդ մեծությամբ և սովորականից հաստ թուղթ կոկելը այնքան էլ հեշտ չէր: Այդ էր պատճառը, որ Գրիգոր Խլաթեցին, ստացողներին հավասար, հիշում է նաև թուղթ կոկող Ավետիս աբեղային: Գրիգոր Խլաթեցին 1402 թ. Մսառնեվանում ավարտած Ավետարանի մասին գրում է.

Քառասուն երկու աւր ամենին
Տառս գրեցաւ ասստուածային[13]:

Եթե նա քառասուներկու օրում մի Ավետարան է ավարտում, ապա մոտավորապես նույնքան օրում չէր կարող նրանից մոտ երեք անգամ ավելի գրել. այն էլ մեծ թղթի վրա, որի գրելն ավելի դժվար էր, քան փոքր թուղթ ունեցող Ավետարանը: Մնում է ենթադրել, որ ոչ թե 1404, այլ 1403 թ. մարգաց ամսի միաշաբաթը նկատի ունի Գանձարանի գրիչը, որ «եդև սկսումն գրոցս»: Բայց այս բոլորովին չի նշանակում, որ 1403 թ. հունիսից մինչև 1406 թ. կեսերը Խլաթեցին նստել է Նկարենա վանքում և մի Ճառընտիր օրինակել: Գրիգոր Խլաթեցին Ցիպնավանքի առաջնորդն էր. ուներ բազմաթիվ աշակերտներ և միաժամանակ գրչությամբ էր զբաղվում: Մեր կարծիքով Ճառընտիրի ընդօրինակությունն սկսել է 1403 թ. հունիսին, գրել է մի քանի ամիս, ապա վերադարձել է Ցիպնավանք: 1404-ին վերադարձել և շարունակել է 28-րդ պրակից: 1405 թվականին հայտնի չէ, եկել է Նկարենա ուխտ թե ոչ. այնպես որ 1406 թ. փետրվարի կեսերին նա գրում էր 49-րդ պրակը[14]: 1406 թվականի կեսերին ավարտել էր արդեն Ճառընտիրը, երբ Վարդան Հոգոցեցու մահից հետո՝ ստանձնեց Խառաբաստի դպրոցի տեսչությունը:

Այսպիսով Մատենադարանի №№ 1520 և 1521 ձեռագրերը, որոնք Գրիգոր Խլաթեցու Ճառընտիրի երկու մասերն են, գրվել են 1403 թ. մարգաց ամսից 1406 թ. կեսերն ընկած ժամանակաշրջանում, Նկարենա վանքում: Նույն վայրում, նույն թվականին է սկսվել նաև նրա աշակերտի կողմից Գանձարանի ընդօրինակությունը: «Յընտիր և ի ստոյգ աւրինակ»-ը եղել է, հավանաբար, Գրիգոր Խլաթեցու Գանձարանը, որը նա կազմել էր դեռևս 1400 թվականին:

Այս ձեռագիրը միաժամանակ անառարկելիորեն ապացուցում է, որ Գրիգոր Խլաթեցին նաև ծաղկող է և նա է մեծ մասամբ ծաղկել ու նկարազարդել իր օրինակած ձեռագրերը: Խլաթեցին ծաղկողների մասին ոչ մի հիշատակություն չի թողնում, այն ժամանակ, երբ մանրամասնորեն հիշում է բոլոր այն անձանց, ովքեր կապված են ձեռագիրն ընդօրինակելու հետ: Ձեռագրի 49-րդ պրակի մի լուսանցքում «Երանելոյն Եփրեմի Խորին Ասորւոյ ասացեալ ի գալուստն Քրիստոսի քառասունաւրեայ ի տաճարին յընծայումն» ճառի դիմաց Խլաթեցին նկարել է մի շքեղ տաճար և ստորին լուսանցքում գրել. «Այս արարի, որ թիւն ի ՊԾԵ (1406) էր: Տաւնս ի յայս տեղս հանդիպեցաւ, այնոր համար յայս տեղս եդաք»[15]: «Այս արարի» բառերը վերաբերում են լուսանցքում նկարված տաճարին, որն իր ոճով, գույների օգտագործման նախասիրություններով բոլորովին նման է Խլաթեցու մյուս ընդօրինակությունների նկարներին և լուսանցազարդերին:

## Բ

Մատենադարանի № 3796 ձեռագիրը Ներսես Լամբրոնացու Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի աշխատության ընդօրինակությունն է. ներկա վիճակում 622 թերթ է՝ 37×27 սմ մեծությամբ: 17-րդ դարում այն ունեցել է 655 թերթ[1]: 33 թերթ պակասում է վերջից, բնականաբար, բացակայում է նաև գլխավոր հիշատակարանը, և անհայտ են մնում գրչության հանգամանքները: Ձեռագիրը, որպես նվեր ստացվել է Աստրախանից և մտծվել Գևորգյան հավաքածուի մեջ՝ անցյալ դարի վերջերին: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը այն համարել է ԺԳ դարի ընդօրինակություն[2], այդպես էլ անցել է հետագա

---

[13] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 29: Գ. Խլաթեցու օրինակած մի Ավետարան պահվում է Մատենադարանում, որի չափսերն են 23×16, թերթ՝ 265, տող՝ 21. (Տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա էջ, 1069 ձ. 3714:

[14] Մատենադարան, ձ. 1521, էջ 191բ:

[15] Նույն տեղում:

[1] Ձեռագրի 4բ էջում, 17-րդ դարում նկարված Դավիթ մարգարեի նկարի վերևում և ներքևում, կատարված միևնույն բովանդակությունն ունեցող հետևյալ հաշիվը—«Սաղմոսաց մեկնիչս ունի՝ թուղթս ՈԾԵ (655) և ԵՋՄ՝ ԱՋԻ (2920) և տողս Զ բիւր և ՐԾ (65500) և գիրս ՃՂԶ բիւր և Ր (1,965,500), պակաս է և ոչ աւելի»:

[2] Մատենադարան, ձ. № 3796, էջ 1ա;

ցուցակներին և մատենագիտությանը[3]: Սակայն ձեռագրում հանդիպող հիշատակագրությունների օգնությամբ հնարավոր է որոշել ձեռագրի գրության ստույգ ժամանակը և վայրը:

«Զարքուցանող ծարաւեալ հոգոց սուրբ տումարիս զստացաւղն զԿարապետ քահանայն և զհամեստ կենակիցն իւր զԳուհարտիկինն և զաստուածապարգե զաւակսն նոցին զԱստուածատուրն և զՀիլայն, և զպատուելի ծերունի ծնաւղսն իւր՝ զփոխնեցեալսն առ Քրիստոս՝ զԱստուածատուրն և զԱղութն, և զայլ ամենայն արեան մերձակայսն, զկենդանիսն և զհանգուցեալսն՝ զՄովսէսն և զԱւգերն, և զԼայն, զՀիլայն և զԸռստակէսն յիշեսջիք առ Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրելով:

Ընդ նմին և զիս, զանարժան և զմեղապարտ զփցուն և զանիմաստ գծաւղս զԽոսրով երէց կոչեցեալ անուամբ և ոչ գործով ի կարգ քահանայութեան, յիշեսջիք ի Քրիստոս միով տէր ողորմայիւ և զաստուած զյիշողսդ զյիշեցողսդ յիշէ ի միւսանգամ գալըստեանն»[4]:

Խոսրով գրչին և Կարապետ քահանային մենք հանդիպում ենք Ղրիմ (Սուրղաթ) քաղաքում, մի քանի անգամ ձեռագիր ընդօրինակելիս և ստանալիս: Իրար հետ միասին հիշվում են Մատենադարանի № 2943 ձեռագրում, որը գրված է «ի մայրաքաղաքիս Խրիմ, ընդ հովանեաւ... սրբոյ Ստեփանոսի Նախավկայի, ձեռամբ անպիտան և յետին գրչի Խոսրովի, ի թուաքերութեանս Հայկազեան տումարիս ութ հարիւր և հինգերորդի (1356) և յամսեանն մայիսի, որ աւր ԻԲ (22) ամսոյն»[5]: Այնուհետև գրիչը հիշում է ստացող Կարապետ քահանային «և զկենակիցն իւր Գոհար տիկինն և զնորաքողբոջ աստուածապարգև... զՀիլայ և զԱստուածատուր, և ծնողսն նոցա զքաղցրիկ հայրն Աստուածատուրն և զգորովագութ մայրն զԱղութն...»[6] ապա՝ նախորդ հիշատակարանում հիշատակված բոլոր անձնավորություններին: Ստացողի և գրչի նույնությունը բերում է այն համոզման, որ № 9786 ձեռագիրը գրվել է Ղրիմ կամ Սուրղաթ քաղաքում, ԺԴ դարի երկրորդ կեսին, 1356 թվականից ոչ-շատ ուշ կամ շուտ: Փորձենք այդ բանում ավելի համոզվել և որոշակի դարձնել գրության թվականը:

Կարապետ քահանային առաջին անգամ հանդիպում ենք հիշյալ՝ Մեկնութիւն կաթողիկէից թղթոց Սարգսի Շնորհալւոյ ձեռագիրն ստանալիս, 1356 թ., իսկ վերջին անգամ՝ 1363 թ., երբ նա ինքն էր գրիչ և ստացող[7]: 1356 թ. ստացած ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ արդեն մահացած էր Կարապետի մայրը՝ Աղութ խաթունը, իր եղբոր, Ավգերի հետ, իսկ Կարապետի քույր Հիլայ խաթունը «վճարեաց զանցաւոր կեանս իւր տղայ հասակաւ ի մին այլ տարւոջն, յորում խորհուրդ արարաք գրելոյ»[8]:

1356 թ. ձեռագրի ավարտման ժամանակ հիշվում է Կարապետ քահանայի աղջիկ Հիլայը, որին հայրը մկրտել էր իր մահացած քրոջ անունով. «աստուածապարգև փոխանորդ շնորհեալ քերն իւր Հիլային, նորին անուամբ Հիլայ»[9]:

Հիլայի հետ հիշվում է նաև Կարապետի մյուս զավակը՝ Աստվածատուրը: 1357 թ. մարտի 20-ին Ստեփաննոս գրիչը Սուրղաթում Կարապետի համար ավարտում է մի ձեռագիր, ուր հիշում է որդիներից միայն Հիլային[10], իսկ մի ուրիշ ձեռագիր է ստանում, դարձյալ նույն թվականին և նույն տեղում, դարձյալ Ստեփաննոս գրչի ընդօրինակությամբ, ուր արդեն հիշվում են նրա երկու զավակները, սակայն Հիլայ և Վարդենի[11] անուններով: Աստվածատուրը չի հիշվում ո՛չ նախորդ, ո՛չ էլ այս հիշատակարանում, իսկ Վարդենի անվանը հանդիպում ենք առաջին անգամ:

Կարապետը 1363 թ., Ղրիմ քաղաքում ավարտած մի ձեռագրում խնդրում է հիշել «զԿարապետ գրիչս և զկենակիցն իմ զԳոհար տիկինն և զաստուածապարգև զաւակսըն՝ մեր՝ զՀիլայն և զԱստուածատուրն՝ զհանգուցեալսն առ Քրիստոս, և զոր դարձեալ պարգևեաց մեզ տէր զաւակք միխիթարութեան նովին անուամբն Հիլայն և Վարդենին...»[12]: Ինչպես տեսնում ենք, Կարապետի

---

[3] ա Բիբլիոգրաֆիկ ցուցակ (անտիպ), Մեկնութիւնք և լուծմունք, էջ 66, բ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965 թ., սյունակ 1088, № 9786:

[4] Մատենադարան, ձ. № 9786, էջ 195ա:

[5] Մատենադարան, ձ. № 2948, էջ 552բ: Մինչ այդ Խոսրով գրիչը դարձյալ «ի հռչակաւոր քաղաքս Սուրխաթ... առ ոտս սուրբ Ստեփանոսի... ի թուականիս հայոց ՊԵ (1356) յունվարի ԻԲ (22)» ավարտում է մի Ճաշոց (Մատենադարան, ձ. № 6273, էջ 154): Ինչպես տեսնում ենք, գրիչը մոտավորապես չորս ամսում ավարտել է 554 թերթանոց, 33×22 սմ մեծությամբ ձեռագիրը:

[6] Մատենադարան, ձ. № 2948, էջ 553ա:

[7] Մատենադարան, ձ. № 2611, էջ 192բ:

[8] Մատենադարան, ձ. № 2948, էջ 553ա:

[9] Մատենադարան, ձ. № 2943, էջ 553ա:

[10] Մատենադարան, ձ. № 3405, էջ 372բ:

[11] Մատենադարան, ձ. № 2371, էջ 292բ:

[12] Մատենադարան, ձ. № 2611, էջ 192բ:

Հիլալ և Աստվածատուր զավակները մահացել էին 1357 թվականից առաջ: Համենայն դեպս, այդ թվականի մարտի 20-ին Կարապետ քահանա և Գոհարտիկին ամուսինների այդ որդիները այլևս չկային, և նրանք նոր դուստր ունեին, դարձյալ Հիլալ անվամբ: Այդ նույն 1357 թվականին նրանք ունենում են նաև Վարդենուն և տարվա վերջերին ստացած մյուս ձեռագրում Կարապետ քահանայի երկու նոր զավակները՝ Հիլալն ու Վարդենին հիշվում են արդեն միասին: 1357 թվականից առաջ մահացած Աստվածատուր և Հիլալ զավակների փոխարեն, ինչպես նշում է Կարապետ քահանան, 1357 թ. «պարգևեաց մեզ տէր զաւակք մխիթարութեան նոյին անուամբն Հիլալն ու Վարդենին»: Բայց Աստվածատուրն ու Հիլալը հիշվում էին 1356 թ. մայիսի 22-ին ավարտված ձեռագրում: Նրանք հիշվում են նաև Մատենադարանի մեզ հետաքրքրող № 3796 ձեռագրում: 397-րդ թերթից, սակայն, իմանում ենք, որ Կարապետ քահանայի և Գոհարտիկնոջ Հիլալ և Աստվածատուր զավակները վախճանվել են: 420 էջում կարդում ենք, որ այդ երեխաները «յայսմ ամի հանգեան առ աստուած»: Այսպիսով, ձեռագրի ստացող Կարապետի Հիլալ ու Աստվածատուր զավակները մահացել են Սուրխաթում Խոսրով գրչի՝ Սաղմոսաց մեկնության ընդօրինակման ժամանակ, 1356 թ. մայիսից հետո, մինչև 1357 թվականը ընկած ժամանակահատվածում, երբ նրանք այլևս չեն հիշվում:

Հետևաբար Մատենադարանի № 3796 ձեռագիրը—Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, Ներսիսի Լամբրոնացւոյ, գրվել է 1356 թվին, Ղրիմի Սուրղաթ քաղաքում (որը կոչվում էր նաև Ղրիմ), գրիչը՝ Խոսրով երեցն է, ստացողը՝ Կարապետ քահանան:

1356 թ. մայիսի 22-ին ավարտած ձեռագրում հիշելով Կարապետի քրոջ՝ Հիլալի մահը, Խոսրով երեցը գրում է, որ մահացավ «ի մին այլ տարւոջն, յորում խորհուրդ արարաք գրելոյ», ապա հիշելով Կարապետի մորն ու կնոջը, երախտագիտությամբ գրում է. «զի ամենևին ոչ բաժանէին զիս եղբարց իւրեանց և զաւակաց, այլ ևս առաւել քան զնոսա ընդունէին զիս հոգևորական սիրով, զոր ոչ էի արժանի»: Ուրեմն «խորհուրդի» մեջ է մտել նաև այն, որ գրիչը պետք է ընդօրինակի նրանց հարկի տակ, ինչպես արվում էր սովորաբար մեծ գործ ընդօրինակելիս: Այս է վկայում նաև գրչի տեղի աղմուկից դժգոհելը «...տեղիս՝ երթևեկ բազմաց»: Խոսրով գրիչը մոտավորապես մի ամբողջ տարի, 1356 թ. փետրվարից մինչև տարվա վերջ, Կարապետ քահանայի համար ընդօրինակել է երկու ստվար ձեռագիր, ա. Մեկնութիւն կաթողիկէից թղթոց Սարգսի Շնորհալւոյ, 554 թերթ, և բ. Մեկնութիւն սաղմոսաց Դաւթի Ներսիսի Լամբրոնացւոյ՝ 655 թերթ: Հաջորդ՝ 1357 թ. մի այլ գրիչ, Ստեփանոսը, Կարապետի համար, դարձյալ Սուրղաթում ընդօրինակել է երկու ձեռագիր. ա. Մեկնութիւն աւետարանին Ղուկասու յԻգնատիոսէ, (ավարտում է մարտի 20-ին) և բ. Քերականութիւն Վարդանայ Կիլիկեցւոյ, խրատք Գէորգեայ և Առիստակիսի: Սրանցից բացի, հավանաբար 1357 թ., Մինաս կրոնավորի պատկանող մի ժողովածուի մեջ[13] Սրբոց հրեշտակապետաց ճառն է արտագրել տվել:

1363 թ. օգոստոսին Կարապետ քահանան ինքն ընդօրինակում է Մեկնութիւն աւետարանին Յովաննու Նանայի վարդապետի:

Հիշյալ բոլոր ձեռագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում 2943, 3796, 2371, 3405 և 2611 համարների տակ:

---

[13] Յ. Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962 թ., էջ 424:

